



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2590

24584

24585

84
\$-41

Օ. ՖՀՈՒ - Վայսչ Երի և անողի Տէ ԱՅՆ - Պ. Խելքան
Վ. Լամպրին - Յանկի ԵԼԼԱ - Ա. Յ. Ե
Վ. ԲՐԻԴՈ - Խաչօք Ելիօ - ԳՐ. ԶԻԼԻՑՅԱՆԻՑ

84-3

L-16

7

ԱԼՖԵՅՍ ՏԵ ՂԱՄՍՐԹԻՆ

ԿՐԱՅԻՔԵԼԼԱ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Պ. Կ. Է.

1000
1000
1000
1000
1000



ՏԵՐ ԵՒ ՀԵՎԱԾՈՒԿԻՉ

ԺՐԴԱՆ ԶԱՐՈՒԹԵՐՆ ԵԼԵՇԱՆ

ԶՄԻՌՆԵՑ

ՏՊԱԳ-ՐՈՒԹԻՆ ՏԵՏԵՆՆ

— 1872 —

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽԱՀԱՎԱՐ

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Գ. Ժ. Ա.

ՀԱՅՈՒԹԻՒՆ 40 Դ.Բ.

ԾԱՌԱՋԸ ԾԱՅՐԱՋԸ ԾԱՐԱՋԸ

ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

— 2781 —

Ա. Ա.

ՄԵԾԱՇՈՒՔ ՅԱԿՈԲ ԷՖԵՆՏԻ
ՍՊԱՐԹԱԼԵԱՆ

Ի ՀՃԱՆ

*Խորին Յարգանաց***ՆՈՒԻՐԵ**

Ա. Կ. Է.

Կ Պ Ա Յ Ց Ի Ե Լ Լ Ա

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Ե

Ա

Տան և ութ տարեկան էի, երբ ընտանիքս ազգական կնոջ մը խնամոց յանձնեց զիս, որ իր դործերուն համար Թօսպանա կ'երթար ամուսնոյն ընկերացած։ Ասիկա պատեհ առիթ մ'է ը ինձ Տամրդորդելով հայրենի տան և քաղաքներու վտանգաւոր դաւարկութենէ ազատելու, ուր հոգւոյն առաջին կիրքերը անդուժ ծովենէ կ'խանգարին։ Գայի տղու մը այն զմայլումով որ բնութեան և կենաց ամենէ շքեղ տեսարաններու վարապոյրին առաջին անգամ բացուիլը կ'առնէ։

Ալսիոն լեռները՝ որ մանկութենէս ՚ի վեր Միլի ըլլուն բարձոնքէն հեռուանց կ'աեմնէի հորիզոնին ծայրը յաւիտենական ձիւներով կ'փայլէին. ծովը՝ զոր Տամրդորդները և բանաստեղծաները այնչափ ոպցառ նկարադրելով յաւերժական յիշատակներ թողած էին մաքիս մէջ. իտալական երկինքը՝ որուն չերմութիւնը և պարզութիւնը շնչած էի Աէօմէի տողերուն և Քօրինի է ջնուն մէջ.

Կ'ճանչնան արդեօք այն երկլիլք ուր մրանենիք կ'ծաղկին։ Հոռվլմայեցոց հնութեան զեռ կանդուն յիշատակարանները պար իմ թարմ ուսմանքս ամփոփած էին մտացս մէջ. վերջաւ ովէս աղասութիւնը, հեռաւորութիւնը որ ապառնոյն քող մը կը ձգէ. արկածք՝ որ երկար Տամրդորդնեանց մէջ ստոյդ գէսկէր

թն, զորս ողջամբու երևակայութիւնը կ'ախատենէ ուզածին պէտքարելով վայելելու համար. լեզուի, կերպարանաց և սովորութեանց փոփոխութիւնը՝ որուն կարծես խելքը նոր աշխարհ մը կ'կցորդէ, այս ամէնը կ'յափշտակէին միտքս: Ճարունակ արքանու վիճակի մէջ ապրեցայ երթէս առաջ սպասած երկար օրերու մէջ: Այս յափշտակուած կացութիւնս բնութեան սպանչելիքներէն ամէն օր նորոգուած Սավուայի և Զվլիցերիայի մէջ, Շենովայի ընին, Աէմրլօնի սառնամանեաց և Քօմա ընին վրայ, Միլանի և Ֆիորէնցայի մէջ, միայն վերապարձիս ժամանակ անցաւ:

Այն զործերը՝ որ ճամբորդութեան ընկերուհիս հարկադրած
էին Նիվուբանա երթալու անորոշապէ ո երկարելուն, ուղեցին զիս
Գաղղիա վերադարձնել առանց Հոռովը և Կարօլի տեսնելու։ Առ
սով երազս պիտի ոչնչանար Հիշտ այն վայրիկենին որ պիտի զոր-
ծագրուէր։ Այսօրինակ խորհրդի մը դէմ յուղուեցայ իրովլի և
դրեցի հօրս հրաման խնդրելով Խտալիոյ մէջ առանձին ճամ-
բորդութիւնս շարունակելու։ Առանց պատասխանի սպասելու, զոր-
ամբնեւին նպաստաւոր չէի կարծէր, որոշեցի որդովէ անհնապահ-
թեան առաջը երթալ։ «Եթէ պատուէրը դայ, կըսէի ինքնիրեն,
շատ ուշ պիտի ըլլայ։ Պիտի յանկիմանուիմ անստարակցս, բայց
ովհանի ներուիմ։ պիտի վերադառնամ բայց տեսած պիտի ըլլ-
ալմ»։ Ստակս քննեցի որ խիստ նուազ էր, բայց մտածեցի որ
Կարօլիոյ մէջ մօրս մէկ ազգականը տնկի որ վերադարձիս քիչ
մը սատկ պիտի չ'զւանար ինձ անշոշա։ Քեղեցիկ դիշեր մը Ալ-
վուրնայէն մեկնեցայ Հոռովը թղթապարով։

Զմեսը հան անցուցի, Սպանիոյ հրապարակը եղերող մութ
փողոցին մէջ, Հռովմայեցի նկարչի մը տունը որ թոշակաւ իր
ընտանիքաց մէջ առա զիս : Կիրապարանքս, Երիտասարդութիւնս,
աշխայժմ, անծանօթ քաղքի մէջ առանձնութիւնս, շարժեր էին
ճամբրութեանս ընկերներէ մին Փիօրէնցայէ Հռովմի ճամբրուն
վրայ և յանկարծ բարեկամութեամբ կապուեր էր հետո : Գրեթէ,
իւր տարիիքովս զեղեցիկ Երիտասարդ մէջ որ Դաւիթ հռչակաւոր
երդիչին Խտալացոց թատրոններու այն ատենուան առաջին Շե-
նօքին զաւակը կամ Եղբօրդղին կ'երևէր :

Գառիթ ալ մեզի հետ կ'ձամբորդէք : Ասիկա արդէն տարիթը
տուած մարդ մ'էք որ Կաբուլոյ Սէն-Շարլ թատրոնին վրայ վեր-
ջն անգամ երգելու կ'երթար : Դասիթ հօր պէս կ'վարուեք հետո,
նոյնպէս իր երիտասարդ Ընկերը պատուալ և բարիթով կ'լե-
ցըներ վիս . ես ալ բնական անտարբերութեամբ և պարզմտու-
թեամբ կ'պատասխանէի այս մեծարանաց : Դեռ Հռովմ չհասած
դեղեցիկ ճարրորդը և ես արգէն անբաժանելի էինք : Այն ատենա-
ները թղթատարը երեք օրէն առաջ Ֆիօրենցայէ Հռովմ չք հաս-
ներ : Պանդոկներու մէջ նոր բարեկամն թարգմանս էք , սեղանին
վրայ առաջ ինձի կ'ծառայէք , կտոքին մէջ իր քովը ամենէ ըն-
տիր տեղը ինձի կ'պահէք , և երբ նուշէի վստահ էի որ իր ուսը
դլախիս բարձ պիտի ըլլար : Երբ Թօնքանայի և Սապինի թլութնե-
րէն անցած ժամանակնիս կտոքէն իշնէի , ան ալ հետ կ'իշ-
նէք , կ'բացարքէք երկիրը , քաղաքներու անունները կ'իմացնէք ,
յիշատակաբանները կ'ցոյցնէք , մինչև անզամ Ճամբուն վրայ զետ-
պեցիկ ծաղկիներ կ'ծողվէք և աղջ կ թուզէք ու խաղողներ ծախտ-
կ'առնէք : Ենոքելու և փեղոյրս այս պատղներով կ'լեցուէին : Գա-
ւիթ ուրասի կ'երեւէք իր Ճամբորդութեան ընկերին օտար երիտա-
սարին վրայ առնեցած սէրը տեմնելով : Երբեմն իմացութեան ,
նրբութեան և բարեկամութեան դէմքով մը զիս գիտելով կ'քմծի-
ծաղէին :

Հառովմ՝ զիշերը համնելով բնականաբար անհնայ հետ նոյն պահու դոկին մէջ ի ծեանեցայ : Աննեակս առաջնորդեցին և բարեկամիս ձայնեն արթմնցայ որ գուռս կ'զարնէր և նախաձաշլ կ'հրաւիրէր զիս : Ծառաբար հագուելով սեղանատուն իջայ ուր բոլոր ձամբարդները ժողվուած էին : Ա'ու զի ի ընկերիս ձեռքը սեղմալ, և երբ ի զուր սեղանակիցներուս մէջ կ'փնտուի դայն, ընդհանուր ծիս ծալ մը բոլոր երեսներու վրայ երեցաւ : Դաւթի որդուոյ կամ եղբօրորդուոյ տեղ, վայելչապէս հագուած Հոռովմայեցի մանկամարտ աղջկան մը հրապորիչ երեսը տեսայ իր քով, որուն սև վարսերը ծակտին բոլորը հիւսուելով զլիսուն ետին կցուած էին մարզաբանակունգ երկու ոսկիին ասեղներով, ինչպէս որ մինչև հիմա թիվոլիի դիւզացիները կ'ընեն : Ասիկա բարեկամիս եր որ

Հոռվլմ հասնելով իր հագուստը և սեռը առած էր ։ Պէտք է իր նայուածքի փափկութեն և քիջիծաղի շնորհքն տարակուասիլ, բայց ամենեին կասկած մը ունեցած չէ ։ Հազուսուր սիրալը չփոխէր, բայց գեղանի հոռվլմայեցին կարիքելով, միայն թե հիմա ալ ուսխու վրայ սիխտի շնորհք և փոխանակ ինձնէ ծաղիկը բնդունելու դոք պիխտի տաք ինձ ։ Այս դիպուածք պիխտի սորվեցնէ ձեզի բարեկամութեան երեսյթներու միշտ չհաւսալ, որովհետեւ կրնան երբեմն ուրիշ բան ըլլապ ։

Մանկամարդ աղջիկը երգուի մ'էր, Դաւթի աշակերտը և սիրելին ։ Ծերունի երդիչը ամէն տեղ իր հետ կ'ատանէց զայն և ճամփուն վրայ բացառութիւններէ խոյս տալու համար մարդու զգեստ կ'հազցնէր, Աւելի հօր քան պաշտպանի պէս կ'վարուէր հետու, և ամենեին մեր քաղցր և անմեղ մտերժութեանց վրայ չէր նախանձէր ։

Դասիթ և իր աշակերտը քանի մը շարաթ հոռվլմ անցուցին ։ Համենելնուու հետեւեալ օրը իր այրական զիեստը վերատին հաղութիւնու առաջնորդեց գիտ նախ դէտ ՚ի Սուրբ-Պետրոս, վերջը Քոլիպէն, Գրասպաթին, Թիվոլին և Ալորուսն, այսպէս ազատեցայ ժուռածող ներու ճանձրալի խոսուածքներէն, որոնք ճամբարդներու առջև Հոռվլմայ զիսկը կտոր կտոր կ'ընեն, և յատուկ անոններու և թուականներու միամայն երկարութիւնու պերը միտքը կ'պատեն, այնպէս որ զեղեցիկն ազգեցտ թենէն զարտուիլ կուտան ։

Քամիլեամ զիստոն չէր, բայց Հոռվլմ ծնածք բնազդումով կը ճանչնար այն զեղեցիկ վայրերը և մեծ տեսարանները որ մանկուաթեան մէջ աղդած էին իրեն ։

Առանց վարանելու ամենազեղեցիկ տեղերը առաջնորդեց ինձ պատեհ ժամերու մէջ հին հոռվլմայ մասգարդները զիսկը լու համար ։

առուստու կատլնիներու տակ, Մօնթէ-Բինչիօի լոյն կոմարներուն ներքեւ, իրիկուն Սուրբ-Պետրոսի սիմեոնուն մեծ ստուերին տակ, լուսնի լուսով Քօլիպէի համբ շրջապատին մէջ, աճան կեղծիկ օրերը Ալպանոն, Գրասպաթին և Սիափլի տաճարը՝ որ Թիվոլիի ջրիէ մներու շողիէն պատած են ։ Աւրախ և ծաղրածու էր նա նունն մշտնջնեաւոր Երիտասարդութեան արձանին ժամանակի և մահուսն հետքերու մէջ ։ Զէչիլիս Մէթէլլայի վերեզմանին վրայ կ'սպարէր, և մինչդեռ ես քարի մը վրայ նստած կ'երազէի՝ ան իր թատերական ճայնին զոչիւններով Տիօքլէսիէնի սպալատին տիսուր կամարները կ'հնչեցներ ։

Կառքը լեցուն ծաղիկներով և արձաններու բեկորներով իրի կունը քաղաք կ'գառնայինք ծերունի Դաւթիթը զանելու որ իր գործերու համար Հոռվլմ կ'մնար, և օրերնիս կ'լրանար թատրոն երեթալով ։ Երգուհին քանի մը տարի իզմէ մեծ, փափուկ բարեկամութեան զդացումներէ զատ բան չէր յայտներ, չէր զգար իսկ, թէ և ես երիտասարդ և մա ալ զեղեցիկ էր ։ Իր մարդու հաղուստը, արական ընտանութիւնը գննիրալի ճայնին հնչիւնը, և իր ճեկրու ազատութիւնը այնպիսի ազգեցտ թիւն կ'ընէին ինձ՝ որ լոկ իրը դեղեցիկ մարդ մը և բնկեր մը և բարեկամ մը կ'նկատէի զայն ։

Երբ Քամիլեամ կնաց, Հոռվլմայ մէջ առանձին մնացի, միայն իր ցուցած վայրերը, յիշատակարանները և տերակները ծանօթ թողլով ինձ ։ Ծեր նկարիչը որուն տան մէջ կ'ընակէի, միայն կիրակի օրեր պատարադ տեսնելու զործարանէն կ'ելլը իր կոտը և աղջկան հետ որ տան վեց տարեկան առոյդ աղջիկ մ'էր հօրը պէս աշխատամէր ։ Ծուներնին մեռակ մը վանք էր՝ ուր արհետաւորին զործը պարկեցած հաշով և աղօթքով միայն կ'ընդմիջու երիկունը՝ երբ արևան վերջին ճաւադայիթները խեղճ նկարչին

սենեկին պատուհաններու վրայէ կ'անհետէին, և երբ շրջակայ վանքերու զանդակները « Ավէ Մարիա » կ'հնչէին, Խտալիոյ մէջ օրուան այն դաշնակաւոր մնաս բարովը ձայն կուտար այս ընտառնիքն միակ սփոփումը սկսելու որ միասեղ աղօթել և մեղմիկ մաղթանաց երգերը սաղմոնել էր, մինչեւ որ քունէն ձնչուած ձայները, անորոշ և միաձայն մրմունջներու մէջ մարդին, նման ծովու այն ալիքին որ կ'հանդարտի եղերքը ուր հովը զիշերուան հետ կ'մեղմի :

Երեկոյեան այս խաղաղ և բարեպաշտ տեսարանը կ'սիրէի, որ աշխատութեան օր մը երեք հոգիներու աղօթքով կ'ըննար և ուրոնք երկնից մէջ կ'օթևանէին ցերեկուան աշխատանքէն հանդշելու համար : Ասիկա կ'յիշեցնէր ինձ հայրենի տանս յիշատակը ուր վերջալուսին մայրս իր բոլորակքը կ'ժողվէր մեղմ աղօթելու համար, մերթ իր սենեկին և մերթ Միլիի փոքրիկ պարտէվին աւագուտ անցքերուն մէջ :

Անծանօթի տան մը մէջ նոյն սովորութիւնները, նոյն գործեարը և նոյն կրօնքը զանելով, զրեթէ հայրենի յարկին տակ կը կարծէի ինքնինքս : Երբէք Հոռովմայեցի նկարչին կենցաղալվարուաթենէ աելի անակեաց, աելի գործունեաց և սրբազն կենցաղալվարութիւն մը տեսած չեմ :

Նկարիչը եղբայր մի ունէր որ իր հետ չէր բնակէր : Խտալեարէն կ'առվլեցնէր այն երևելի օտարականներուն որ ձմեռը Հոռովմայնինքն էն : Ասիկա միայն լեզուաց զասատու չէր այլ առաջնին կարդի Հոռովմայեցի զիտնական մը : Դեռ երխասարդ, սրանշելի դէմքով, վաղեմի բնութեամբ, փառաւորապէս երկեցած էր յեղանքութիւնը այն փորձերու մէջ որ Հոռովմայեցի հանրապետացփոխութիւնուն այն իրենց երկրին մէջ աղատութիւնը յարուցանելու համար : Ժողովրդեան դատաւորներէ մին էր, զրեթէ այն ատենուան բիանցին : Գաղղիացոյմէ դրգուտած, և Մաքէ ու Սաքոլիցներէ խելդուած, այս կարճատե ապստամբութեան մէջ առաջն դերերէ մին խաղացած էր : Քարիթոլի մէջ ժողովուրդը համողելով անկախութեան դրօշակը կանգներ, և հանրապետութեան աւաջին պաշտօններէ մին վարեր էր : Խակայն դիմադրու-

թեան ժամանակ հալածուած և բանտարկութիւնը գաղղիացոյ հոն հասնելով զտեր էր, որոնք հանրապետական սերը աղատեր բայց հանրապետութիւնը զրաւեր էին :

Այս ձռովմայեցին աղատ և հայրենական Գաղղիան կ'պաշտէր Տիրապետութիւնը կ'ատէր և ես դեռ երիտասարդ նոյն զայցում ները ունէի : Մեր մէջ զաղափարներու այս նմանութիւնը երևելու շատ չուշացաւ : Տեսնելով թէ ինչ մանկային և միանդամայն վաղեմի աշխուժով կ'եռայի աղատութեան ձայներէ երբ միասելով կ'կարգայինք Մօնթի բանաստեղծին բոցավառ տողերը, և Աւ Փիէրի հանրապետական տեսարանները հասկաւ որ կրնար ինչ ծի բացուիլ, և այսպէս աւելի իր բարեկամը քան թէ աշակերտը եղայ :



Աղատութիւնը մարդուս նորիրական կարծիքը ըլլալուն ապացոյցը այն է որ երիտասարդութեան առաջին երազն է, և մեր հոգւոյն մէջ չ'մարիր մինչեւ որ սիրու չ'ծերանայ և միտքը չ'վհաաաի : Զկայ քան տարեկան ողի մը որ հանրապետական ըլլայ չ'կայ նաև մաշած սիրտ մը որ զերի չ'ըլլայ :

Քանի քանի մազամ Վելլա Բանֆիլի բլրան վրայ զացինք ուրիշ կ'սեսնուի Հոռովմէ, իր զմբէ թները, աերակները, Թիպը որ աղտոտ, լոիկ և ամօթով կ'սողայ Քօնթէ Քօթօի կամարներու տակէ և ուրիշ կ'լսուի աղբիւրներուն հեծող մրմունջը և ժողովրդիւնը գրեթէ յամբ ստնաձայնները որ այն անապատ փողոցներու մէջ ըլութեամբ կ'անհետին : Քանի քանի մազամ զատն արցունքներ թափեցինք, ամէն տեսակ բռնաւորութեանց զոհուած այս աշխարհիս վիճակին վրայ, ուր փիլիսոփայութիւնը և աղատութիւնը վայրկեան մը Գաղղիոյ և Խտալիոյ մէջ վերածներ էին միայն ապականուելու, մասնուելու և արհամարհաւելու համար :

b

Այս կարծիքներու ազդեցութեան ներքեւ չառվմ, իր պատմութիւնը և յիշատակարանները սերաեցի: Առառու կանուխ սուանաձին կ'ելլէի, դիտողին միտքը ցրուու քաղաքին շարժումը գեռ չ'սկսած, և թեփս տալ Հռովմայ պատմադիթները, բանաստեղծները և նկարադրուները առնելով, կ'նսահի կամ կ'թափառէի քօրոմի, Քօլիդէի անապատ աւերախներու վրայ: Մերթ կ'զիտէի, մերթ կ'կարգայի կամ կ'մտածէի: Այսպէս Հռովմայ վրայ սերա ուսութեանը կ'ընէի: Ասիկա պատմութեան լաւագոյն դասս եղաւ: Հնութիւնը՝ ձանձրութիւն մը ըլլալու տեղ, զգացմանք եղաւ ինձ համար: Այս տաման մէջ հակումն զատ յատակադի չէի հետեւ: Կ'երթայի ուր որ քայլերս կ'տանէին զիս: Ճին Հռովմէն նոր Հռովմ կ'անցնէի, Բանմէօնէն Լէնն Թի սպալատը, Ավրամիսի բնակարանէ Թիպիւրի և Բաֆաէլի տունը: Բանստեղծք, նկարիչք, պատմադիքը, երեւելի մարդիկ, ամէնքը խառն առջնէս կ'անցնէին. վայրիեան մը առելի կ'գիտէի զամանք՝ որ այն օրը առելի կ'հանէի:

Ժամը տասն մէկին, նախաճաշի համար նկարչին տան արդարի խցիկը կ'մտնէի: Աշխատութեան սեղմանս վրայ կարգալով կտոր մը հաց և սրանիր կ'ուտէի: դառամք մը կաթ կ'խմէի և մինչև ճաշի ժամը զոր տառուտէրս կինը և աղջիկը կ'պատրաստէին, կ'աշխատէի, կ'նշանակէի և կ'զրէի: Աերակութէն ետքը, զարաձեւն առելի վերթայի և դիշերը միայն կ'դառնայի: Քանի մը ժամը նկարչին ընտանեաց հետ խօսալցութիւն և զիշերային երկար ընթերցանութիւններ վերջ կրամային սցս խաղաղ օրերու: Ընկերութեանց պէտքը երբէք չէի զար, կընամ ըսել որ առանձ նութենէս կ'ախտօնէի: Հռովմ և հօգիս կ'բաւէին ինձ: Այսպէս երկար ձմեռ մանցուցի հոկտեմբերէ մինչև հետեւալ ապրիլ, օր մը յոդութիւն և ձանձրոյթ չ'զդալով: Այս յիշատակներու տպաւորութեան ներքեւ տաս տարի վերջը Թիպիւրի վրայ զրեցի:

g

Հիմա երբ մտքիս մէջ Հռովմայ բոլոր ազդեցութիւնները փրնա տուեմ, միայն երկու բան կ'զանեմ որ բոլոր միւսերը կ'անհետացնեն կամ անոնց կ'իշխն: Քօլիդէն Հռովմայեցի ժաղովարդին երկելի գործը. Սուրբ-Պետրոս կրթուլիկութեան: Քօլիդէն զերամարդկային ժողովուրի մը հսկայական հետքն է, որ իր հպարատութեան և զազանական զրօսանաց համար, ամբողջ աղդ մը սպարունակող շէնքեր կ'ընէր և սրոնք իրենց մեծութեամբ և ուսուղութեամբ ընտութեան գործերու անզամ կ'հաւասարէին: Թիսկա ընըն իր աղմուտ եղերբին մէջ պատի ըորնայ մինչզեր. Քօլիդէն սիրտի տիրէ զեռ անոր վրայ:

Սուրբ-Պետրոս մէկ ժամանակի յատուկ, մէկ մասածմունքի, մէկ կրօնքի և այլողջ մարդկութեան զործն է աշխարհի մէջ: Ասիկա մուլի ժողովարդ պարունակող շէնք մը չէ, այլ միայն մարդկային բռուր փիլիսոփայութիւնը, աղօթքները, մեծութիւնը և միտքը սպարունակելու: Համար սակեղծուած տաճար մը: Կարծես թէ պատերը կ'բարձրանան և կ'մեծնան չէ մէտ ժողովուրդի մը համեմատութեամբ այլ Աստուծոյ: Պատականութիւնը միայն Միքել-Անժ հատկան և Սուրբ-Պետրոսուն անոր սամնէ վսեմ և ամենէ կատարեալ միկութիւնը տուառ: Սուրբ-Պետրոս ստուգին, Քրիստոնի կրօնից քարերէ բաղադրուած տասուածայութիւնն է: Կողմական եկեղեցիներու Տարատարապետները վսեմ բարբարոս ներ էին: Միքել-Անժ միայն իր ըմբռնումին մէջ փիլիսոփայ եղաւ: Սուրբ-Պետրոս փիլիսոփայական քրիստոնէութիւն է ուր կէ չնաշխարհիկ Ճարտարապետը, խառարը կ'վանէ, և ընդարձակութիւն, զեղեցիութիւն, չտփակցութիւն, անոպաւելի լցոյ կ'մոցընէ: Հռովմայ Սուրբ-Պետրոսի անքաղդատելի զեղեցիութիւնը այն է որ միայն զԱստուած իր բոլոր սքանչելիքով ներկայացնելու համար սակեղծուած տաճար մէ:

Եթէ քրիստոնէութիւնը կորուսի լոկ, Սուրբ-Պետրոս իրը

արիեղերական, մշտնջենաւոր և խորհրդաւոր տաճար պիտի կանգանի դեռ և պիտի յարմարի որ և է կրօնքի որ Քրիստոսի դաւանումին պիտի յաջորդէ, միայն թէ այն կրօնքը մարդկութեան և Աստուծոյ արձանի ըլլայ:

Ասիկա՝ սրբազն դաղափարի ներշնչուած մարդկային համաշըն երկրիս վրայ շնասած ամենէ վերացեալ տաճարն է: Երբ մըտեանս, չես դիմեր թէ հին թէ արդի տաճար մ'է ան, չկայ բան մը որ աչքդ խտաղէ, չկայ նշան մը որ միաքդ յոդնեցնէ: Աւ մէն դաւանութեան մարդիկ կ'մտնեն հոն նոյն ակնածութեամբ: Կ'զաս որ միայն Աստուծոյ դաղափարը բնակու տաճար մը կըրանայ ըլլալ և որ և իցէ ուրիշ դաղափար պիտի չ'պարունակէ:

Փոխէ երէցը, հանէ խորանը, իջեցնւը պատկերները, վերցնւը արձանները, ոչ ինչ փոխուած է, միշտ Աստուծոյ տունն է ան, կամ Սուրբ-Պետրոս ինքնին՝ այն յաւիտենական քրիստոնէութեան մեծ նշանակն է որ իր բարոյականին և սրբութեան մէջ ամեն դարերու և ամեն մարդկանց կրօնական խորհուրդին շարունակելի լուծումները հիմն ունենալով, մորին մէջ կ'մեկուի որչափ որ Աստուծ լուսաւորէ զայն, լուսոյ մէջ Աստուծոյ հետ կ'հաղորդակցի, մարդկային խելքին համեմատութեամբ կ'ընդլայնի կ'բարձրանայ, անընդհատ մեծնալով, և բոլոր ազգերը նոյն երկրագալութեան մէջ հաւաքելով, բոլոր աստուածային ձեւերով մէկ Աստուծ կ'ընէ, բոլոր օրինօք մէկ դաւանութիւն և բոլոր ժառըլուրդներով մէկ մարդկութիւն:

Միքէլ-Անժ իրական կաթոլիկութեան Սովուէն է ինչպէս որ ժամանակին պիտի յայտնուի: Ապագային անկորուստ տապանը և աստուածային հանձարին բանթէօնը ըրաւ:

Ե

Աերջապէս չոռվմ բաւական տեսնելով ուզեցի հարովի երաթալ: Աւելի Աերջիլիսուի գերեզմանը և Թասօի որրանը զիս

դիմած էին: Միշտ իրը անձինք նկատած եմ քաղաքները, Նաս բօլի, Աերջիլիսու և Թասօ է: Կ'թուէր ինձ որ երէկ ասլրած էին անոնք և թէ իրենց մոխիրը դեռ զաղջ էր: Դեռ հոն չ'հասած անոնց զեղեցիկ և փափուկ հանձարին մէջէն Բողիլիրին Սորանագը, Աէսուֆն ու ծովը կ'տեսնէի:

Մարտին վերջները չոռվմէն մէկնեցայ թղթատարի կառքով Գաղղիացի վաճառականի մը հետ որ ընկեր փնտոեց Ճամբոր դութեան ծալիքը թեթևունելու համար: Ավլէթը քիչ մը հեռու Ճամբորն վրայ չոռվմէն Կարօլի զայող: Թղթատարին տասպալած և կ'սդակներէ զարնուած կատքին հանդիպեցանք: Թղթատարը, կառապան մը և երկու ձի մեռած ըլլալով մօտակայ խըրաքիթ մը տարած էին զանանք: Պատուուած թուղթեր և նամակի կտորներ հովուն մէջ կ'թուէին: Աւազակները, Վարիւղներու Ճամբան փախեր էին և թերապէնի զնկէն Գաղղիացի հեծելազօրաց և հետեւակաց խումբեր ժայռերու մէջէ կ'հալածէին զանոնք: Հըրացաններու զտումը կ'լսուէր: բոլոր լերան վրայ փոքրիկ կայծեր և հըրացաններ կ'անունուէին: Նըրեմն երբեմն Ճամբան պահպանող Գաղղիացի և Կարօլիացի զուղերու կ'հանդպէնք: Այսպէս կ'մտնէին Կարօլիոյ թագաւորութեան մէջ այն առեն: Այսպէս կ'մտնէին Կարօլիոյ թագաւորութեան մէջ այն առեն:

Այս աւազակութիւնը, քաղաքական նպատակ մի ունէր: Սուրատ կ'ամիրէր, բայց Քալապլացիկ զեռ կ'գիմաղթէին, Գէրտիս նանսոս թագաւորը Սիկիլիա քաշուած, լեռներու մէջի աւազակապեաններու կ'օգնէր: Հոչակաւոր Գրա-Տիալօլօն անոնց զլուխը անցած կ'կուռէր: մարդկասպանութիւնը յաղթութիւն կ'նշանակէր: Խոկ մնաք Կարօլիոյ շրջականները միայն հանդարատութիւն և ապահովութիւն զատնք:

Վարիւլ մէկին հոն հասայ: Քանի մը օր ետքը իմ տարիքովս երիտասարդի մը հանդիպեցայ որու հետ գալրոցին մէջ եղայշ բական մտերմութեամբ կապուած էի: Անոնը Այմօն ար Աիրիէօ էր: իր և իմ կեանքը ծնունդէ մինչև մահ այնչափ մի և նոյն դէպքերու ենթարկուած են որ անոր վրայ խօսեցած կ'ըլլամ: գրեթէ ամեն տեղ որ իմ վրայ կ'խօսիմ:

Միջնադարյան Արքական պատմութեան

Ա

Հռովմ ծեր նկարչին տան մէջ վարած կեանքիս զբեթէ նոյնը նարօլիոյ մէջ կ'անցընէի, միայն թէ հնութեան աւերակներու մէջ թափառելու տեղ, Նարօլիոյ նեղոցին կամ ծովեղերբին վրայ կ'անցընէի օրերս: Խրիկուն հին վանքը կ'ուղարի ուր՝ ՚ի շնորհս մօրս ազգականին հնորդնալութեան, տանիքին վրայ փոքրիկ սենեակ մը կ'ընակէի և որուն պատշտամը ծաղիկի անհններով և մաղլցիկ սունկերով զարգարուած ծովու, Վէսուֆի, Քամթէլ մարի և Սօրբանթի վրայ կ'բացուէր:

Երբ առտուան հօրիզոնը յատակ ըլլար, Թատօի ձերմակ տունը կ'տեսնէի որ կարասպի բցին նման, ծովուն ալիքներէ սրաց եալ գեղին ժայռի մը վրայ կախուած էր: Այս տան լոյսը հոգւոյս խորը կ'ազգէր, և փառաց փայլակի նման հեռուեն երիտասարդութեանս վրայ լոյս կ'տիւէր: Կ'յիշէի այս երևելի մարդուն այն հոմերական տեսարանը, երբ, բանակն ելած, փաքրեցու նախանձէ և մեծերու զրուարատութենէ հալածուած, մինչ իր միակ հարստութեան, իր համեմարին մէջ այլամսուած, Սօրբանթ կուզայ, քիչ մը հանգստութիւն, սիստիւմ կամ դթութիւն զըստնելու համար, և մուրայիկի պէս ծատեալ իր քրոջ կ'ներկայանայ, փորձելու և տեսնելու համար անոր սիրտը թէ արդեօք պիտի համանայ: իր սիրած անձը:

« Խսկոյն ձանցցաւ, կ'ըսէ պարզամիտ պատմաղիրը, թէ ոլէտե մահուամ կեղնութեամբ այլագունած, ձերմակ մօրոք և որատուած վերարկուով էր: Իր բաղկաց մէջ այնպիսի խանդաղաստանօք և դթութեամբ նետուեցաւ որ կարծես թէ Ֆէրարայի պալատականաց ուկինու: Հագուստով կ'տեսնէր իր եղայրը: Իր ձայս նը երկար տուն հեծկլստանքէ կ'խեղդուի, սրտին վրայ կ'սեղմէ

իր եղայրը: Ոտքերը կ'լուայ, և ինչզյգի կերակուր պատրաստել կուայ: Բայց ոչ մին և ոչ միւսը կրցան կերակուրներու դպել իրենց շուրթերը, այնչափ սրտերնին վշտով լի էր, բոլոր օրը ուղաւով անցուցին, առանց բան մը ըսելու, բայց միայն ծու վը դիտելով և մանկութիւնը յիշելով»:

Բ

Ամառուան սկիզբն էր օր մը այն միջոցին որ Կարօլիոյ նեղուացը իր բլուրներէ, սպիտակ տուներէ, մազլցիկ որմերէ զոյուած ժայռերէ և իր երկնքէն առելի կապոյտ ծովով շրջապատած, կը նմանի փրփուրէ ձերմած կանաչ գաւաթի, այն եղանակին որ Քովլիկի ձկնորսները իրենց խրճիթը այս ժայռերու վրայ ձգեւով և իրենց ուռկանները փոքրիկ անցքերուն բարակ աւազին վրայ տարածելով, ցամաքէն վատահութեամբ հեռանալով զիս շերները երկու երեք մղոն հետո ծովան մէջ որսալու կ'երժան մինչեւ Քարբիի, Քրօնիտայի և Խշայի ժայռերուն տակ և Կայէթի նեղուցին մէջ տեղ:

Ամանգ իրենց հետ ոէտինէ ջահեր կ'առնուն և կ'վառեն ձուկը խարելու համար: Չուկը առաւագեան լոյսը կարծելով ջրին եւ բերը կ'ելէ: Ցղայ մը նաւակին զլուիր նստած, լոիկ ջահը աւլիքին վրայ կ'ծուէ, մինչդեռ ձկնորսը աչքով ջուրին մէջ թափանցից լով, իր որաք կ'փնտուէ և ուռկանին մէջ կ'առնու զայն: Այս կրակները, փուռի կրակարաններու նման կարմիր, ծովուերեսին վրայ ծիփոն ակօններով կ'ցոլան, լուսնոյ զունդին արաձակած երկար նշոյներու որէս: Կոհակներու ծիփումը Ճօճել կուտայ զանոնք, և ալիքէ ալիք շացումը կ'երկարի, մինչև որ սուած ջին կոհակը կրնայ իրեն հետևածին ցոլացնել:

Ճատ անդամ բարեկամն և ես, ամբողջ ժամեր կ'անցընէինք, ժայռի մը կամ ժան թագուհւոյն պալատին խոնաւ աւերակներու վրայ նատած այս օտարոտի լրացքը դիտելով և խեղչ ձըկն նորոներու թափառական և անհոգ կենաց վրայ նախանձելով։ Կարուիոյ մէջ, զիւղին և ծովու վրայ քանի մը ամիս մեր առօրեայ պայտաներու մէջ ճողովրդեան մարդերու շետ սովորական տեսութիւննիս զմեղ ընտելացոցած էին իրենց ձայնաւոր և շշշաղ լիզուին որու ձեւը բառեն աւելի ազդեցութիւն կուտայ։ Կախազգացումով փիլիսոփայ և կենաց ննտափ աղմակները զեռ շնանչ նալով անոնցիշ յոդնած, կ'նախանձէինք շատ անդամ այս երաջանիկ լազուրներուն վրայ որ այն ատեն Կարօլիոյ եղերը կը վիստային, որոնք օրենին աւաղին վրայ իրենց փոքրիկ նաւակին շուքին տակ կ'անցընէին, իրենց զնայուն բանաստեղծներու տաղերը մտիկ ընելով, և իրիկոնը ծովու եղերը սարփինայի մը տակ իրենց դասի աղջիկներուն հետ Թարանթան պարելով։ Անոնց սովորութիւնները, բնութիւնը և կեանքը աւելի աղէկ կը ձանչնայինք մեր ընտիր ընկիրութիւններէ որ երբէք չէինք յաշնիեր։ Հաճելի էր մեղ այս կեանքը որ կ'թմրբեցնէր մեր հոգայն բուռն կիրքերը որ անօդուտ տեղ երիտասարդներու երեւակայութիւնը կ'մաշեն բաղդին զիրենք զործելու և մտածելու հրաւիրել շատ յառաջ։

Քարեկամն քսան տարեկան էր, ես ալ տամն և ութ։ Երկոքանիս ալ այն հասակին մէջն էինք որ ներեցի է երազները իրականութեան հետ խառնել։ Արշեցինք այս ձկնորսներու ծանօթանալ և քանի մը օր անոնց կեանքը վարել միատեղ նաւելով։ Այս զաղջ և լուսաւոր դիշերները առադաստին տակ, կոհակներէ տատանող նաւակին մէջ անցընելով սասաղալից երկնից տակ որ բնութեան ամենէ խորհրդաւոր հաջոյքներէ մին կ'թուէր մեզ, և զոր պէտք էինք ձանչնալ դոնէ սպասելու համար։

Ազատ, և մեր զործերու և բացակայութեան վրայ համար տալու պէտք չունենալով, հետեւեալ օր երազածնիս իրացոցինք ժուռզալով Մարձելինայի եղերքը որ կ'տարածի Մինչև Վիրզիւլիսի զերեզմանը, Քողիլիր լերան ստորոտը և որ Կարօլիոյ ձկնորսները աւաղին քաւակնին քաշելով ուռկաննին կ'նուրեն, հոն զեռ ուժեղ ծերունի մը անսամք ։ Պայծառ զոյներով նկարուած նաւակին մէջ որսի զործիքները կ'զնէր և նաւակին խելին վրայ Սուրբ-Ֆրանչիսկոսի փոքրիկ պատկերը կար։ Տասներկու տարեկան տղայ մը իր միակ միաւարը այն միջոցին նաւաւակին մէջ կ'բերէր պանիր որ ծովու զայլախաղներէ աւելի փայտուն և սովորոյն էր, Նոյնպէս քանի մը թուզ և հողէ ամանով ջուր։

« Ծերունուցն և տղուն կերպարանքը մեղ դրաւեցին։ Խօսք բաւցինք։ Զկնորսը ծիծաղեցաւ երբ առաջարկեցինք որ մեղի իբր թիավար ընդունի իրեն հետ ծովու վրայ ընկերանալու։ » Պուք, բսաւ, թիավարելու յարմար ձեռքեր չունիք։ Զեր սպիտակի ձեռքերը փետուր և ոչ թէ տամսակ բանելու համար ստեղծուածեն։ ծովու վրայ զանոնք կարծրացնելը մեղք է»։

« Երիտասարդ ենք, պատասխանեց բարեկամն, և արհեստ մը մստերէ առաջ ամեն բան կ'ուզնիք փոքրէլ։ ձերը կ'սիրենք, վասն զի ծովու վրայ և երկնից տակ է»։

« Իրաւունք ունիք, պատասխանեց ծեր նաւավարը։ Արհեստ մ'է որ սիրաը զոհ կ'ընէ և միտքը վստահ սուրբերու պաշտամանութեամբ։ Զկնորսը ուղարկի երկնից պահպանութեան տակէ է։ Մարդու չղիտար թէ հոլը և ալիքը ուսկից կուղան։ Խարս տոց և հարթէւ զարծաւորին ձեռաց մէջ են։ Հարստութիւն և շնորհք, թաղաւորին, իսկ նաւակը միայն Աստծոց»։

Զկնորսին այս բարեկամաշտ փիլիսոփայութիւնը աւելի հաստատեց մեր անոր հետ նաւելու գիտաւորութիւնը։ Երկար ընդդիմութենէ վերջը յանձնաւու եղաւ ծերը։ Երկուքնիս ալ օրը երկու գործն լշարել օրոշեցինք մը վարժութեան և ուտելիքին համար։ Այս որոշումները ընելէ վերջը տղան Մարձելինա զրկուեցաւ հացի, զինուոյ, պանիրի և պտողի նոր պաշար առնելու։

Իրիկոնը նաւակը ծով իջեցնելու օգնեցինք և մեկնեցանք։

Առաջին զիշերը սքանչելի եղաւ : « Թովլը Զվլիցյէ թիոյ լեռան հերէ շրջապատած լճի մը նման հանգարան էր : Արշափ որ եղերաքէն կ'հեռանայինք նարօլից պալատին պատուհաններու և նաւահանդպալին կրակէ լրդուներու անհետիլը կ'աւեննենք հորիզոնին թանձր զծին տակ : Փարոսները միայն եղերքը կ'ցուցնէին , բայց անոնք ալ կ'զեղնէին Վէտովի հրապուխն ելած թեթև կրակին : Մինչեւ մենարար առկանը կ'թուզուր և կ'քաշէր , և աղան կ'են ննջած կ'ձգէր որ ջահը երերայ իր ձեռքին մէջ , մենք ալ երբեմն երեմն թոյլ շարժում մը կրասայինք նաւակին և հիացումով միայն կ'զնէնք ջուրին քաղցրաձայն կաթիլներուն որ մեր թիերէն մզուելով դաշնակնաբար ծովու մէջ կ'ցայտէին արծաթ ամանի մէջ կ'ինալ մարգարիտներու նման :

Երկար ատենէ ՚ի վեր Քօգելիրի ծայրը կրկներ , Յուզոլի , Պայիսյ ծոցը անցեր է ինք , նոյնպէս Կայէթի ծոցին նեղոց յէն որ Միւլէն Հրուանդամին և Բրոսիստ կրպոյն մէջ տեղն է : Քունը մեր արտեանաց վրայ ծանրացաւ . Երբ ծովուն խորը հասանք : Տղուն քով նստարանուս տակ պառկեցանք :

Ձինորսը նաւակին մէջն ծալլուած ծանր առադասար մեր վրայ ծածկից : Այսպէս երկու կոհակի մէջ քնացանք անդպայտար տասանուելով ծովէ մը որ հազիւ թէ կ'ծուեր կայմը : Ցերեկ էր երբ արթնցանք : Պայծառ արեղակ մը , լուսոյ ժապաւեններով ծովը կ'գունառ անծանօթ ծովեվեր մը սովորակ տուներու վրայ : Մեղմ զերիւու մը որ այն երկրէն կ'փչէր մէր դլխուն վրայի առադասար կ'տաստանէր և կ'միշէր մեր նաւակը ծասցէ ծոյ և մայուէ մայու : Ասիկա Եշիա զերշիկ կզզւոյն տասմնաձե . և սրածայր եղերքն էր , որ վերջը այնչափ երկար պիտի քնակէի և պիտի սիրէի զան : Լուսոյ մէջ լողացող ոյս կզզին տառաջին անդամ կ'երեւէր ինձ ծովէն ելլելով և կապայա երկնից մէջ կրտուելով որ կարծես թէ ծլած է աման . դիշեր թեթև թոյլ մէջ բանապեղի մը երազով :

Եշիա կզզին՝ որ Կայէթի ծոցը Նաբօլիոյ ծոցէն կ'զատէ , ինք ևս անձուկ նեղոցալ մը Բրոսիստ կզզին կ'զատուի , սրածայր լեռ մ'է որու սպիտակ և ստէպ շանթահար զաղաթը՝ իր փըշը բուած ակրաները դէպ ՚ի երկինք կ'բարձրացնէ : Իր կողերը հով միաներէ , խոռոչներէ , վտակներու հոսանքէ վերէն ՚ի վար ծածկուած և մութ կանաչ շաղանակենիներէ շրջապատուած են : Ծովու խիստ մօտ և ալիքներու վրայ հակող բլուրներու վրայ խրբանքներ և զիւղակներ կան տեղ տեղ այդիներու որթերու տակ պահուած : Ամէն մէկ զիւղ իր յատուկ նատաբիւնին ունի : Այս պէս կ'կոչէն այն նաւահանգիստը՝ ուր կզզւոյն ձինորմներու նաւահերը և քանի մը լսատերու կայմեր կ'տաստամին : Առաջաստակաները ծովեզը ծառերուն և որթերուն կ'գային : Եերան զարիւ վարէն թագուն խոռոչներու մէջ , բրդաձե բլուրներու վրայ կանացուն , շաղանակենիներու յենած , ստուերաձիգ կաղնիներու բազմութիւնը շրջապատեալ , իբր սպիտակ կամարներէ զարդարուն , այս տուներէն ամէն մէկը բանաստեղծի կամ սիրողի մը երակին երեակայական բնակարանը կրնայ բլուր : Մեր աշերը չէին յագեր ոյս տեսաբանէն : Եղերքը ձուկերու առատութիւն կար և ձինորսը յաջող զիշեր մը անցուցեր էր : Ազզւոյն փոքրիկ մէկ ծոցը ելանք որպէս զի շրջակայ աղբիւրէ մը ջուր առնունք և ժայուերու տակ փոքր ինչ հանգչինք : Ասեր յարևմուտս խօնարշելու տաեն՝ Նարօլի վերագարձանք թիավարի նստարաններու վրայ պառկած : Կայմն նաւակին խելին կողմը գրուած քառակուսի առադասար մէր որուու մը որու չուանը տղան բռնած էր , կ'բաւէր մէղ Բրոսիստ Միզէնի հրուանդամին ժայռերէն անցնիլ և ծովուն ջուրը մեր նաւակին տակ ՚ի փրփուր հանել :

Ծերունի ձինորսը և տղան մեր աջակցութեամբը առաղին վերայ քաշեցին նաւակը և ձուկերու զամբիւրները Մարմելինայի ժայռերու ներքեւ գոնուուլ փոքրիկ տան շտեմարանը տեղասորեցին :

Հետևեալ օրերը մեր նոր դորձը վերստին կ'սկսէ ինք ուրախ պուարթ : «արօլից բոլոր կոհակները շարունակ փրփրեցուցինք : Այսպէս Քարքի կղզին տեսանք՝ որ երևակայութիւնը գեռ Տիրքի ստուերը կ'վանէ : Տեսանք Քիւմ և իր տաճարները, խիստ դափնիներու և վայրի թղթնիներու տակ ծածկուած, Պայիա և իր նսեմ վայրերը՝ որ երբեմն Հռովմայ երիտասարդութեան և հեշտութեանց ապատանարան էին, արդ անոնց պէս ծերացած էին. Քօթիշի և Թօմֆէիա Աէստոփի լավային և մնխիթին տակ կ'ժպտէին . Քասթէլամարն ալ տեսանք, որու դափնիները և վայրի շագանակնիներու բարձր և մմին անտառները ծովու մէջ բեկրեկելով նաւահանգատին յարագու ալիքները մութ կանաչի կ'դունաւորէ : Ծեր նաւալարը ամէն տեղ ձկնորսներու քանի մը ընտանիքներ կ'ձանչնար, որոց մօտ հիւրընկալութիւն կ'զտնէինք երբ ծովը անհանգարան ըլլար և «արօլի վերադառնալու արգելք մը պատահէր :

Երկու ամիսի չափ պահպոկ չ'մտանք : Ժողովուրդին հետ օդին մէջ կ'ապրէինք, ժողովուրդին պարկեցու կեանքով : Մենք ալ բնութեան յարմարելու չամար ժողովուրդին նմանած էինք : Գրեթէ իր հագուստով, իր լեզուն կ'խօսէինք, և իր սովորութեանց պարզութեամբն իր բնիկ զզացումներու պարզութեան հաղորդ կ'ընէր մեզ :

Սակայն այս փոփոխութիւնը բարեկալիս և իմ վրայ այնքան չէր աղդեր : Երկուքնիս ալ զիւղը սնած՝ յեղափոխութեան փոթորիկներու ատեն, երբ մեր ընսանկքը կամ ընկճեր կամ ցըրուեր էին, մեր տղայութեան ժամանակ դիւղական կեանք վարեր էինք . ան Կրէզիվոտանի լեռներու մէջ դայեալի մը քով որ մօքը բանտարկութեան ատեն իր քով առած էր զինք . ես ալ Մաքոնէի բլուրներու վրայ գիւղական փոքրիկ բնակարանին մէջ ուր հայրս և մնյը իրենց վտանգի ենթակայ բոյնը հաստատեցին :

Մեր լեռերու հովիսին, երկրագործին և «արօլից նեղուցին մէջ զանուող ձկնորսին մէջ եղած տարբերութիւնը միայն վայրը, լեռն և արհեստն էր : Ակօսը կամ ալիքը մի և նոյն խորհուրդները կ'ներշնչեն մարդոց որ կ'ձեղքեն երկիրը կամ ծովը : Բնութիւնը նայն լեզուն կ'խօսի անոնց որ կ'բնակին իր հետ լերան կամ ծովու վրայ :

Այս զգալով՝ այն պարզ մարդոց մէջ օտար չէինք : Բնագրում ներու նմանութիւնը մարդոց մէջ ազգականութիւն է : Կենաց այս միօրինակութիւնը անդամ զմեզ թմբեցնելով կ'հաջեցնէր: Յառով կ'տեսնէինք ամստուան վերջերու յառաջանալը և աշնան ու ձմեռուան մօտիլը որմէ վերջը պէտք էինք հայրենիք վերադառնալ : Մեր ընտանիքը կ'սկսէին զմեզ կանչել անհանգիստ կերպով : Ըստ կարի վերադարձի զաղափարը կ'վանէինք մը մոքե և կ'ոգէինք երեակալյել որ այս կեանքը երբեք վերջ պիտի չունենար :

Վակայն սեպտեմբեր իր անձրեսով և որոտմամբ սկսաւ : «Ճովը նուազ հանգարան էր : Մեր արհեստը աւելի գժուար երբեմն վասնադասոր կ'ըլլար : Զեփիւռները կ'սկսէին ցրտիլ, ալիքը կ'փրփրար և շատ անդամ իր ցայտումներով մեղ կ'թրջէր : Նաւահանգստին վրայ կնած երկու հաստ բրդէ թուխ վերաբկուներ ունէինք, զրու «արօլից նաւարարները և լապտենները ձմեռը ուսերնուն վրայ կ'նետեն : Այս վերաբկուներուն լայն թեկերը մերկ բաղակներու քովը կ'կախուին : Գլխանոցը, օղին յարմար, կամ ետեղ կ'երբերայ կամ ձակտին վրայ ինկած, որպէս զի նաւարարին զլուկը կամ անձրեսէն և ցուրտէն պատապարէ, կամ թողու որ հովը և արևուն ձառապայթները իր թրջած մազերու մէջ խաղան :

Օր մը Մաքնելինայէ մեկնեցանք հանդարտ ծովով, զոր թեթև քամի մը անդամ չէր կ'նձռեր, Քիւմի եղերքը առաջին թունու և կարմրաթեր որսալու, զրու հոսանքները նոյն եղանակին կը

մղեն հոն։ Առաւտուեան կարմրագոյն մէկը եվելքը կ'սրատէր, որով երեխյեան հով մը զուշակել կուսար։ Կ'յուսայինք կանիսել հովը, և ժանձը ու հանդարո ծովը չ'պայբացած Միզէնի հրուան դանը կրիսելու ժամանակ ունենալ։ Արար առատ էր։ Աւզեցինք քանի մը անգամ ևս ուռկանակ ճզել։ Ճովը յանկարծ հասաւ։ Էքրօմէօի զազաթէն, աշաղին լեռ մը որ Նշիան կ'սրատէ, ինչ կաւ այնպիսի աղմուկով և սաստիութեամբ որ կարծես թէ նոյն ինքն լեռը ծովուն մէջ կ'տապալէր։ «Յախ մէր շուրջը դմնուած ջուրին երեսը հարթ հաւասար ըրաւ, ինչպէս որ երիշմէ բահը հողին կոշտը կ'հարթէ և ակօսը կ'շտկէ, յետոյ ալերը իր ապա շութենէ սթափած քանի մը վայրկենի մէջ մրմնալով ուռեցաւ, այնպիսի բարձրութեամբ՝ որ երբեմն եղերքն ու կղզիները կ'սրացէր մեղմ։ Թէ յամպէն և թէ Խշայէն հետի և արդէն Միզէն հրուանդանը ու Քրօսիտա յունական կղզին զատող նեղուցին կեսը հասեր էինք։ Մէկ միջոց ունէինք բունելիք, որաշեցինք նեղուցին մէջ մտնել, և եթէ անյնելու յաջուէինք ձախ կողմը Պայիս նեղուցը անյնիւ և ասպաստանիւ իր հանդարո ջուրերու մէջ։

Ալեքի մը գազաթէն՝ ուր նաւակին հաւասարակշռութենը վայրակեան մը փրփրէ մրրիկն մէջ զմեղ կախեց, ծեր ձկնորսը չ'վարանեցաւ, իր շուրջը արագ ակնարկ մը ճղեց, նման այնպիսի մարդու մը որ ծառի մը վրայ կ'ելէ կորստած ճամբան փնտուեալու. յետոյ զեկին դիմեց։ «Թիերնուուր, աղաքնենք, սոտաց, պէտք է որ գէս ի հրուանդան թիավարինք հովէն առելի շուտ։ Եթէ մեղմէ արագ հասնի, կորսուած եմք»։ Ճնաղանդեցանք ինչ պէս որ մարմինը բնազդումին կ'հնազանդի։

Աչերնիս անոր աշերան յարած՝ իր ուղղութեան արադ նշանը փնտուելու համար միջին նասարաններու վրայ ծուեցանք, և մերթ բարձրացող ալեաց վրայ դժուարս ելլելով, մերթ անոնց փրու փուրով իջնոր կոհակներու խորը զահավիժելով, կ'ջանայինք մեր անկումը մեղմել ջրին թիերով զիմնագրելով։ Ութ կամ տասը մէկ մէկէ առելի ահազին ալիք նեղուցին ամենէ անձուկ տեղը նետեցին մղ։ Բայց հովը, Ճիշդ նաւավարին ըսածին պէս,

մեղմէ կանխած էր, և հըուանդանին ու կղզւոյն ծայրին մէջ մտնելով այնպիսի զօրութիւն մը ստացած էր՝ որ բուռն լավայի հնչինով կ'կատղեցնէր ծովը, և ալիքն ալ փախչելու բաւական տարածութիւն չ'զտնելով զինքը մղող փոթորկին առջե՝ կ'հաւաքուէր, կ'բացուէր, կ'հոսէր, յիմար ծովու պէս ամէն կողմ կ'սփուռէր, և չ'կրնալով նեղուցէն փախչիլ, Միզէն հրուանդանին սրածայր ժայռերու գէմ սովկալի հարուածներով կ'բաղնէր, և հոն փրփուրէ կոթող մը կ'վերցնէր որու փոշին մինչև մեր վրայ կ'գառնար։

¶

Անմտութիւն էր նոյն անցքե անցնելու փորձել դիւրաբեկ նսաւակով մը զոր փրփուրի պարզ հոսանք մը անգամ կրնար ընկղմել։ Փրփուրէ կոթողավ լուսաւորուած հրուանդանին վրայ ձկնորսը նայուածք մը շրջեց զոր երբեք պիտի չմոռնամ։ վերջէն խաչակնեց և զուշց։ «Անցնիլ անկարելի է, ծովու մէջ վերագաւանալ ալ աւելի, միայն մէկ միջոց կայ։ Քրօսիտա հասնիլ կամ կորսուիլ»։

Որչափ որ նորեկ էինք ծովու կրթութեան մէջ, սակայն այս տեսակ զործի մը գծուարութիւնը կ'զդայինք։ Հրուանդանին դէմ ուղղեցինք մեր ընթացքը ուր հովը կ'մէշը զմեղ։ Մեզի հետ փախչող ծովուն կ'հետաեկնէնք և ալիքները զմեղ մինչև իրենց գաղաքը կ'բարձրացնէին։ այսպէս չէին յաջողեր զմեղ իրենց բացած անդունդներու մէջ զահավիժել։ Քրօսիտայի երեկոյեան լոյսերու փայլիլը մեր աջ կողմը կ'տեսնէինք ուր համենելու համար պէտք էինք խոտորնակի ալիքները ձեղքելով սահիլ գէպ ՚ի եղերք կոհակներու ձորերու մէջէ միշտ անտնց գալանելով նաւակին կողը, և ծայրերը գէպ ՚ի հով։ Այսու ամենայնիւ հարկը չէր թողուր մեղ վարանիլ։ Զինորսը նշան ընելով որ թիերնիս բրունենք, հետեղ կոհակի մը միջոցին օդուտ քաղելով ղեկը դարձոց, գէպ ՚ի Քրօսիտա ողղուեցանք և նաւեցինք ծովային խոր-

տի տերեկ մը նման զոր ալիք մը ուրիշ ալիքի կ'մղէ , և կոհակ
մը կոհակէ կ'առնու :

Փ

Ընթացքնիս մեղմ էր և գիշերը հասած : Փոշին , փրկուրը ,
ամպերը՝ զորմը քայքայուն բեկուներով նեղոցին վրայ կը
դարձնէր , մթովինը կ'կրկնապատկէին : Ճերունին հրամայեց
տղուն որ իր ու ամինէ ջահերուն մին վառէ , ափկա կամ ծովու
խորերու մէջ իր ընթացքը լուսաւորելու համար էր , կամ . Բրօ-
սիսայի ձիտրսներու խայցնելու որ նեղոցին մէջ նաւ մը կո-
րըսաւեան վիճակի մէջ կ'զտնուէր և թէ այն նաւակը կ'հայցէր
չէ թէ անոնց օգնութիւնը հապա ազօթքները : Աքանչելի և տը-
խուր էր այն խեղջ տղուն տեսքը , մէկ ձեռքով պատիկ կայմին
փաթթուած և միւսով գլխուն վրայ վերցնելով այն կարմրափայլ
ջահը , որու բոցը և շրդին հողմէն կ'ոլորուէին և կ'այրէին իր
մատերն ու մաղերը : Այս երերուն լոյսը ալիքներու զարաթը ե-
րեւով , և անոնց խորութեան մէջ աներեւութանալով , միշտ մա-
րելու պատրաստ և միշտ անշիշել վիճակի մէջ նշանակ մ'էր
անայ չորս անձերու կենաց որ այն դիշերուան տան ջանաց մէջ ա-
զատութեան և մահու դէմ կ'կոռուէին :

Փ

Երեք ժամ՝ որոնց վայրկեաները վիրենք չափող մտած ումնե-
րու տեսողութիւնը ունին , այսպէս անցան . լուսինը երկցաւ և
սովորականին պէս հողմն առելի բուռն եղաւ : Եթէ ամենափոքր
տառապատ մ'ունենայինք , քսան անդամ զմել կործանած պիտի
ըլլար : Թէև նստուն ցած ծայրերը փոթորկին այնչափ ենթա-
կայ չէին՝ բայց կային վայրկեաններ՝ ուր կ'կարծէինք թէ մեր ող-

նափայտը ալիքներէ կ'խորստակուէր և զմեզ ծառէ ինկած չոր-
տերեի մը պէս ասդին անդին կ'գարձնէր : Կաւերնիս ջրով լեց-
ուեցաւ և չէինք համեր շուտ մը պարպել զայն : Կային վայր-
կեաններ՝ ուր կ'զդայինք թէ նաւակը կ'ընկղզէր նման այն գագա-
ղին՝ որ փոսին մէջ կ'իջնայ : Զրին ծանրութիւնը աւելի անհնա-
զանդ կ'ընէր նստը որով կոհակներու մէջ վեր ելլուու կ'զանդա-
ղէր : Մանրերկրոբում մը յապաղում , և ահա ամէն բան լմնցած
կ'ըլլար :

Ճերունին առանց խօսելու արտասուալի աչերով նշան ըրատ
որ նաւուն բոլոր բեռերը ծովը նետենք : Զրի ամանները , ձուկի
զամբիւղները , երկու հաստ առաղաստները , երկաթէ խարիսխը ,
պարանները , մինչեւ հաղուստներու ծանր ծրաբները , մեր հաստ
բրդէ վերարկուները , բոլորն ալ ծով նետուեցան : Խեղձ նաւա-
վարը , վայրկեան մը իր բոլոր հարստութեան լողալը դիմեց .
նաւը վերասին ելաւ , և թեթև ալիքներու դադաթէն սրացաւ ,
թեռէն ազատած նժոյդի մը պէս :

Անզդայարար նուազ աղմկալի ծովու մը մէջ մնանք որ Բրօ-
սիսայի արևմտեան ծայրէն քիչ մը պատսպարուած էր : Հողմը
թուլցաւ , ջահին բոցը մեծցաւ , լուսինը ամփերու մէջէն կապ-
տագոյն ծակ մը բացաւ . ալիքները երկնալով հանդարտեցան և
գլուխնուս վրայ զուռալէ դադրեցան : Քիչ քիչ ծովը կարճ և
թաքցուն եղաւ զրեթէ հանդարա ծոցի նման , և Բրօսիսայի ժայ-
ռին սկ ստուերը հորիզոնին դիմը կտրեց մեր առ ջեւ : Աղջոյն
ծոցը ձեւացնող ջուրերու մէջ էինք :

ՓԱ

Դէպ 'ի եղըր ծովը խիստ աղմկալի էր : Կաւահանգիստը փըն-
տուելու համար , պէտք էինք յանձն առնուլ կղզին հեռանալ իր
խութերու մէջ : Համարակացէք , տղաքներ , ըստ ձկնորսը հա-
շին լուսովը ճանչնալով եղերքը , Աստուածածին մեզ ազատեց :

Յամաքին մօտ ենք, և այս զիշեր տանս մէջ պիտի պառկինք » : Կարծեցինք որ խելքը կորուսեր էր, վասն զի Պարձելինայի մէջ իր մութ շտեմարանէն ուրիշ բնակարան տնենալը չէինք զիտեր և առոտուանէ յառաջ հմտ գառնալու համար պէտք էինք նեղուցը մննել, հրուանդանը կրկնել, և վերստին դէմ կենալ այն մընչող ծովուն որմէ հաղիս աղատած էինք : Բայց անիկա մեր զարմացման վրայ կ'ծիծառէր, և մեր աշաց մէջն գուշակելով մեր մտածումը, « Ֆի վախնաք, երիտասարդներ, կրկնեց, պիտի համինք առանց ալիքէ մը թրջուելու » : Աերջէն բացատրեց թէ Քրոսիսայի էր ինք . թէ կղզւոյն այս եղեքքը դեռ իր հօրը իրաշիթը և պարտէ զը ունէր, և այս միջոցին իսկ, իր ալեւոր կինը աղջիկ թուան հետ ուրինայի քայը, և երկու ուրիշ փոքր տղաքներ, իր տան մէջ թուզերը կ'չոքնէին և որթերը կ'կթէին ուրսաց խաղողները ինք հարուց մէջ կ'ծախտէր : « Քանի մը վայր կրեան ևս թիավարեցէք, յաւելցուց, և աղջիսին ջուրը պիտի խմնէք, որ Խշայի զինիէն աւելի յատակ է » :

Այս խօսքերը ոյժ առան մեղ, մղոնի մը շափ աեղ ևս թիավ վարեցինք, Քրօսիսայի աջ կողմի փրփրացով ափանց երկարութեամբ : Երբեմն երբեմն տղան իր ջահը կ'բարձրացնէր և կ'սրուրէր, որ իր ախտը լցոյը ժայռերու վրայ կ'զարնէր, և ամէն տեղ անհատչելի որատ մը կ'ախսնէինք : Վերջապէս կրանիթեայ ժայռ որի մ'ետելը որ պատճէշի պէս ծովու մէջ կ'յատաջանար, գիտեցինք որ ժայռը կ'իջնէր և կ'փորուէր բակի պատի Ճեղքուածքի պէս, ղեկը գէւ ՚ի եղեքք գարձուց զմեղ, երեք վերջին կոհակ մեր յողնած նաւը երկու խութի մէջ նետեցին ուր փրփուրը կը բղյար ցած ծովու վրայ :

ԺԲ

Նաւուն գլուխը ժայռին գպելով, չոր և հնչող ձայն մը հանեց պարապ տեղ ինսելով կտրուող տախտակին Ճայթիւնին նման:

« Ծովուն մէջ յատկեցինք, պարանի մը մնացորդով նաւուկը խարսխեցինք, և հետեւյանք ծերունոյն ու տղուն որ մեղ կ'առնաջնորդէին :

Ժայռին վրայէ ելանք տեսակ մը անձուկ սահպուղէ մը՝ զոր սղցը ժայռին մէջ անհարթ կերպիւ փրփու ծովու ջուրեւրէ բոլորովին սահմանաներ : Այս կարծը ժայռէ սանդուղը որ երբեմն անկուխը էր, լմնցած էր քանի մը կեղծ աստիճաններէ որոնք շնուած էին երկայն ձողերու ծայրեր պատին ծառ կերուն մէջ մինելով և անոնց վրայ հին նաւերու ձիւթով ծածկուած տախտակներ կամ չոր տերեւներով ծածկուած շաղանակենի ձիւղեր սփուած էին : Այսպէս յամրաքայլ չորս կամ հինգ հարիւր աստիճան ելլըլէ վերջը փոքրիկ բակի մը մէջ դանուեցանք՝ զոր մոխրագոյն քարերէ պատ մը կ'ըջապատէր : Բակին խորը երկու մութ կամարներ կ'բացուէին որմաք շտեմարանի ուղին կ'երեւէին : Այս միապաղադ կամարներու վրայ երկու ցած և բուրաձև կամարներ տանիքով յարի մը կ'կրէին որուն շորջա ինկենիի և շահասպրամի ամաններով զարլարուած էին : Կամարներուն ասկը կ'աեսնուէր զեղջական Ճեմլիք մը՝ ուր լուսնի նշոյլ ներով կախուած կ'փայլէին ոսկի կանթեղներու նման եղիպատացորններ :

Աղէկ չմիացած տախտակներէ դուռ մը այս Ճեմլիքին վրայ կ'բացուէր : Աջ կողմին զետինը՝ որու վրայ տունը անհաւասարակէ և շինուած էր՝ մինչև Ճեմլիքին բարձրութեամբ կ'ելլըր : Մեծ թզինի մը և որմեւրու քանի մը ուղարուն արմեր անկէ տան ծայրին վրայ կ'հակէին իրենց տերեւները և պոտղները Ճեմլիքին մոտքին վրայ տարածելով և ձգելով երկու կամ երեք Ճիւղեր մինչև կամարներու յենած պատին վրայ : Կրենց Ճիւղերը կիսով կ'վանդակէին երկու ցած պատուհաններէ որոնք այս տեսակի մը պարտէ զին վրայ կ'բացուէին և եթէ այս պատուհանները չըլային, այս միապաղադ քատակուսի և ցած տունը, այն եղերքին մոխրագոյն ժայռերէ մէկը, և կամ կարծրացած լավայի կառններէ մին պիտի կարծուէր զոր շաղանակենին, բաղեղը և որթը իրենց Ճիւղերով կ'սեղմնն և կ'պատեն և ուր Քասթէլմա-

քի և Սօրանթի այդեպանը, որուով մը գոցուած այր մը կ'փորէ
իր դինին պահելու համար այն որդին քով որ իրեն բերած էր:

Երկար և արագ ելքէն, և ուսելիուս վրայ առած թիերուն
ծանրութենէ շնչառողան՝ վայրկեան մը ծերունին և ես փակին
մէջ կանկ առինք, շոնչ առնելու համար: Բայց տղան իր թին
դրյա մը մացառներու վրայ նետեց, և թեթև մը սանդուղն եւ
լելով իր վառած ջահը ձեռքը սկսած պատուհաններէն մէկուն
դահնել և ուրախ ձայնով մեծ մայրը և քոյրը կանչելով. «Մայր
իմ, քոյր իմ, կ'զոչէր. Կայէթմանօ, Կրացիէլլամ, արթնցիք, բաւ
ցէք. մեր հայրն է, ես եմ, մեզի չեմուսականներ ալ կան»:

Կէս արթնցած, բայց յստակ և քաղցր ձայն մը լսեցինք, որ
տան խորէն զարմացման քանի մը շփոթ աղաղակներ կ'ձեր: Յետոյ
պատուհանի մը փեղկը կէս բացուելով, մերկ և սպիտակ
թեէ մը հրուեցաւ և ջահին լցուէն՝ զոր տղան ոսից մատներուն
վրայ կայնելով դէպ ՚ի պատուհանը կ'տանէր, մանկամարդ օրի-
որդի մը զմայլելի կերպարանքը տեսանք:

Կրացիէլլամ իր քունին մէջ եղօրը ձայնէն ապշած՝ ոչ մլտքը
եկած և ոչ ատեն ունեցած էր զիշերացին հաղուստ մը հազ-
նելու: Պատուհան ցատկած էր սովերը բոսկի ինչպէս կ'նոջէր
անկողնին մէջ: Իր երկայն խարտեաշ վարսերուն կէսը մէկ այ-
տին վրայ կ'իշնար, և միւս կէսը վզին շուրջը կ'պատէր, բայց
սաստիկ հողմը ուսին միւս կողմը տանելով զայն կիսաբաց փեղկին
կ'զարնէր և վերատին կ'բերէր իր երեսը շցելու ադրաւի մը
հողմավար թեւին պէս: Երկու ձեռքերով մանկամարդ աղջիկը ա-
շերը կ'շփէր, արմուկները վերցնելով և ուսերը տարածելով
քունը վանել ուղղող տղու մը առաջին շարժումին պէս: Ճապիկը
վզին շուրջը պատած, բարձր և նորը հասակ մը կ'երեցնէր,
կտակին տակ երիտասարդութեան նշանները հաղիւ ձեւացնելով:
Աշերը՝ ձուաձեւ և խոշոր, մոյզ սեխն և ծովու կապրյուն մէջի
անորոշ զօյնը ունէին, այն զայնը՝ որ նայուածքին խոնաւութենէ
ճառագայթը կ'քաղցրացնէ և կնոջ մը աչաց մէջ նոյն չափով
կ'խառնէ հողույն փափկութիւնը՝ կրից զօրութեան հետ: Գոյն
երկնային զոր Ասիոյ և Խոտալիոյ կանաց աշերը կ'առնուն, իրենց

բոցավառ օրուան կիզող կրակէն և երկնից յստակ կապոյտէն,
իրենց ծովէն և զիշերէն: Այտերը լեցուն և բոլորակ էին հաս-
տառ սիծով, բայց քիչ մը դեղնած, և կլիմայէն սակաւ ինչ
թուխ զցնով, չէ թէ հարաւային այն անարատ սպիտակութեամբ
որ դարերէ՝ ի վեր օդին և ալեաց առջև գրտած մարմարինի մը
գոյնին կ'նմանի: Բերանը՝ որուն շուրթերը բաց և մեր երկրին
կիմներէն աւելի լայն էին, անկեղծութեան և բարութեան ծալ-
քերը ունէր: Ակռաները, կարծ բայց սպիտակ, ջահին երերուն
լոյսով կ'փայէին, ծովուն եղերը արեէն զարնուած ջուլին բեկ-
բեկումին ատէ զսնուով սատափի կառուներու պէս:

Իր կիմնանի բայց քիչ մը գժուարին և շեշտակի խօսքերը,
զորս իր եղքօր կ'ուղղէր և որոնց կէսը հողմէ կ'ցրուէն, մեր առ-
կանջին երդի պէս կ'հնչէին: Ավրապարանքը, ջահին լոյսին չափ
շարժուն, վայրկենի մը մէջ զարմանքէ սոսկումի, սոսկումի ու-
րախութեան, և փափկութենէ ծիծաղի փոխուեցաւ. յետոյ մեծ
թղենին ետև մեզի նշմարելով պատուհանէն քաշուեցաւ շփոթ։
ձեռքը փեղկը թողոց, որ ալպատ պատին զարկաւ, և մեծ մայրը
արթնցնելու և կէս մը հադուելու համար անցնելէ յե-
տոյ, կամարաձեւ յարկին տակ զուռը բացաւ և իր հաւը և եղ-
բայրը համբուրեց բոլորովին յուղեալ:

ԺԳ

Պառաւ մայրը իսկոյն երեցաւ, ձեռքը կարմիր հողէ ճրագ մը
բռնած որ իր նիշար և զեղնած երեսը և սեղանին վրայի աղեւ-
կատին բոլորտիքը փաթթած բուրդին պէս ճերմակ մաղերը կ'լու-
սաւորէր: Ամուսնոյն ձեռքը և տղուն ճակատը համբուրեց: Բու-
լոր սպատմութիւնը՝ զոր այս տողերը կ'պարունակեն, քանի մը
խօսքով և քանի մը նշաններով հասկցուեցաւ այս աղքատ ըն-
տանիքին անդամոց մէջ: Ամէն բան չեինք լսեր, բայց քիչ մը
հեռու կ'կենայինք որպէս զի մեր հիւրընկալներուն սրտին զեղումը

Հեղինակը : Աղքաստ էին, մենք ալ օտարական ըլլալով՝ պարագա-
ռոր էինք յարցել զիբենք, ասոր բաւականապէս կ'վկայէք իրենց
դրան քով մեր ակնածական կեցուածքը :

Արացիելլա երբեմն երբեմն զարմացման նայուածք մը իր եւ բաղի մէջէ կ'արձակէր մեր վրայ : Երբ հայրը պատմութիւնը լը մընցուց, պառաւ կինը վառարանին քով ծնկան վրայ եկաւ . Արացիելլա տանիքը երթալով խնինիի տերեւ մը և նարնջենիի քանի մը ծաղիներ բերաւ, աթոռ մը առաւ և իր մակերէ քաշած երկայն գնդասեղներով փունջ մը կախեց Աստուածանայ փոքրիկի պատմիերին առջեւ որ գրան վրայ զրուած էր և որու առ ջեւ կանթեղ մը կ'վառէր : Խմացանք թէ փառարանութեան ցոյցն էր այս իր սուրբ Պահպանուհոյն որ իր հաւը և եղացը ազատած էր : Այս երախտաղի խտութեան մենք ալ մեր բաժնիր առնիք:

ԺԴ

Տան ներսի կողմը դուրսի մայոխն նման մերկ էր : Անձեփ պատահը , քիչ մը կիրով մայսն ձերմկած : Մողէսները լցուեն արթնաց կ'փախչէին և կ'ձչէին քարերու խորշելու մէջէ ձարխոսի տերեներու տակ որ տղզը իբր անկողին կ'ծառացէր : Առաստաղ կազմող մամուսպատ դերաններէ կախուած էին ծիծառներու բոյները՝ ուրիշ կ'տեմնուէր պղպղիկ սեաւ զլուխնին և երկչուտ աշերյուն մայլիլը : Կրացիկէլլա և իր մեծ մայրը երկրորդ մենեակը կ'պառկէին կտօր մը կտաւով ծածկուած անկողնի մը վրայ : Պտուղներու զարգիւղներ , և ջորիի մը համետը յատակը կ'ծածկէին :

Զկնորսը, տեսակ մը ամօթով մեր կողմը դարձաւ, ձեռքով
իր բնակարանին աղքատութիւնը ցուցնելով, ետքը տանիքը ա-
ռաջնորդեց մեղ. պատոյ տեղ մը կ'սեպուի այն թէ Արևելքի
և թէ Խոսակոյ հարաւային կողմի:

Տղուն և Կրացիկ լւայի օդնութեամբը , տեսակ մը կայան ձեւա

ցուց որուն մէկ ծայրը տանիքին պատին կ'յենուը և միւրը յատակը։ Այս ապատանաբանը լեռէն կտրուած շաղանակինիներու տամն երկու հատի չափ ճիւղերով ծածկեց և տակը ձարսիստի կոյտեր սփռեց, երկու կտոր հայ, թարմ ջուր և թուղեր բերելով ննջելու հրանիքեց մեզ։

Օրուան յոց նու թիւնները և այլայլու թիւնները մեր քանը ծանօթացուցին : Երբ արթնցանք՝ արդէն ծիծառները տանկիթին վրայ մեր անկողնոյն շուրջը կ'երգէին՝ թուչելով, և երեկոյեան ընթիւքին փառունքը կ'ողնային . արեգակը՝ արդէն երկնից վրայ բարձրացած, փուռի պէս մեր առաստաղը կազմող ճիւղերուն տերեաները կ'այրէր :

Նըրկար ատեն պառկեցանք ձարխստի վրայ , այն կէս գունով
որ մարդուս բարյականը կ'թողու որ զբայ և մտածէ , զբայու-
թեանց ելլելու և դործելու ոյժ ունենալէ առաջ : Քանի մը կէս
մը հնչուած խօսքեր կ'փոխանակէ ինք զոր կ'ընդմիշելն երկար
լուութիւններ և երազներով կ'լմինային : Առջի օրուան որաք , մեր
ոսից տակ երերուն նստակը , կատալի ծովը , անմատելի մայ-
ուերը , երկու փեղիերու մէջ տեղ Կրացիկ'լույի երեսը , բոլոր
այս կերպարանները մեր երեւակայութիւնէն կ'սահմէին կ'ամսնէն
և մեր միտքը կ'շփաթէին :

Պատուա մեծ մօր չէծկլուանքը և յանդիմաննութիւնները լսել
լով այս թմբրութենէ սթափեցանք, որ տան մէջ ամուսնոյն կը
խօսէր։ Վառարանը, որ տանիքին վրայ կ'ձեղքուէր, անոր ձայնը
և քանի մը խօսերը կ'բրերէ ր մինչեւ մեղ։ Խերձ կինը կ'աղքար
կարասիներուն, խարսիին, դրեմէ նոր պարաններուն կորստեամը
վրայ, և մանաւանդ իրմէց գործուած ու իր կանեփէն ծիստած
այն գեղեցիկ առաղաստաներու վրայ, զորս մենք մեր կեանքը ու
զատելու համար ծովը նետելու բարբարոսութիւնն ունեցեր է ինք։

« Խնչո՞ւ, կ'ըսէր մոնջ և նկուն ծերունոյն, այն երկու օտարականները, այն երկու Գաղղիացիները հետդ առիջ։ Զես զիսեր թէ հեթանոսներ են անոնք, և իբենց հետ գժբաղութիւն և հեթանոսութիւն կ'առնին։ Առ ըրեցը պատճեցին քեզ։ Մեր հարստութիւնը առին, փառք տուր որ հօգիդ ալ չ'ըրաւեցին։

Խեղճ մարդը ինչ պատասխանել չէր դիմեր . բայց Կրացիշ էլլա տղու մը յանդղութեամբ և անհամբերութեամբ , որու մեծ մայրը ամէն ինչ կ'ներէ , այս յանդիմանութեան անիրաւութեան վրայ յուղեցաւ և ծերունոյն կողմը բռնելով : « Ա՞շ կ'ըսէ թէ՝ այն օտարականները կուապաշաներ են , պատասխանեց մեծ մօրը : Կուապաշտները աղքատներու վրայ անանկ դժոս կերպարանք կ'ունենան : Կուապաշտները մեղի պէս Սուրբերու պատկերաց առջեւ խաչ կ'հանեն : Զեղի կ'ըսեմ , որ երէկ , երբ դուք ծնկան վրայ եկաք Աստուծոյ փառք տալու համար , և եռ երբ Աստուծածանայ պատկերին առջեւ փունջը կախեցի , տեսայ որ զլուխնին աղօթելու պէս ծուեցին , կուրծքերնուն վրայ խաչկնքեցին , և մինչեւ անդամ երիտասարդոյնին աչաց մէջ արցոնքի մը փայտ էլլը և ձեռքին վրայ իշնալը տեսայ :

« Ծովուն ջուրին մէկ կաթիլն էր այն որ մազերէն կ'իմար , կրկնեց խստիւ պատաւ կինը » :

« Եւ ես կ'ըսեմ որ արցունք մ'էր , յաւելցոց Կրացիշ էլլա բարկանալով : Ծովեղը մինչեւ հոս հասնելնին , հովը բաւական տաեն ունեցած էր անոնց մազերը չորցնելու : Բայց հովը սիրու չըրցներ . ուրեմն կ'կրինեմ որ իրենց աչաց մէջ արցոնք կար :

Խմացանք որ տան մէջ ամենազօրաւոր պաշապանուհի մ'ունէնք , վասն զի մեծ մայրը պատասխան չ'տուաւ , և իր մրմրալը դադուցուց :

ՓԵ

Աճապարեցինք իջնել , որպէս զի մեր ընդունած հիւրընկալութեան համար խեղճ ընտանիքին շնորհակալ ըլլանք : Հոն գտանք ձկնորսը , պատաւ մայրը , ուրբան , Կրացիշ էլլան և փոքրիկ մասնուիները , որ ծովեղը իջնելու կ'օտարաստուէին առջի օրը ձըդուած նաւակը տեսնելու համար թէ անվտանգ մնացած էր , վասն զի ալէ կոծութիւնը դեռ կ'շարունակէր : Անոնց հետ մինք ալ իշանք , երկչու և զլուխնիս կախած այն հիւրերու նման որ ըն-

տանիքի մը զժբաղդութեան պատճառն են և անոր իրենց վրաց անեցած զգացմանցը վրայ վստահ չեն :

Զինորսը և իր կինը քանի մը քայլ մեղմէ յառաջ կ'քայլէ ինչ Կրացիշ էլլա , իր փոքրիկ եղայրներէ մէկուն ձեռքէն բռնած և միւսը թեփն վրայ առած , անոնց ետեկն կ'եթեար : Մենք ալ լուիկ անոնց կ'հետեւէինք : Սանդուղին վերջի ասաբձանին վրայ , ուր ժայռի մը ծայրը գեռ կ'արգիլէր մեղ խութերը տեսնել , վշտի աղաղակ մը լսեցինք , որ միաձայն ձինորսին և ամուսնոյն բերնէն կ'ելլէր : Մերկ թեկեր գէպ 'ի երկինք կ'վերցնէին , ձեռքերը կ'զալարէին յուսահատութեան ցնցիններու պէս , բռոռով Ճակատնին և աշերնին կ'կուփէին , և կ'փետէին իրենց սպիտակ վարսերը , զրա հողմը ժայռերուն վրայ կ'անհետէր :

Կրացիշ էլլա և պղտիկ տղաքները խմոյն իրենց ձայնը այս աղաղանիներու խառնեցին : Ամենքնին ալ խելազարներու պէս սամսգուղին վերջին ասաբձաններէն անցնելով , գէպ 'ի խութերը վաղեցին . յառաջացան մինչեւ փրփուրէ ծուպերու մէջ զորս աշազին ալեքները գէպ 'ի ցամաք կ'մղէին , և ինկան եղերքը ումանք ծնկան վրայ , միւսերը գլորած , պառաւ կինը երեսը ձեռաց մէջ և զլուխը խոնաւ աւազին վրայ :

Մենք , վերջին փոքրիկ ժայռին զլուխէն այս յուսահատական տեսարանը կ'զիտէինք , առանց յառաջանալու կամ ետքաշուլու ցյն ունենալու : « Աւակիլը ժայռին կապուած , բայց ետեկի կողմը խարիսխ չունենալուն զիշերը ալիքներէ տատանելով , զինքը պաշտպանող խութերէն կաոր կառա եղած էր : Խեղճ նաւակին կէսը գեռ պարանէն ժայռին կապուած էր , ուր առջի օրը զետեղած էինք : Տիսուր ձայնով մը կ'տատանէր կորսուող մարդերու մոնչիւնին պէս , որ կերկերեալ և յուսահատ հառաչով մը կ'մարի :

Աւակիլն միւս մասերը , խելը , կայմը , շրջանակը , նկարուած փայտերը , աւազին վրայ ասդիս անդին սիւսուած էին , կուրէ մը ետքը զայլերէ պատառուած դիմկներու անդամներու նման : Երբ եղերքը հասանք , ծեր ձկնորսը մէկ կտորէն միւսին վաղելու զբաղած էր : Կ'վերցնէր , ախուր աչով կ'նայէր , ետքը ուռ-

Հարցոցինք զերար թէ ի՞նչ բարի կամ չար պատահած էր մեր բաժանումէն ՚ի վեր : Աղքատ տունը երջանկութեան մէջ էր: Կատակը օրհնուած էր : Ուրկանները յաջող էին : Ուրար երբեք ոյսչափ առատ եղած չէր : Մեծ մայրը չէր բաւեր զրան առջե ժողովուրդին ձուկ ծախելէ . Պէտքինո մեծ և ուժեղ քան տարեկան նաւաստի մը կ'արժէր թէ և հազիւ տասն երկու տարեկան կար : Վերջապէս կրացիէլլա իր ընտանեաց խոնարհ վիճակէ շատ բարձր արհեստ կ'սորվէր : Իր ընդունած ուռչիկը բարձր էր համեմատելով իրեն պէս գեռահաս սոլջիան մը աշխատութեան . իր տաղանդով գեռ պիտի յառաջանար և կարող պիտի ըլլար պրզ տիկ երլարքը հաղուեցնելու, մնոցանելու և իրեն համար ալ օս ժիռ մը պատրաստելու, ենիւ այբելու պարէլու և կամէք համէիք :

Ասոնք իր ծննդաց խօսքերն էին : Բուստող էր, այսինքն բուստ աշխատել կ'սորվէր : Բուստին զործատունը և վաճառակամութիւն նը այն ատեն Խասալոյ քաղաքաց ծովելերեսայց արհեստին դլաւուոր հարսատութիւնը կ'կալմէին : Կրացիէլլայի կորուած մօր մէկ եղայրը Նարօլոյ ամենէ դլաւուոր բուստի զործատան զործաւորներու վերակացուն էր : Հարուստ իր վիճակին համար երկու սեռէ բազմաթիւ զործատունը վարելով որոնք չէին բաւեր բուլոր Խրոպից մասակարաբել զարդի այս առարկան : Մտածած էր իր քեռորդին, և քանի մ'օր առաջ եկած էր իր զործաւորաց կարդը դասել զան : Բուստը և զործիները բերելով իր խիստ

պարզ արհեստին առաջին գասերը տուած էր : Միւս զործաւորաները միատեղ զործատունը կ'աշխատէին :

Կրացիէլլա իր մեծ մօրը և ձկնորսին շարունակ բացակայութեան պատճառաւ տղոց միայն պահապան ըլլալով իր արհեստը տունը կ'զործածէր : Մօր եղայրը որ չէր կրնար շատ անդամ զալ, քանի մ'ատենէ ՚ի վեր իր անդրանիկ տղան կ'զրկէր : Կրացիէլլայի մօրեղօրորդին քասն տարեկան երիտասարդ մը, խոչեմ, խոնարհ, օրինաւոր, ընտիր զործաւոր մը, բայց պարզ մորով, հաշմատ և աղեղ ձևով մէկն էր : Երիկունը կու դար զործատան զոյտելէ ետքը, հօսպրոջ աղջկան աշխատութիւնը քննելու, զործիներու զործածութիւնը կատարելազործելու և ընթերցանութեան, զրի և թուաբանութեան առաջին դասերը աւանդելու :

«Յուսանք, ըստա ինձ կամաց մը մեծ մայրը, մինչեւ Կրացիէլլա աչերը զարձացած էր, թէ ասիկա երկուքին ալ շահաւոր պիտի ըլլայ և թէ վարպետը նշանածին ծառան պիտի ըլլայ » :

«Կայեցայ թէ պատա կնոջ մոքին մէջ իր թուին համար հպարտութեան և փառափիրութեան զաղափար մը կար : Բայց Կրացիէլլա ամենեին ծանօթ չէր ասոնց :

Ժ

Մանկամարդ աղջիկը ձեռքէս րոնելով սենեակը տարաւ զիս իր արդէն զործած և յղկած բուստի փոքրիկ զործերը ցոյցը նըլու համար : Ասոնք մաքուր կերպով անկողնոցն ուսքին տակ ստուար թլթերու վրայ բամբակի երեսը շարուած էին : Ուղեց կտոր մ'իմ առջև ձեակերպել : Ես ոսքին ծայրովը պղտիկ Ճառ խարակին անիւը կ'զարձնէի, մինչդեռ ինք բոլորակ սղոցին կ'ներկայացնէր կարմիր բուստին կտորը որ կթանելով կ'կտրէր : Ետքը այս կտորները մատերուն ծայրովը բռնելով կ'բոլորցնէր յեսանաբարին դէմ մաշեցնելով : Վարդաղոյն փոշին իր ձեռքերը կը պատեր, և երբեմն մինչեւ երեսը թուալով այտերը և շորթերը

Քքաղցրացնէր թեթև մնդոյրով մը՝ որ իր աչերը առելի կապոյտ եւ առելի փայլուն կ'երեցնէր։ Աերջը խնդալով սրբուեցաւ, և իր խարսხաշ մազերը թոթուեց որու փոշին զիս ալ պատեց։

«Այսպէս չէ, ըստ, աղէկ վիճակ մը չէ ինծի պէս ծոյլու աղջկան մը համար։ Ամէն բան ծովու կ'պարտաւորինք մեծ հօրմ նաւակէն սկսելով մինչև կերած հացերնիս, այս մանեակներս և օղերս որոնցմով թերևս օր մը պիտի զարդարուիմ երբ որ շատ մը յղկեմ և ձեացնեմ ինձմէ աւելի հարուստ և առելի դեղեացիներու համար ։»

Առաւոալ այսպէս անցաւ խօսակցելով, խեղկատակելով և աշախատելով առանց երթալու դադարիան ունենալու։ Աւսօր ատեն ընտանիքաց ձաշին մասնակից եղայ։ Արեք, բաց օդը, մաքի դու հանակութիւնը, սեղանին պարկեցաւ թիւնը որ միայն հացեց, խորոված ձուկէ և շտեմարանին մէջ պահուած պատովներէ կը բաղկանար, ախորժակ և ոյժ տուին ինձ։ Աւսօրէն ետքը հօր օդնեցի տանիքին վրայ տարածուած հին ուռիանի մը ծակերը նոյ բողելու։

Կրացիէլլայի ոտքին ձայնը կ'լսէինք յետանաքարը դարձուց ցած ատեն նոյնպէս պառաւ մօր Ճախարակին աղմուկը և տղոց ձայնինը որ տան սեմին վրայ նարին ջններով կ'խարացին, քաղաց ցրապէս մեր աշխատութեան կ'ներդաշնակին։ Կրացիէլլա երաբեմակի գուրս կ'ելլէր պատշաճին վրայ մազերը թոթուելու համար, նայուածք մը, բարեկամական բառ մը, քմծիծաղ մը նոյն միջոցին կ'փոխանակէինք։ Հոգւոյս մինչև խորը երջանկութիւն կ'զգայի չեմ դիտեր ինչ բանի համար։ Վ'ուզէի հալուէի տունակին մէկին տեղը ըլլալ որ պարսէզին մէջ արմատայսած էին, կամ մողէսներէ մին, որ տանիքին վրայմբ քովը արևուն առջև կ'տաքնային և որոնք այս խեղճ ընտանեաց տան պատին ծակեացուն մէջ կ'ընակէին։

ԺԱ

Քայլ քանի օրը տարաժամէր՝ ոդիս և դէմքս կ'միժակնէին։ Աը

առիորէի մտածելով որ Ճամբորդի մենեակս ովիակ վերադառնամք կրացիէլլա իսկոյն իմացաւ ասիկա։ Գնաց մեծ մօրը ականջին քանի մը խօսք փսփսաց։

«Ինչո՞ւ այսպէս մեզի թողուլ, ըստ պառաւ կինը, իբր թէ իր զաւակներէ մէկուն կ'խօսէր։ Բրոսիտա միատեղ աղէկ չէ ի՞նք։ Կարօլիոյ մէջ նոյնը չե՞նք կրնար ըլլալ։ Կ'նմանիք մայրը կուրուսուլ թուչունի մը որ բոլը բոյներու բոլորտիքը ըշիլով կը դառնայ։ Եկէք մերը բնակելու, եթէ ձեզի պէս պարոնի մը համար յարմար կ'զատէք։ Տոնը երեք սենեակ ունի միայն, բայց ուէրինո նաւակին մէջ կ'պառիկ։ Կրացիէլլայի համար տղոց սենեակը կրնայ բաւել միայն թէ ցորեիները ձեր պառկածին մէջ աշխատի։ Առէք անորը, և մեր քով սպասեցէք ձեր բարեկամին վերագարձին, վասն զի ձեզի պէս բարի և տրաում երիտասարդի մը Կարօլիոյ փողոցներու մէջ առանձին մնալը ցաւ կ'պատճառէ մտածողին ։»

Ձկնորսը, Ուէրինօն, պղտիկ տղաք անդամ, որոնք արդէն օտարականը կ'սիրէին, բարի կնոջ առաջարկութեան վրայ ուրախացան։ Ամէնքնին ալ սաստիկ պղտեցին որ անոր ինդիրն ընդունիմ։ Կրացիէլլա բան մը չըստ, բայց կ'սպասէր յայտնի անձկութեամբ մը համակուած և կերծ անմտադրութեամբ թէ ի՞նչ պիտի պատասխանէի ծնողացը մախանձանքին։ Գողգոջուն և ակամայ շարժումով ոտքը կ'արնէր այն ամէն պատճառներու համար՝ զոր չընդունելու համար կ'յայտնէի։

Աերջը աչերս իր վրայ յարեցի։ Տեսայ թէ աչերուն սպիտակը սովորականէ աւելի խօսաւ և փայլուն էր և որ մատերով կ'ձմէր և մի առ մի կ'փետտէր շահասպամի մը տերեւները որ պատշգամին վրայ հողէ ամանի մը մէջ կ'ծաղկէր։ Այս նշանը երկար ճառերէ աւելի աղէկ հասկցայ։ Ընդունեցի ինձ նուիրուած ընկերական կեանքը։ Կրացիէլլա ձեռքերը զարկաւ և ուրախութեամբ վաղելով առանց ետին գառնալու իր սենեակը ցատկեց իբր թէ խօսքս իսկոյն կատարելու ետ առնելու ժամանակ չէր թողուց ինձ։

J.F.

Նրայի ելլա ՈՒ բրինօն կանչեց : Վայրիկենի մը մէջ ինք և եղա
բայրը տղզ սենեկին մէջ տարին իր անկողինը, խեղձ կահ կա-
րասին, ներկուած տախտակէ շը ջապառած իր սղղտիկ հայելն ,
սրինձէ կանթեղը, Աստուածածնայ երկու երեք պատկերները որ
գնդասեղներով փակած պատէն կ'կախուէին, սեղանը և պղտիկ
Ճախարակը որով բուստը կ'բանէր : Զբհորէն ջուր քաշեցին և
ձեռքով յատակին վրայ սրսկելով, աղէկ մը պատերուն և քա-
րին վրայի բուստի փոշին աւլեցին . տանիքին վրայէ ընտրելով
պատուհանին մէջ զրին բալասանի և անանուխի երկու ամենէ-
կանաչ և ամենէ անուշանութ թաղանքերը : ՈՒ բրինօ եթէ նոյն
դիշերը իր նշանածը հօրը առնը բերէր աւելի խնամքով չէին
կրնար պատրաստել և մաքրել հարամնեկան սենեակը : Ես ալ
խնդալով այս խալին կ'օգնէի իրենց :

Նըրք ամէն ինչ պատրաստ եղաւ, ովք բրո և ձկնօրսը հետա
տարի, զնելու և բերելու համար այլ և այլ կահ կարասին ու-
րոնց պէտք անէի : Երկաթէ փոքրիկ կատարեալ անկողին մը,
ձերմակ տախտակի սեղան մը, եղէջէ երկու աթոռ, պղնձէ պղզ-
տիկ կրակարան մը ուր տաքնալու համար ձմեռ զիշերներ ձէթի
կորիզները կ'այրեն . միւս ամէնը կ'սպառունակէր սպայուսակս զոր
խցիկէս բերելու մարդ զրկեցի : Ձէի ուղեր այս երջանիկ կեսակի-
դիշեր մը կորուսէլ զօր ընասնիք մը կ'չորչէր ինձ : «Կոյն իրի-
կունը իմ՝ նոր քնակարանս պառկեցայ : Արթնցայ ծիծառներու
զուարթ՝ ձայնէնորոնք պատուհանին կրարուած ապակիէն սենեակս
կ'մանեին, նոյնակս կրացիկ լլայի ձայնէն որ քովին սենեակը կ'եր-
գէք, իր երգը ճախտարակին ներդաշնակ շարժումին հետ միացնե-
լով :

۱۹۴

Պատմ.Հանը բացի , որ ձկնորսներու և լուսարաբներու փոք-

բրկ սպառտէ զներու վրայ կ'անցէք, որոնք Քօղլիլիքի լեռան ժայռին և Մարձելինայի հրապարակին մէջ տարածուած են:

Քանի մը սկ քարերու կտրներ մինչև այս պարտէ զներու մէջ տան մօտ գլորած էին : Խոշը թզնիներ, որ կիսով ծոռած կը բումնէին այս ժայռերու տակ, իրենց խոտորնակ և ձերմակ ձիւղերով կ'ըսնէին, և լայն ու անշարժ տերեւներով կ'ծածկին զանոնք : Տան այս կողմէ միայն կ'տեսնաւէր աղքատ ժողովրդեան պարտէ զները, քանի մը լայն անփուլ ջրհարները՝ զօրս էշ մը կը դարձնէ տամիթի փառերը պղտիկ կալամիները և շողջամիները ջրելու համար, կիներ կ'տեսնուին հան որ լաթ կ'շորցնեն նարնջենիներու կապուած չտաններու վրայ : Նակ շապիկով պղտիկ աղաքներ խոռոն լցուած են որ կ'խաղան կամ կու լսն սղարտէ դին մէջ սփոռուած երկու կամ երեք սպիտակ տուներուն տանիքներու վրայ :

Սեծ քաղաքի մը արուարձաններու այս սահմանաւոր, չսասարակ և մթին տեսաբանը սպանչէլի երեցաւ ինձ, բաղդատելով զայն բարձր շէնքերու, փողցներու խորութեան և աղմկալի բազմութեան հետ ուրիշ մեկնած էի: Մաքրուր օդ կ'շնչէի մարդկանին օդին փոշին, կրակին և շովիին տեղէ: Ա'լսէի էշերուն զւալը, աբաղաղին երգը, տերևներուն շշնչինը և ծովուն փոփոխակի չեծեծելը, կատքերու թաւալման, մողովրդեան սուր ձայներու, և այն կծու աղմուկին անդադար որսաման տեղ որ մեծ քաղաքաց փողոցներու մէջ ականջին միջոց մը և մոտածումին հանդարս տութիւն մը չեն թողուր:

Զէի կարող անկողնէս ելլիւ ուր քաղցրապէս կ'վայելէի այս
արեւը, զեղջկական ձայները, թռչուններուն թռչիլը, մտածու-
մին դրեթէ անշխալթ հանգիստը : Ետքը պատերուն մերկութիւնը,
սենեակին սլարապը, կարասեաց հեռաւորութիւնը գիտելով կ'ու-
ժախանայի մոտածելով թէ զինէ այս աղքատ տունը զիս կ'սիրէր,
վասն զի չկայ զորդ մը, ոչ զարդարանք մը կամ ոչ մտաքս-
եայ վարագոյր մի որ քիչ մը բարեկամութիւն արմէ : Աշխարհ-
հիս բոլոր ուկին չգօրէր անտարբերներէ սրտի տրոփում մը և
նայուածքի մէջ սիրոյ կայծ մ'խալ զնել :

ԱԵՐ ՚Ի ՔՐՈՒՆ ՎԼԻՇԱԼԻՒՄ ՄԵՂ ԿՌՈՐՈԲԵՒՆ ՊԼԻՄ ՄԵՎԱԼԻԼ այս մտա-

ծումները . կ'զգայի առողջութեան և խաղաղութեան մէջ վերաս
ծնիլս : զիքքինօ ստէպ սենեակս կ'մտնէր հարցնելու համար թէ
բանի մը պէտք ունէի՞ : Անկողնիս վրայ հայ և խաղող բերաւ
զոր կ'ուտէի կտորները և փշրանքները ծիծառներու նետելով :
Գրեթէ կէսօր էր երբ անկողնէս ելայ : Արևոն ձառադայթները
սենեակս կ'թափանցէին աշնան քաղցր դաղջութեամբ : Զինորսին
և ամառնոյն հետ որոշեցի որ ամէն ամիս փոքրիկ թոշակ մը
տամ , խցիկս վարձուն և տան ծախքին նսպաստելու համար :
Խիստ քիչ էր , բայց այս աղնիւ անձերը շատ խոկ կ'սեպէին զայն:
Յայանի էր թէ ինձմէ վաստիկելու բաղձանքին տեղ կ'արտմին
որ իրենց աղքատութիւնը և կենցաղավարութեան սաստիկ պարա
կեշութիւնը չէին ներեր իրենց ձրի հիւրընկալութիւն մը նու իւ
րել որով աւելի հպարտամանալու կարող պիտի ըլլային :

Իրենց տան համար ամէն առաւոտ զնածնուն վրայ աւելցուա
յին երկու հաց , քիչ մը խորոված ձուկ կէսօրուան , կաթեղէն
կամ չոր պատղներ երեկոյեան և իւղ կանթեղիս համար , նոյն
պէս ածուխ ցուրա օրերու համար . այս էր ամէնը : Քանի մը
պինձէ գրամ , “Կարօլիոյ մէջ ժողովրդեան մանր ստակը , օրուան
ծախքիս կ'բաւէր : Երբէք աւելի լաւ զդայած չեմ թէ երջան
կութիւնը ո՛չչափ հեռի է շրայլութիւն , և թէ ո՛չչափ աւելի
գիւրաւ կրնանք ստանալ զայն պղնձէ գրամնլ մը քան թէ քամէ
մը ոսկիով , երբ զիանանք Աստուծոյ զայն պահած տեղը :

ԺԴ

Այսպէս ապրեցայ աշնան վերջին օրերը և ձմեռուան սկիզբը :
Կարօլիոյ մէջ այս ամիսներու պայծառութիւնը և յստակութիւնը
նախընթացներու հետ տարբերութիւնը չունին : Ոչ ինչ մեր կե-
նայ միօրինակ անգործութիւնը կ'վրդովէր : Նղանակին հովերու
յաճախութիւնն ծերունին և տղան ալ ծովու վրայ չէին արշա-
ւեր : Եղերբին երկայնութեանը վրայ կ'որսային , և իրենց ձուկերը
մայրէն ծախուելով իրենց սակաւագետ կեանքին լիուլի կ'բաւէին :

Արայիելլա իր արհեստին մէջ կ'յառաջանար . բուստ բանելէն
՚ի վեր վարած նստողական և խաղաղ կեանքով աւելի վարզա-
նալով զեղեցկութիւն կ'ստանար : Իր վարձը , զոր կիրակի օրեր
մօրեղայրը կ'բերէր , չէ թէ միայն իր պղտիկ եղարքը աւելի
մաքուր հաղու ենցնելու և գարոց զրկելու կ'ներէր , այլ և իր մեծ
մօրը և իրեն աւելի հարուստ և աւելի վայելուչ զգեստներ շնո
նելու որ այս կղզւոյն կանանց յատուկ է : Կարմիր մետաքսէ թաշ-
կինակներ զլինին ետևը ուսերուն վրայ երկայն եռանկիւնով կա-
խելու համար . առանց ներբանի արծաթեայ շիւղերով բանուած
կօշիկներ՝ որ միայն ոտքին մատերը կ'ծածկեն . սե և կանաչ զիւ
ծերով մետաքսեայ պատառէաններ . ասոնք կարերուն վրայ ժա-
պահնուած են և երկու քալերը կ'երերան . առջել ձեին նրուու
թիւնը և մանեակներէ զարդարուած զվին զիծերը կ'երևան . վեր-
ջապէս ուկիէ թելերով մարդարիսներով խառնուած լայն օղեր,
աստիք էին իրենց յատուկ զարդերը : Յաւնական կղզիներու աղ-
քատ կիները այս պաճուշանքը և զարդերը կ'գնեն : Զքառուու-
թիւնը չսակապէր զլիբենք երբէք աննոցմէ զրկուելու : Այն կլի-
մաներու մէջ ուր զեղեցկութեան զզացումը մեր երկրէն աւելի
սաստիկ է և ուր կեանքը միայն սէր է , զարդը շոայլութիւն չէ
կնոջ աչերուն . զրեթէ իր առաջին կամ միակ պիտոյքն է :

ԺԵ

Արայիելլա այսպէս հաղուած երբ կիրակի և տօն օրեր իր սե-
նեակէ սանիքին վրայ կ'ելլէր , խարսեաշ մազերուն մէջ քամի
մը նուռի կարմիր ծաղիկներ կամ վարդագոյն զափնիներ զրած .
Երբ մօտակայ մատուռին զանզակներու հնչիւնը մտիկ ընելով
կ'անցնէր , կ'գառնար պատուհանիս առջենէն , սիրամարդին արեւու
առջե ինքովինք հայելիի մէջ աեսնելուն պէտ . երբ թուլութեամբ
կ'քսէր նայելով բանուած կօշիկներուն մէջ զոցուած իր ոտները,
և յետոյ զլուկը կ'վերցնէր զղին սովորական այնպիսի շարժու-
մով մը՝ որ մետաքսէ թաշկինակը և մազերը ուսերուն վրայ տա-

տամնել կու տար . երբ կ'նշմարէք թէ կ'դիմէի զինքը , կ'շառաւ զնէր սակաւ . ինչ իրը թէ գեղեցիկ ըլլալու կ'ամշնար . վայրինանաներ կային ուր իր գեղեցիկութեան նոր պայծառութիւնը այնպէս կ'ազդէր ինձ որ կ'կարծէի թէ տուաջին անդամ կ'տեսնէի զինք և իմ իր հետ սովորական ընտանութիւնս աեսակ մը երկչուութեան և շւացումի կ'փոխուէր :

Բայց ինք այնչափ չէր ջանար շւացնել զիս և իր զարդի բնական զգացումը հապարաւթենէ և պչըանքէ այնչափ աղաս էր՝ որ սուրբ արարողութիւններէ ետք իսկոյն կ'աճասպարէր իր ծանը զարդերը հանելով վերասոին հաղնիլ իր հաստ կանաչ չուխայէ պարզ հագուստը , կարմիր և սեաւ դիմերով շրջապեսոը և ձերմակ տախտակէն սերբաններով մուհակները , որոնք բոլոր օրը տանիքին վրայ կ'հնչէին Արեւելքի զերիներուն հնչող կօշիկներուն սկէս :

Երբ իր բարեկամուհիները չ'զային զինք փնտուելու կամ իր մօրեպօրորդին եկեղեցի իրեն ընկերանար՝ շատ անդամ ես կ'առ ուաջնորդէի իրեն և սրատշամին աստիճաններու վրայ նստած կ'սպասէի իրեն : Վուրս ելած ատենը տեսակ մը սնճնական հպարտութեամբ , իրը թէ իմ քոյրս կամ նշանած ըլլար , կ'լսէի հիացման փսփսուքները զոր իր չորհալի կերպարանքը ընկերներուն և Մարգելինայի եղեցին երիտասարդ նաւաստիներու մէջ կ'զրուէր : Բայց ինք բան մը չէր լսեր , և բազին թեան մէջ միայն զիս տեսնելով , սանդուղին վերի առաջին աստիճանէն կը ծիծալէր , և համեստաբար աչքը գէպ ՚ի վար կ'իջնէր այն աստիճաններէ՝ որոնց վարը իրեն կ'սպասէի :

Այսպէս տօն օրերը առաւ և իրիկուն եկեղեցի կ'ասանէի զինք , իր միակ և բարեպաշտ զբոսանքն եր այս զոր կ'Ճամշնար և կ'սիւրէր : Կ'Համայի այն օրերը ըստ կարի հագուստու կղզւոյն երիտասարդ նաւաստիներուն նմանեցնել , որպէս զի ներկայութիւնս մէկը չ'զարմայնէր և ընկերակցած աղջկանս կամ եղայրը և կամ աղջականը կարծուէի :

Միւս օրերը դուրս չէր ելլեր : Կոկ ես կամաց կամաց ուսման

կեանքս և մենակեաց տովորութիւններս առած էի , բայց ՚ի կրացիկ լայի քաղցր բարեկամութենէ և իր ընտանիաց հետ յարաւերութեամբ :

Ամէն լեզուաց պատմալիքները և բանասանդները կ'կարդայի : Երբեմն կ'զրէի , կ'փորձէի կամ Խամլերէն կամ Գաղղիարէն ու տանաւոր կամ արձակ հօսել հողույն այն առաջին խանդը որ կարծեն սրտի վրայ կ'ծանրանայ եթէ խօսքը բայցարելով չմիշտարէ զայն :

Ա'երևի թէ խօսքը մարդուս միակ ճակատագլին է և սաեղջառած է իր սպոտը տալու համար : Մարդ կ'տահջողի մինչեւ որ ներսը զացացած գուրս համէ : Իր զրուած խօսքը հայելիի մը պէս է , որու պէտք ունի ինքնինք ճանչնալու և իր ապինելուն ասպահով ըլլալու համար : Քանի որ իր զրուածներու մէջ չտեսնէր զինք՝ չզգար որ ստուգիւ կ'ապրի : Միաքը մարմնոյ պէս իր չափահատութիւնը ունի :

Այն տարիերին մէջն էի՝ որ հոգին խօսքով մնամնելու և աշնելու պէտք ունի : Բայց ինչպէս կ'ըլլատահի միշտ , կարողութենէս առաջ բնապդումն կ'ծնէր : Հաղիւ թէ զրելու կ'սկսէի և ահա զործէս զժողութիւնով մէկ կողմը կ'նետէի : Նարուլիյ հովը և ծովուն ալիքները քանի՛ քանի՛ անդամ տարած և կլած են առաւտեան , զիշերային զացացանցս և մտածմանցս կարմները որ ցորեկը ինձմէ պատուելով առանց զըդշումի հեռի կ'նետուէին :

ԺԶ

Երբեմն Կրացիկ լլա սովորականէ աւելի զիս զոցուած և ըսիկ տեսնելով , ծածուկ սենեակս կ'մանէր զիս ընթերցանութենէս և զբաղումներէս կորպելու համար : Անձայն աթոռիս ետևէն կ'յառաջանար , ուսերուս վրայէն կ'բարձրանար սորին մատերուն վրայ կանգուն զիտելու համար , առանց հասկնալու ինչ որ կ'կարդայի և կ'զրէի . ետքը արադ շարժումով մը զիրքս կ'վերցնէր և զրիչ

մատերէս կ'յափշտակէր փախչելով։ Տանիքին վրայ կ'չալածէի զինք, կ'սրդողէի քիչ մը . կ'խնդար։ Աներէի բայց մօր մը նման խիստ կ'յանդիմանէր զիս։

« Այսօր ի՞նչ կ'խօսի ձեր աչերուն այդ երկար դիրքը, կ'մըր մուար կէս Շշմարիս և կէս կատակ անհամբերութեամբ։ Միթէ այդ սեաւ տողերը հին տղեղ թղթին վրայ ձեզ խօսելէ երբէք պիտի չգաղղրին։ Միթէ բոլոր կիրակիները և տարւոյն բոլոր զիւշերները պատմելու համար բաւական պատմութիւն չէք դիտեր ինչպէս որ Բրոսիտասի մէջ պատմուելով զիս լայսուցին։ Եւ ուրու կ'զրէք բոլոր զիշերը այն երկար նամակները՝ զօրս առաւօտուն ծովալ հովին կ'նետէք։ Ձէք զիտեր թէ զէշ կ'ընէք, և բոլորովին զանաստ ու որ և է բանի անմտադիր կ'ըլլաք երբ այն չափ երկար ատեն զրէք կամ կարգաք։ Միթէ առելի քաղցր չէ ինձ հետ խօսիլը որ կ'լսեմ ձեզի, քան թէ ամբողջ օրեր այն մեռեալներու կամ այն ստուերներու հետ որ ձեզի միտ չեն դներ։ Աստուած իմ, ինչո՞ւ այն թուղթի թերթերուն չափ խելք չունենայի։ Բոլոր օրը պիտի խօսէի ձեր հետ, ինչ որ հարցնէիք պիտի պատասխանէի, և պէտք պիտի չունենայիք ձեր աչերը յոդնեցնել և կանթեղին բոլոր իւղը սպառել»։

Այն ատեն զիրքս և զրիշներս կ'պահէր։ «Կաւարարի հաղուստս և դլամարկս կ'բերէր։ Կ'ստիպէր զիս դուրս ելլել զրօննելու համար։ Կ'հնազանդէի իրեն մրմուալով բայց նաև սիրելով զինք։

ԳԼՈՒԽ ԶՈՐՈՌՈՇ

Ա.

Քաղղքին մէջէ դէպ ՚ի ծովեղըն ու զիւղը երկար պտոյտները ընելու կ'երթայի. բայց այս առանձին պտոյտները նարօլի վեարագրձած ժամանակիս առջի օրերուն պէս տիտոր չէին։ Քաղղքապէս կ'վայելէի քաղաքին, եղերին, երկնից և ջուրերու տեսարանները։ Առանձնութեան վայրկենական զզացումը չէր ընկածեր զիս, այլ սրտիս և մտածմանց զօրութիւնները կ'կեղբանացին։ Գիտէի թէ բարեկամաց աչեր և մտածումներ այն ամբոխին կամ անազատներուն մէջ ինձ կ'հետեւէին և թէ վերադարձիս զիս սիրող սրտերէ կ'սպասուէի։

Գառաւ կնոջ մէկնութեան համեմատ, օտար բայներու շուրջը պատացով թուչունը չէի, այլ կ'նմանէի այն թուչունին որ զինք պահող բոյնէն հեռանալ կ'փորձէ բայց ետ դառնալու համբան պէ զիտէ։ Բայցակայ բարեկամիս վրայ ունեցած մէրս Կրացիկէլացիս վրայ դարձած էր։ Այս զզացումը ինձ անոր կապողըն առելի սաստիկ, առելի զօրաւոր և առելի քաղցր բան մ'ունէր։ Ալ թուէր ինձ թէ մին կ'սպարտաւորէի սովորութեան և գէպքերու, իսկ միւսը կ'նկատէի իրը ինձմէ ծնած մը զոր իմ անձնական ընարութեամբս վաստկած էի։

Ասիկա սէր չէր, վասն զի անոր ոչ խուզութիւնը, ոչ նաև խանձը և ոչ տոփալի զզացումը տնէի, այլ սրտի քաղցը համազարաւթիւն մ'էր այն, հողւոյն և զզայութեանց թեթև տենդին տեղ։ Զէի մոռածէր ոչ ուրիշ կերպով սիրել, և ոչ առելի սիրուիլ։ Զէի զիտեր թէ ընկեր մը, բարեկամ մը, քո՞ր մը, կամ ուրիշ բան մ'էր նա ինձի համար։ կ'զզայի միայն թէ ես երջանիկ էի իր հետ և իսք երջանիկ ինձ հետ։

Ուրիշ կերպ որ և է բանի մը չէի բաղձար։ Զէի այն տարիս քին մէջ ուր զզացածնին կ'քննեն որպէս զի երջանիտ թեան մնա-

որի բայցստրութիւն մը տան : Աքաւէր ինձ խաղաղ, խանդակալի և երջանիկ ըլլալ առանց դիտնալու թէ ինչով և ինչո՞ւ համար : Ընկերական կեանփը, երկուքի մտածումը, ամէն օր մեր անմեղ և քաղցր ընտանութիւնը կ'աւելցնէին մեր մէջ : Ինք իր թոյլ տուութեան մէջ այնչափ անարատ էր որչափ ես համդարտ անշ հոգութեանս մէջ էի :



Երեք ամսէ՝ ի վեր էր որ նոյն ընտանիքին մէջն էի, նոյն տունը կ'ընակէի, իր մտածումն կ'ամսնակցէի, Կրացիելսա այնշափ սովորած էր իր սրտէ անբաժանելի կարծելու զիս որ ինք ալ չէր զգար թէ ինչ աղղեցութիւն ունէի ես իր վրայ : Ինծի հետ չընէր այն երկչուութիւնը, զգուշութիւնները և ամօթախածութիւնը՝ որ աղջկան մը և երիտասարդ մարդու մը տեսութեանց մէջ կ'մտնեն և որոնք շատ անդամ սիրոյ ծնաւնդ կու տան այն զգուշութիւններով զորս անորմէ սպահապահուելու համար կ'ընեն : Զէր երկմտեր և ես հազիւ կ'տարակուսէի թէ նոր արեւներու տուջն հիմա բացուած և կանխահաս հաստանութեան բոլոր սրայծաւութեան մէջ այս մանկային մաքուր շնորհքը, իր սրարդ զեղեցիութեամբ իշխանութիւն մը իրեն, վլայլում մը ամենու և վլտանդ մը ինծի համար կ'ըլլար : Երբէք հոգ չէր ըներ իմ աշչայս տուջն պահուելու կամ զարդարուելու . չէր մտածեր այն ասսիճան որչափ քոյր մը շնորհէր թէ զեղեցիկ կամ տղեղ պիտի երսի իր եղաօր : Շատ անդամ չէր զգուշանար զոյելու իր մերկ ոտքերը երբ աւտու իր սղոտիկ եղբարքը տանիքին վրայ աւրեւ առջն կ'հաղուեցնէր կամ իր մեծ մօրը կ'օգնէր ինկած չոր տերեները աւելու : Ամէն ժամ միշտ բաց սենեակս կ'մանէր և Պէրքինյի շափ անմեղութեամբ անկողնյս ոտքի աթոռին վրայ կ'հստէր :

Ես անդամ անձրւու օրերը ամբողջ ժամեր անոր հետ առանձին կ'անցընէի քովի սենեկին մէջ ուր պղտիկ տղոց հետ կ'պատ-

կէր և ուր բուստի կ'աշխատէր : Խօսակցելով և խաղալով իր արհեստին կ'օգնէի զոր կ'սորվեցնէր ինձ : Կուազ չարպիկ բայց անորմէ աւելի ուժեղ, կտորները մանրելու աւելի կ'յաջողէի : Այսպէս կրկին զործ կ'ընէինք, և մէկ օրուան մէջ երկու կը շահէր :

Ըստ հակառակը իրիկունը երբ տղաքը և ընտանիքը կ'նայի ին, ինք աշակերտ կ'ըլլար և ես գասատու : Կարդալ և զրել կ'սորվեցնէի, զիրքերու վրայ զիրքերը կապել տալով և ձեռքք բրունելով սրպէս զի զանոնք զրել սորվի : Մօրեղաօրորդին չկրնաւլով ամէն օր զալ ես անոր տեղը կ'բռնէի : Կամ այս երիտասարդը տղեղ և կաղ ըլլալոն համար, թէև քաղցր, համբեարող և ծանրաբարոյ էր, իր հօրաքրոջ աղջկան այնչափ հրապոյ և ակնածութիւն չէր ապգեր, կամ իր գասերու ատեն խիստ մնմտալիր ըլլալոն խիստ նուազ յառաջաղիմութիւն կ'ըլլար անոր քան թէ ինծի հետ : Երեկոյեան կէսը ուսման տեղ կատակելով, ինզալով և մանկանց զամտարակութիւնը ձեացնելով կ'անցընէին : Խեղճ երիտասարդը իր աշակերտէ յափշտակուած ըլլալոն խիստ երկչու էր զանիկա յանդիմանելու : Ինչ որ Կրացիէլսա փափաքէր՝ կ'կատարէր օրպէս զի աղջկան զեղեցիկ յօնքերը գմկամակութեան կնճիռու մը չառնէին և շորթերը փոքրիկ ծամածութիւն մը չընէին : Շատ անդամ կարգալու սահմանուած ժամը բուստի կտորները մաքրելով, կամ մեծ մօր աղեկատին տախտակին վրայ բուրդի կարծերը փաթաթելով կամ Պէրքօյի ուռկանին ծակերը նորսուելով կ'անցնէր : Ամէն բանով զոհ կ'ըլլար, միայն թէ իր մեկած ատենը կրացիէլսա հաճութեամբ քմծիծաւ զեր, և այնպիսի շշառով ապրիօս ըսէր որ նորէն ունեանունիւն կ'նշանակէր :



Ըստ հակառակը երբ ինծի հետ ըլլար դասը կարեւոր կ'ըլլար : Շատ անդամ կ'երկարէր մինչեւ որ մեր աւելու քունէ կ'ծանրանային : Իր կախած զլիկ, ծուած վլիկ, և զիրքին ու կերպարան-

քին մտաղիր անշարժութենէ կ'տեսնուէր թէ խեղչ աղջիկը յահ
ջոլու համար բոլոր ճիղը կ'թափէր : Արմուկը ուսիս վրայ կը
կոթնէր զրիխն մէջ կարգալու համար ուր մատս տաղը կ'գծէր
և արտասանելու բառը կ'ցոյնէր : Երբ կ'գրէր մատերը ձեռքիս
մէջ կ'բռնէի զրիչը կիսովին առաջնորդելու համար :

Եթէ սիսալ մ'ընէր խիստ և բարիցայտ կերպով կ'յանդիմա-
նէի զինք . չէր պատասխանէր և միայն ինքզինքին հետ կ'բար-
կանար : Երբեմն լալու պատրաստ կ'տեսնէի , այն ատեն ձայնս
կ'քաղցրացնէի և վերստին սկսելու կ'քաջալերէի : Եթէ ընդ հա-
կառակը աղէկ կարգար և զրէր կ'տեսնուէր թէ ինքնին ծափա-
հարութեանն մէջ իր վարձատրութիւնը կ'փնտուէր . հպարտ եւ-
րելով աւելի ինձ տուած հաճութեան քան թէ իր յաջողու-
թեան պղտիկ յաղթանակին վրայ , կարմիրով առ իս կ'դառնար
հակախն վրայ և աչայ մէջ յայտնի ուրախութեան նշոյներով :
Կ'վարձատրէի զինք քանի մ'երես Պօղ և Վիրդինէ կարգալով
զոր ամենէ աւելի կ'ընտրէր , կամ Թամօի քանի մը գեղեցիկ ու-
տանաւուները , ուր հովիներու դիւղային կեանքը կ'նկարազրէ
որոնց մէջ Հէրմինի կ'բնակի , կամ երբ երկու սիրահարաց ցա-
ւերը և յուսահասութիւնը կ'երզէ : Այս ատզերուն դաշնակը
կարգալ գաղեցնելէ շատ ետք լալ և երազել կու տար իրեն :
Բանաստեղծութիւնը սիրոյ ծնունդ տալու վրայ եղող երիտա-
սարդ սրտի մէջ միայն ամենէ մեծ և ամենէ երկարամեա արձա-
գանդը կ'ընէ : Կարծես թէ ամեն տոփանաց նախազայումն է
այն : Աւելի ետքը , յիշաստիկ և սոյս կ'նմանի : Այսպէս կենաց
երկու ներհակ ատենները կ'տիրեցնէ . երիտասարդութեան մէջ
յոյսերով , և ծերութեան մէջ զղումներով :

¶

Կանթեղին լրյուղ և մեր ուսից տակ ձեթի կրակին զաղչ տա-
քութեամբ այս երկար և քաղցր դիշերներու զուարժալի ընտա-
նութիւնը մեր մէջ տղայական մաերմութիւններէ զատ երբէք ու-

րիշ մասծութեր և սարսկը փափաքներ չէին պատճառեր : Պաշտ-
ապանուած էինք , ես զրեթէ ցորա անհողութեամբս և ինք իր
անբծութեամբն ու անարատութեամբ : Միացած ատենուս արէս
հանգարտ կ'բաժնուէինք , և այս երկար խօսակցութիւններէ վայր-
կեան մ'ետքը նոյն տան մէջ կ'ննջէինք , քանի մը քայլ միայն
իրարմէ հեռու , երկու այնպիսի մանկանց նման որ իրիկունը միա-
տեղ կ'խաղան և իրենց պարզ զասանքէ անդին բան մը չեն մտա-
ծեր : Զգացմանց այս անդորրութիւնը՝ որ անցայտ կերպով ինք-
նին կ'սնանին , տարիներ պիտի տեսէր եթէ չպատահէր զիարաւած
մ'որ ամէն ինչ վեր ՚ի վայր զըջեց և յայտնեց մեր բարեկամու-
թեան ինչ ըլլալը որ այնչափ երջանիկ ըլլալու կ'բաւէր մել :

¶

Զէքօ , այս էր Կրացիկլայի մօրեղպօրորդւոյն անունը , կ'շա-
րունակէր ձմեռ զիշերները որ ըստ օրէ աւելի յաճախել ձմուր-
սին տունը : Թէ և գեռահաս աղջիկը ընարութեան նշան մը չէր
տար և միշտ անոր կատակներու սովորական առարկան մինչև
անդամ խաղալիկը կ'ըլլար , սակայն խեղչ Զէքօ այնչափ քաղ-
ցրաբարոյ և խոնարհ էր անոր առջեւ որ Կրացիկլա կ'ստիպ-
ուէր անոր բարութիւններէ շարժիլ և երբեմն հաճութեամբ ծի-
ծաղիլ : Ասկիկա բաւական էր Զէքօի : Այն սիրող այլ տկար
բնութեանց տէր անձերէն էր որ սիրուելու համար ընական
յատկութիւններէ զրկուած ըլլալին զգալով , զոհ կ'ըլլան սիրել
առանց փոխակարձ պահանջելու և կ'զրչուին կամայ զերիներու
պէս եթէ ոչ երջանկութեամբ՝ դէթ ծառայութեամբ այն կնոջ
որու սիրու իրենց վրայ կ'իշխէ : Ասոնք սիրոյ մէջ ամենէ վեհ
ընութիւնները չեն բայց ամենէ զրաւոնները : Կ'զման անմաց վրայ
բայց նաև կ'զմային : Սիրել սիրուելու համար մարդկացին է .
բայց սիրել սիրուելու համար զրեթե հրեշտակային է :

¶

9

Ամսէ անշնորհ ձեերու մէջ իսկ, խեղճ Զեքօյի սիրոյ մէջ չըեշտակային բան մը կար ։ Այսպէս Կրացիելլայի կողմէ իր ներակայութեան առջև ինձ ցոյցուած ընտանութիւններէ և համալրութենէ, խօսարհելէ կամ նախանձելէ շատ հեռի էր և կ'սիրէ՛ր զիս, վասն զի Կրացիելլա զիս կ'սիրէ՛ր ։ Իր հօրաքրոջ աղջկան բարեկամութեան մէջ տուաջնն կամ միտի տեղը չէր խնդրեր այլ երկրորդը կամ վերջննը ։ ասուլ ամէն ինչ կ'բաւէր երեն ։ Վայրէեան մը անորմէ հաւանուելու, հաճութեան նայուածք մը և նշան մը, կամ համակրական բառ մ'ընդունելու համար, պիտի գար իսկ Գաղղիոյ մէջէ զիս փնտուելու և տանելու անոր՝ որ իրմէ աւելի զիս կ'ընտրէր ։ Կարծեմ պիտի ատէր իսկ զիս եթէ անոր ցաւ պատճառէի ։

Իր սիրոյ պէս իր հսարտութիւնն ալ միայն անոր վրայ էր ։ Թէ և արտաքուստ այնչափ ցուրտ, բայց խոհուն, զգն և կանոնաւոր էր ինչպէս որ Աստուած և իր աղեղութիւնը զինք ըրած էին ։ Բնազդորէն թերես կ'դուշակէր թէ իր հօրաքրոջ աղջկան զգացմանց վրայ իշխանութիւնն մշտնջնաւոր պիտի չըլլար ։ Թէ որ և իցէ անհրաժեշտ դիպուած մը զմեղ պիտի բաժնէր ։ Թէ ես օտարական հեռաւոր երկրէ մը և այնպիսի վիճակէ և հարլատութենէ ըլլալով որ Քրօփտայի նաւարարի մը աղջկան հետ յայտնապէս հակաշիու էի ։ Թէ օր մը Կրացիելլայի և իմ մտերամութիւնն սկսածին պէտ պիտի կարուէր ։ Թէ այն ատեն միայնակ լքուած և յուսահաստ պիտի մնար առանց իրեն ։ Թէ այս յուսահատութիւնն անզամ անոր սիրուը պիտի խոնարհեցնէր և իրեն պիտի նուիրուէր վտաբեկ բայց ամբողջ ։ Ինք՝ միայն միաթարչի և բարեկամի սրացուօնը կրնար սրահանջել, բայց իր հայրը ուրիշ մտածում մ'ունէր ։

10

Հայրը՝ Զեքօյի Կրացիելլայի վրայ ունեցած սէրը ձանչնալով երբեմն երբեմն զան տեսնելու կու դար ։ Իր զեղեցկութեան և խոհեմութեան վրայ շարժած, իր արհեստին զործածութեան և ընթերցանութեան ու զրի մէջ ըրած արագ յառաջադիմութեանց վրայ սքանչացած, մտածելով նաև թէ բնական տգեղութիւնները պիտի չներէին Զեքօյի սրատշաճ և ընտանիքի խանդաղատանքէ տարբեր բանի անձկալ, որոշած էր իր որդին Կրացիելլայի հետ ամուսնացնել ։ Իր հարսաւթիւնը զործաւորի մը համար բաւական նշանաւոր, կ'ներէր իրեն կարծել թէ իր ինդիրը երախտիք մ'էր որու Անտրէա, իր կինը և աղջիկը պիտի չխորհէին իսկ ընդդիմանալ ։ Զեքօյի կամ խօսեցած ըլլալուն կամ իր մտածումը անորմէ պահելով յանկարծ իր սոտացած երջանկութեան վրայ զարմացնել ուզելով զայն՝ որոշեց երևան հանել իր նպատակը ։

11

Ծանոթեան նախընթաց օրը սովորականէ աւելի ուշ զայի ընտանեաց ընթրիքին մասնակցելու ։ Անտրէայի և կնոջ նեղացած կերպարանաց վրայ ցրատութիւն և խոսվութիւն մը տեսայ ։ Աչերս Կրացիելլայի վրայ վերցնելով դիտեցի թէ լացած էր ։ Իր երեսի վրայ յստակութիւնը և ուրախութիւնը այնչափ բնական էին որ տրամութեան այս մնավոր նշանը նիւթական քօղի մը պէտ կ'պատէր զինք ։ Պիտի ըստէր թէ իր մտածմանց և սրտին ստուերը երեսին վրայ տարածուած էր ։ Անշարժ և համբ մնացի չհամարածակելով խեղճ անձերը հարցափորձել և ոչ Կրացիելլայի հետ խօսիլ վախնալով որ ձայնին հնչիւնը միայն չվայթեցնէր սիրալ զար հաղիւ բռնելու կարող կ'երեւէր ։

Իր սովորութեան հակառակ ինձ չէր նայեր : Թոյլ ձեռքով մը չացի կտորները բերանը կ'տանէր , և տեսնուելու համար ուտել կ'կեղծէր . բայց չէր կրնար և հացը սեղանին տակը կ'նետէր և Ընթրիքը լմնալէ առաջ , լոիկ , տղաքը պատկեցնելու պատրուաշ կաւ ելու իրենց սենեակը տարաւ զանոնք , և հոն զոյտեցաւ ոչ ծնողաց և ոչ ինձ դիշեր բարի ըսելով և առանձին ժողով զմեզ :

Երբ գորս ելաւ , հօրը և մօրը հարցուցի թէ իրենց մասած մանց և զաւակնուն տրտմութեան պատճառը ի՞նչ էր ? Այն առ տես պատմեցին ինձ թէ ցորեկը Զեքոյի հայրը տուն եկած և իրենց աղջիկը իր աղուն ամուսնութեան համար խնդրած էր , թէ ասիկա մեծ երջանկութիւն մը և բաղդ մ'էր իրենց ընտանեաց համար , թէ Զեքո հարսութիւն պիտի ունենար , թէ Կրացիէլ լա՞ որ այնչափ բարեսիրտ էր , իր երկու պիտիկ եղանքը հետը առնելով զաւակներուն պէս պիտի մեծցնէր զանոնք , թէ իրենց ծերութեան օրերը այսպէս թշուառութեան դէմ առպահով պիտի ըլլային , թէ երախտապիտութեամբ այս ամուսնութեան հաւանած էին և Կրացիէլ լայի խօսեցած էին , թէ ան բան մը չպատասխանած էր անշուշտ աղջկան մ'երկչոտ թեամբ և համեստութեամբ . թէ իր ըրութիւնն ու արցունքները իր զարմանցան և սրտին յուշ ման պատճառաւ էին , թէ պիտի անցնէր այս ալ իրը ծաղկել մրայ եղած ձանձ մը , և թէ Զեքոյի հօր և իրենց մէջ որոշած էին նշանտուքը ։ Ծննդեան հանդէմներէ վերջ ընել :

Ու

Գեր կ'խօսէին անոնք մինչդեռ ես երկար ատենէ 'ի վեր չէր լսէր : Նըրէք չմտածած էի ինքնին Կրացիէլ լայի վրայ ունեցած դրացումն : Զգիտէի թէ ի՞նչպէս կ'սիրէի զինք , պարզ մասերմութիւն մ'էր և բարեկամութիւն մը , սէր , սովորութիւն թէ բոլոր ոյս զդացումներէ ամբողջութիւն մը որ իմ անոր վրայ ունեցած համակամ կ'կազմէր : Բայց մտածելով որ կենաց և սրտի այս քաղցր յարաբերութիւնները , որ ակամայ իմ և անոր մէջ հաս

տատուած էին , յանկարծ պիտի փոխուէին . Խորհելով որ պիտի կորովէին զայն ինձմէ ուրիշի տալու համար . թէ ընկերի և քրոջ տեղ , ինչպէս էր հիմա , օտարական և անտարբեր պիտի ըլլար ինձ , թէ հոն պիտի չըլլար , թէ ամէն ժամ պիտի չտեսնէի , թէ ինձի կանչող ձայնը պիտի չլոէի , թէ իր աշացը մէջ ալ պիտի չկարգայի յանկուցող և փափուկ լցատվ մը միշտ ինձ ուղղուած այն հաւադայիթը որ սիրտս կ'լուսաորէր մեղմի և մայրս ու քոյրերս յիշեցնել կու տար ինձ : Երբ կ'երեակայէի այն անշատումը և խորին զիշերը՝ որ շուրջս պիտի պատէր յանկարծ , հետեւալ օրը , որ իր ամուսինը ուրիշ տուն պիտի տանէր զայն , այն սենեակը ուր ալ պիտի չպատիկէի , իմն՝ ուր ալ պիտի չմըտնէր . այն սեղանը ուր ալ իր նատիլը պիտի չտեսնէի . այն տանիքը՝ ուր արթնյած ատենը իր մերկ սոքերու և ձայնին հնչինը պիտի չլոէի . այն եկեղեցիները՝ ուր կերակի օրեր պիտի չառաջնորդէի իրեն . այն նաւակը՝ ուր իր տեղը պարապ պիտի մնար և ուր միայն հոգին և ալեաց հետ պիտի խօսէի : Մեր անցեալ կենաց այս քաղցր սովորութեանց կերպարանքները , զորս կ'յիշէի և որբ յանկարծ կ'ցնովէին առանձնութեան և ոչնչութեան անդունին մէջ ձգելու համար զիս , այս ամէնը առաջն անդամ զդալ տուին ինձ թէ ի՞նչ էր այս աղջկան ընկերութիւնը ինձի համար և իմացուցին ինձ թէ ուր կամ բարեկամութիւն եղող զիս անոր կապու զդացումը կարծածէս աւելի զօրաւոր էր և իմ 'սարօլից մէջ վայրէնի կենաց վրայ ունեցած անձանօթ հրապոյր , ոչ ծովն էր , ոչ նաւակը , ոչ տան խոնարհ սենեակը , ոչ ձկնորսը , ոչ իր կինը , ոչ Պէքոն , ոչ տղաքը , այլ միայն մէկ անձ էր զայն աղդողը և այն անձը տունէն անհետանալով , ամէն ինչ պիտի անհետէր : Եթէ պակսէր ան իմ արդի կենաց մէջէ , ալ բան մը չկար : Զգայի այն շփոթ վայրկեանը՝ զոր երբէք խոս տովանած չէի և որ այնպէս հարուածեց զիս որ բոլոր սիրտս սարսոաց և փորձեցի սիրոյ մէկ անհունութիւնը անհուն տրտմութեամբ որու մէջ սիրտս զահալիմած զգաց :

Առութեամբ սենեակս մոայ : Բոլորովին հագուած անկողնիս վրայ նետուեցայ : Փորձեցի կարդալ, զրել, մտածել և ցրուել մոքի գմուար աշխատութեամբ մը սրտի խովով թիւնս : Ամէն ինչ անօգուտ եղաւ : Ներքին խուսվութիւնս այնչափ զօրաւոր էր որ երկու մոտածում չկրցայ ունենալ, և ոյժիս սպասիլը անդամ քունս չըերաւ : Երբէք Կրացիւլայի կերպարանքը այնչափ հրապուրիչ և հաստատ երեցած չէր աշացս առջն : Ավայելէի զան ամէն օր տեսնուած բանի մը սկսու, և որու արժէքը զայն կորսնցնելով միայն կ'հասկցուի : Մինչեւ այն օրը իր գեղեցկութիւնը անզամ բան մը չէր ինծի համար, անոր վրայ զդայածս բարեկամութեան աղղեցութեան հետ կ'իստունէի ինչպէս նաև իր կերպարանքը կը յայանէր : Զգիտէի թէ զդայմանցս մէջ զմայլում կար և ամենափր տուիփ մը իսկ չէի զուշակեր իր խանդաղաղատանայ մէջ :

Այս անգուն զիշերուան սրտիս երկար ընթացից մէջ անդամ չկրցայ աղէկ մէկնութիւն մը տալ այս ամենու վրայ : Թէ տըրտմութեանս և թէ զդայութեանցս մէջ ամէն ինչ խառն էր : Կը նմանէի այնպիսի մարդու մը՝ որ յանկարծ հարուածէ մը շփոթած զգիտէր տակաւին թէ որ կողմը կ'ցաւի, բայց ամէն կողմէ ցաւ կ'զդայ :

Տան մէջ ձայն ելելէ տուաջ անկողնէս ելայ : Զգիտեմ ինչ ընազդում մը կարձ միջոց մը հեռացնել կ'սափէր զիս, իբր թէ այս տեսակ ժամանակի մէջ կընար խովովել ներկայութիւնս այս ընտանեաց խորանը, որու հակասադիրը օտարականի մ'առ չեւ այս պէս կ'խովովէր :

Մեկնեցայ Պէրբօյի իմացնելով որ քանի մը օր պիտի չվերադառնամ : Պատահմամբ այն Ճամբան բոնեցի ուր առաջն քայլերո կ'տանէին : Նաբօլիոյ երկայն ծովելքը հետեւցայ Պէսինայի և Քօրթիչի կողմը և Վէսուֆի ստորոտը . առաջնորդներ առի Թօրուէտ Կրէքօի մէջ : Սան Սալվամօրէ Ճանարանին դրան առ ջեւ

քարի մը վրայ պառկեցայ այն առհմանը՝ ուր բնակուած բնուածինը կ'վերջանայ և կրակէ երկիրը կ'ակսի : Հրաբուխը քանի մը ատենէ ՚ի վեր եռացման մէջ էր, և ամէն բորբոքումին այն մոխրէ և քարերէ ամսերը կ'նետէք՝ որոնց զլորիլը զիշերները կ'լուէնք Ճանարանին տակ եղած լավայէ մայուն մէջ : Հոն առաջնորդներս մերժեցին աւելի հեռի ընկերանալ ինձ : Առանձին եւ լայ, գմւարաւ վերջնն կմոնիր հասայ ուղքերս և ձեռքերս խոթեցի թանձր և կիզող մոխրի մէջ որ մարդու բերին տակ կը փլէր : Հրաբուխը վայրկեան առ վայրկեան կ'զուար և կ'որոտար: Ճանացեալ և գեռ կարմիր քարերը ասդին անդին շուրջս կ'թրուչէին մոխրին մէջ մարելով : Բան մը չկասեցուց զիս : Բերանին մինչեւ վերջն ծայրը հասայ և նստայ : Նաբօլիոյ ծոցին, զեղին և հիսանալի քաղերին վրայ արեւուն ծագիլը տեսայ : Ցուրտ և անզգայ էի այն տեսարանէն որու վրայ զմայլելու կու զան հազար մղններէ այնչափ Ճամբորդներ : Այս ծովու եղբերու և արևէ զարնուած չէնքերուն անհուն լոյսին մէջ, միայն փոքրիկ սպիտակ կէտ մը կ'փնտուէի ծառերու մթին կանաչին մէջ Քօղելիքի բլրան ստորոտը ուր Անտրէայի խրձիթը կ'կարծէի նշմարել : Մարդս որչափ տարածութիւնը զիտէ և տեսնէ, բնութիւնը իրեն համար կ'բաղկանայ երկու կամ երեք զզալի կէտերէ ուր իր հողին կ'եղելիք : Կորզեցէք կեանքէ զձեղ սիրու սիրու, ինչ կը մնայ : Նոյնպէս է բնութիւնը : Անհետացուցէք այս վայրը կամ տունը զոր ձեր մտածումները կ'փնտեն կամ ձեր յիշառակները կ'բնակին, այն ատեն Ճշմարիս պարապ մ'է քնութիւնը ուր նայուածքը կ'խորածուցի առանց յատակ և հանդարտութիւն գտնելու : Պէտք է ուրեմն զարմանալ որ արարչութեան վամեմ տեւլու : Այս կը իրեն զի ամէն մէկը իրեն հետ իր նայուածքը կ'ատանի : Հողւյն վրայ եղած ամպը, հորիզոնի վրայ զմնօւած ամպէ մը աւելի կ'ծածկի : Կ'այլադոնէ երկիրը : Տեսարանը տեսարանին մէջն է : Փորձառու եղայ ասոր :

ԺԱ

Եմէն ինչ գիտեցի, բան մը չտեսայ: Ի զուր անդպայի մը պէս մինչեւ հրաբուխին խորը իշայ ցրացած լալաներու ծայրին կըռաթնելով: Ի զուր խորոնի ճեղքուածներէ անցայ ուսկից սոլցացող շողին և կայծերը կ'խեղդէին և կ'այրէին զիս: Պարապ տեղու բնուրեղացած ծծումքի և աղի ընդարձակ ձորերը կ'զիտէի որսնք կրակին շնչառութենէ գունաւորուած սասաւամանեաց կ'նմանէին: Վլանդին առ չեւ ալ զբայլման պէս ցուրտ մնացի: Ճադիս ուրիշ տեղ էր. 'ի զուր կ'ուղէի կանչել զան անկէ: Խրիկունը վերստին ճզնարանը իշայ: Առաջնորդներս ճամբեցի: Քօմբէխայի այդիներան մէջէ վերադարձայ: Ամբողջ օր մը անցուցի խորասուզած քաղքին անապատ փողոյները ժուռ զալով: Այս երկու հազար տարիէ վերջը բայցուած զերեզմանը լոյսին տալով իր փողոցները, յիշատակարանները և արուեստները, Աէտոֆի պէս անդպայ թողոց զիս: Այս մոխրին բոլոր հային այնչափ դարերէ՝ ի վեր Աստուծոյ հովէն աւլուած էր որ սրախ ալ չէր խօսեր: Այս պիսի անտարբերութեամբ կ'կոլսէի ոտիցս տակ իրենց քաղաքին այն փողոյներու մէջ մարգերու փոշին, որ կարծես թէ ծովէն դէպէ իր եղոքը մղուած պարապ խեցեմարթներու կյատե էին առ նոնք: Ժամանակը աշազին ծով մ'է, որ միւսին պէս մեր աւերակները երեան կ'հանէ: Զենք կընար ամենու վրայ ողբալ: Ամէն մարգու իր տրտմութիւնները և ամէն գալու իր կարեկցութիւնը բաւական են:

Քօմբէխայէ մեկնելով Փասմէլամարի և Սօրանիթի լեռանց անստառալց կիրճերու մէջ մտայ: Ճան ընակեցայ քանի մը օր դիւզէ դիւզ երթալով, և այծարածներէ լեռներու ամենէ նշանաւոր վայրերը առաջնորդուելով: Վայրեր դիտող նկարիչ մը կը կարծէին զիս, վասն զի երեմն երգեմն զծաղրութեան փոքրիկ տեսրի մը մէջ, զոր բարեկամն թողած էր, քանի մը զիտողութիւններ կ'զրէի: Բայց թափառական հողի մ'էի որ զիւղի մէջ

առդին անդին կ'շրջադպայէի օրերս անցընելու համար: Ամէն ինչ կ'պակսէր ինձ: Ես ալ ինքզինքիս կ'պակսէի:

Զիրցայ աւելի երկոր շարունակել: Երբ Ծննդեան տօները անցան և տարուան այն առաջին օրը, զոր մարդիկ տօն մը ըրած են, ժամանակը խիստ հիստ մը պէս զուարձութիւններով և պամիններով հրապարելու կակղեցնելու համար, աճապարեցի Կարութիւնը մոնիւ: Գիշերը հոն հասայ վարանելով, բաժնուած Արսացիւլան տեսնելու անհամբերութեան և ալ չտեսնելու սարսափին մէջ: Քոսն անդպամ կանի առի, Մարմելինայի մօտենալով նստակիներու ծայրը նստայ:

Տանէն քանի մը քայլ հեռի Պէրբօյի հանդպեցայ: Զիս տեսնելով ուրախութեան աղաղակ մը ձպեց, և սլոտիկ եղոր մը պէս վիզոց ցատկեց: Գիշէր իր նստակը տարաւ զիս և բացակայութեանս ատեն անցածները պատմեց:

Ամէն բան շատ փոխուած էր տան մէջ: Կրացիէլա մեկնելու ի վեր լալէ զալրած չէր: Ճաշի համար սեղման ալ նստած չէր: Բուստի չէր աշխատեր: Բալոր օրերը իր սենեկին մէջ զայտուած զինքը կանչեած ատենին չպատասխանելով և բոլոր դիշերները տանիքին վրայ ժուռ զալով կ'անցընէր: Կրացիները կ'ըսէին թէ խենթեցած է կար մելամաղածութեան մէջ ինկած է: Բայց ինք դիտէր թէ ստոյդ չէին այն խօսքերը:

Բոլոր չարփը, կ'ըսէր տղան, Զէքօյի նշանուելէն էր զոր նիք չէր սիրեր: Պէրբինօ ամէն ինչ տեսած և լսած էր: Զէքօյի հայրը ամէն օր միծ հօրը և մօրը պատասխանը առնելու կուգար: Այս վերջնեները չէին զալրեր ամէն օր կրացիէլան տանջել որպէս զի վերջապէս իր հաւանութիւնը տար: Զէր ուզեր ասոր վրայօք բան մը մոնիկ ընել. կ'ըսէր, « Աւելի Ճեսովա կ'փախչիմ»: « Ասրուելոյ կաթոլիկ ժողովրդեան մէջ այս խօսքը հետեւեալին հաւասար է. « Աւելի ուրացեալ կ'ըլլամ»: Անձնասպանութենէ աւելի միծ ոպառնալիք մ'է այս. Հողւոյն յափտենական անձնասպանութիւնը:

Անտրէա և իր կինը՝ որոնք Կրացիէլան կ'պաշտէին, թէ անոր ընդդիմութեան և թէ երջանկութեան հաստատութեան ան-

Հետիլը տեսնելով կ'յուսահատէին : Իրենց սպիտակ մազերուն վրայ կ'աղաչէին , իրենց ծերութեանը , թշուառութեանը և երկու տղայ ապագային վրայ կ'խօսէին իրեն : Այն ատեն Կրացիէլւլա կ'քաղցրանար : Աւելի համակրութեամբ կ'ընդունէր Զեքօն որ երբեմն երբեմն իրիկունը խոնարհաբար Կրացիէլւլայի սենեկին դուռը նստելու կու զար և պղտիկ տղոց հետ կ'խաղար : Քարի իրիկուն և միաս բարեա . կ'ըսէր զրան մէջէն , բայց հաղիւ երբեմն բառ մը պատասխան կ'ընդունէր : Դժգոհ բայց համբերող կ'մեկնէր և հետևեալ օբը միշտ անփոփոխ կ'զար : « Քոյր իրաւունք չոնի , կ'ըսէր Պէրբինո : Զեքօն շատ կ'սիրէ զինք և իիստ բարի է : Շատ երջանիկ պիտի ըլլայ եթէ չմերժէ : Վերջապէս այս իրիկուն , յաւելցուց , մեծ հօրս և մեծ մօրս թախանձանքներէ և Զեքօնի արտասառքներէ յազթուելով դուռը քիչ մը բացայաւ և ձեռքը երկնցուց . Զեքօն մատնի մը անցուց մատին և խոստացաւ վաղը նշանուիլ : Բայց ով զիտէ որ վաղը նոր կամք մը պիտի չունենայ : Ան որ այնչափ քաղցր և ուրախ էր , Աստուած իմ , ո՞րչափ փոխուած է : Պիտի չկրնափ ճանչնալ զինք . . . » :

Ժ.Բ

Պէրբինո նաւակին մէջ պառկեցաւ . իսկ ես անցածները իմասնալով անորմէ , տուն մտայ :

Անտրէա և իր կինը տանիքին վրայ առանձին էին : Բարեկամութեամբ ընդունեցան զիս , և երկար բացակայութեանս վրայ փափուկ յանդիմանութիւններ ըրին : Կրացիէլւլայի վրայ ունեցած իւրենց յաւերը և յոսերը պատմեցին : « Եթէ հոս ըլլայիք , ըստու ինձ Անտրէա , դուք որ այնչափ կ'սիրուիք իրմէ և որ երբէք ոչ ըստած չէ ձեզի , շատ պիտի օդնէ իք մեզ : Վերստին զձեղ տեսնելով ո՞րչափ գոհ ենք : Վաղը նշանառքը պիտի ըլլայ , ձեր ներկայութիւնը միշտ երջանիկ ըրած է զմեղ » :

Խեղձ մարդերու այս խօսքերուն վրայ բոլոր մարմոցս մէջ ստրառուի մը շրջիլը զդացի + սերբին բան մը կ'զացնէր ինձ որ

իրենց գժբաղզութեան պատճառ ես պիտի ըլլայի : Կ'բաղձայի և կ'գուլայի Կրացիէլւլան տեսնել : Բարձր ձայնով իր ծնողացը խօսիլ սկսայ , անցայ և գարձայ գրան առջեւն այնպիսի մէկու մը պէս որ չողէր կանչել բայց կ'ուղէ լսուիլ : Խուլ և համբ կեցաց և չերեցաւ : Սենեակս մոնելով պառկեցայ : Վերջապէս միտքս պատեց տեսակ մը հանդարտութիւն որ միշտ խռովեալ հոգւոյ մէջ տարակուսի վերջանալին և որ և իցէ բանի մը մինչև անգամ գժբաղզութեան վստահութենէ ետքը կու դայ : Անշունչ և անզդայ բեռի մը պէս անկողնիս վրայ ինկայ : Մտածմանց և անդամներուս յոպնութիւնը շուտ մը դէպ 'ի խառն երազներ մղեց զիս , և վերջը , քունի ոչնչութեան մէջ :

Ժ.Գ

Գիշերը երկու երեք անդամ կէս արթնցայ : Զմեռուան այն զիշերներէ մին էր որ սակաւաղիւտ բայց աւելի տխոր կ'ըլլան տաք կլիմաներու մէջ և ծովու եղերքը : Փեղկերուս Ֆեղքերուն մէջէ անրնդհատ փայլակներ կ'ցայտէին սենեկիս պատերուն վրայ բոյավառ աչքի մը ցոլումին պէս : Հողմը կ'զուար անօթեցած շուներու բազմութեան պէս : Թանձը ծովու մը մոռնջ բաղխում ները Մարգելնայի բոլոր եղերքը կ'հնչեցնէր , իրը թէ ժայռերու կտրոներ կ'նետուէին :

Դուռս հօվէն կ'գողար և կ'բաղլէր : Երկու երեք անդամ կարծեցի որ կ'բացուէր և կ'զոցուէր ինքնին և թէ ալէկոծութեան շնչառինին և ողբին մէջ , մարդկային խեղդուած ձայներ և հեծկանքներ կ'լսէի : Մինչեւ անգամ կարծեցի թէ խօսքերու հընչուիլը և անուանս արտասանուիլը լսեցի վշտալի ձայնէ մը որ օդնութիւն կ'հայցէր : Ելայ նստայ , բայց բան մը լսեցի . կարծեցի թէ ալէկոծութիւնը , տեսնդը և երազները իրենց ցնորքներու մէջ կ'ընկղմէին զիս , և վերսախին ննջեցի :

Առառ ալէկոծութեան տեղ յստակ արև մը կար : Բայց իրական ողբերով և ինեղձ ձինորսին ու կնոջ յուսահատ ձայնեւ

բով արթնյայ, որոնք Կրայի կը լլայի դրան սեմին վրայ կ'ողային Խեղճ աղջկելը զիշերը փախած էր: Տղաքը արթնյուցած և համ ըուրած էր լուր նշան ընելով: Անկողին վրայ ձգած էր իր տունէ զեղեցիկ հաղուստները, օղերը, մանեակները և ունցած քիչ մը ստակը:

Հայրը իր ձեռքին մէջ քանի մը կաթիլ ջուրէ թրջուած թղթի կտոր մը կ'բոնէր զօր զնդասեղով մը անկողին վրայ դրուած դասած էին: Ճիշդ կամ վեց տող դրուած էին զօրս շուրաբեալ կարդալու: կ'աղաջէր ինձ: Առի թուղթը, միայն այս խօսքերը կ'պարտնակէին որոնք տենիէ դուրս ջուն ձեռքով դրուած էին և զժուարատ կ'իմարդացուէին: « Չատ խոստացայ . . . ձայն մը կ'ըսէ ինձ որ կարտութենէս վեր է . . . : Ուժերնիդ կ'համբում: Ներեցէք ինձ: Կրօնաւորուհի ըլլալ աւելի կ'ընտրիմ: Միխթաքեցէք Զէքօն և Պարուն . . . : Անոր և աղոյը համար Աստուծոյ պիտի աղօթեմ: Տուէք անոնց ինչ որ ունիմ: Զէքօյին մատնին ալ իրեն դարձոցէք . . . » :

Այս տողերը կարդալէս վերջը բոլոր ընտանիքը վերստին արտասուաց հեղեղ հոսեցին: Փոքրիկ տղաքը, գեռ մերկ, լսելով որ քոյլերնին ալ պիտի չգար, իրենց ձայները երկու ծերերուն հեծումին կ'խառնէին և բոլոր տան մէջ կ'վազվզէին Կրայի կ'լա

ՓՊ

Տունակը ձեռքէս ինկաւ: Վերցուցած ատենս, դրանս քով դեախին նարնջենի ծաղկել մը տեսայ զօր վերջին կիրակին դեռահաս աղջկան վարսերուն մէջ տեսնելով զարմացած էի, և աստուածակաշտութեան փոքրիկ միտալը զօր միշտ իր կուրծքին մէջ կ'սպահէր և զօր քանի մ'ամիս առաջ հիւանդութեանս ատեն վարագոյքէս կախած էր: Ա՛լ չտարակուսեցայ թէ զուռս ստողիւ զիշերը բայցուած և զոցուած էր, թէ այն խօսքերը և նեղան տրատնջները կարծած էի, խեղճ աղջկան բարեները և ողբերն էին: Սինեկիս սեմին արտա-

քին կողմին վրայ չոր տեղ մը, տանիքին վրայի անչընի հետաքերուն մէջ կ'հասատատէր թէ զեռահաս աղջիկը փոթորկին ատենը հօն նստած, թէ իր վերջին ժամը ողաւլով և լալով անցուցած էր, նոյն քարին վրայ սպառկած կամ ծնրադիր ։ Նարնջենիկի ծաղկելը և միտալը ժողվեցի և պահեցի կուրծքիս մէջ:

Խեղճ մարգերը իրենց յուսահատութեան մէջ իրենց պէս լալու վրայ կ'զգացուէին: Կրցածիս չափ միսթարեցի զանոնք: Արոշուեցաւ որ եթէ աղջկելը վերստին դանէին Զէքօյի խօսքը ալ չպիտի ընէին: Զէքօյ ինքնին, զօր Պէքօն կանչելու զայցած էր, առաջնին եղաւ տան խաղաղութեան և հօրաքրոջ աղջկան զարձին զոհուելու: Որչափ յուսահատ բայց դարձեալ երջանիկ էր որ իր անունը տունակին մէջ սիրով յիշուած էր և տեսակ մը միթարտութիւն կ'զանէր անոր յուսահատութեան մնաս բարեներուն մէջ:

« Բայց ինձի մնածեց » , կ'ըսէր ինքնին և աչերը կ'սրբէր ։ Խոկոյն որոշուեցաւ միր մէջ թէ բուէ մը հանգիստ չառնուինք փախստականին հետքերը զտնելու առաջ:

Հայրը և Զէքօն ածավարանօք դային քաղքին կանանց անթիւ վանքերու մէջ փորձելու համար: Պէքօն և մեծ մնյըրը Կրայի կ'ըսէր զեռահաս բարեկամն հիներու տունը վաղեցին որոնց համար կ'կասկածէին թէ իր մնածութիւնը և փախուստին խոստովանութիւնը ըրած էր: Կու օտարական, ծովու եղեցքը նարօւոյ նաւահանդիսաները, քաղքին գոնելը զայցի պահապանները և նաւարարները հարցնելու համար թէ մէկերնին տեսած էր զեռահաս Քրօսիստացուհին մը քաղքին ելլելն ու նաւ մննելը:

Առտու պարապ հետազոտութիւններով անցաւ: Ամենինս ալ ընկի և տիտուր տան գարճանք մէկմէկու ընթացքնիս պատմելու և վերստին խորհրդակիցնելու համար: Տղոյմէ զատ ոչ մէկը բեռանը հայի կաոր մը տանելու կարողութիւնը ունեցաւ: Անտրէ աև իր կինը տժաթափ Կրայի վեցի դրան սեմին վրայ նստան գէքինս և Զէքօյ առանց յուսոյ թափառելու զային փողոցներու և եկեղեցիներու մէջ որոնք նարօւին մէջ իրիկունը կ'բայցուին երեկոյեան աղօթքի և օրհնութեանց համար:

ԺԵ

Առանձին անոնցմէ ետքը դուրս ելայ և տրտմութեամբ որ պատահամբ Բօղվելիքի այրը տանող ճամբան բռնեցի : Այրէն անշայ, և մինչեւ Նիզիտա կղզին շրջապատող ծովուն եղերքը դացի :

Ծովիղրէն աչերս Բրօսիտայի վրայ շրջեցան որ անկէ կրիայ խեցիին նման կապատոյն ալեաց վրայ կ'ծփի : Հարկաւ մտածմունքս ալ նոյն կղզոյն մէջ Կրացիկէլայի հետ անցուցած զուարթ օրերուս վրայ դարձան : Բնազգում մ'առաջնորդեց ինձ : Ցիշեցի որ գեռահաս աղջկը հոն զրեթէ իր տարիքով բարեկամուհի մը ունէր, դրացի Խրձիթներուն աղքատ բնակչի մը աղջիկ, որ մասնաւոր հազուստ մը կ'հաղնէր իր ընկերներէ տարբեր : Օր մը երբ կ'հարցնէի իրենց հազուստին մէջի տարբերութեան սպառառը, ըստ ինձ թէ կրօնաւորուհի էր բայց ազատ իր ծնողայ հետ կը բնակէր տեսակ մը վանքի և ընտանեկան կենաց վիճակի մէջ : Իր վանքին եկեղեցին ցոյց տուաւ ինձ : Կղզոյն մէջ շատ կային իրեն նման, ինչպէս նաև Խշայի և Նաբօլիս զիւղերու մէջ : Միտքս եկաւ թէ Կրացիկէլայ ինքինք Աստոծոյ ուխտելու համար թերեւս նոյն բարեկամուհուց զացած էր ինդրելու որ իր վանքին դուռերը բանայ իրեն : Հազիւ թէ այս մտածեցին մեծ քայլ բուզով հուզով ճամբան ուղղուեցայ, Բրօսիտայի ամենէ մօտ քառաքը ուր նաւեր կ'զննուին :

Ժամ մը չանցած Բուզով հասայ : Նաւահանդիստը վաղեցի, երկու թիավարներու կրկին վճարեցի որ յանձնառու եղան զիս Բրօսիտա տանիւլ իրիկունը անհանդարա ծովով : Նաւակը ճամբայ հանեցին, ևս ալ իրենց հետ զդյդ մը թի առի : Դժուարաւ Միզէն հրաւանդանը կրկնեցինք : Երկու ժամ վերջը կղզին ելայ և առանձին շնչասպառ ու դողդոջուն զիշերուան խաւարին և ձմեռուան Հողմին բնազգումներուն մէջ այն երկայն սանդուղն աստիճաններէ ելայ՝ որոնք Անարէայի Խրձիթը կ'տանէին :

ԺԶ

«Եթէ Կրացիկէլայ կղզոյն մէջն է, կ'ըսէի իւրովի, նախ հունկած ըլլալ պէտք է, այն բնական զզացումով որ թուշունը գէպէ իր բոյնը կ'տանին և տղան գէպէ իր հօրը տունը : Եթէ հոն ըլլայ իսկ քանի մը հետքեր պիտի իմացնեն ինձ որ անցած է : Այն հետքերը պիտի առաջնորդեն ինձ ուր որ է : Խսկ եթէ ոչ ինքը և ոչ հետքերը գտնեմ ամէն ինչ կորսուած է . կենդանի զերեզմանի մը գուռերը յախտեանս իր երիտասարդութեան վրայ դոցուած պիտի ըլլան » :

Այս սովորի խուզութիւնով յուղեալ վերջին աստիճանին դպայ : Գիտէի որ ժայռին մէջ պառաւ մնյըը մեկնած աստեննիս տան բանալին պահած էր : Բաղեղը վերցուցի և ձեռքս խոթեցի : Մատերս բուզովին կնծուած մութին մէջ բանալին կ'փնտէին դողդոջալով որ երկամին ցուրտը չզգամ, վասն զիսիկա ալ իմ յոյս բուզովին պիտի անհետէր . . . :

Բանալին չկար : Ուրախութենէ խեղուած ձայն մը ձկեցի և յամբաքայլ բակը մտայ : Գուռը պատուհանները գոց էին . թե՛մէն նշոյլ մը որ պատուհանին Ճեղքուածներէն կ'ելլէր և թղենին տերեներու վրայ կ'երերար, բնակարանին մէջ վառած կանաթեղ մը կ'մատնէր : Ո՞վ կրնար տան զաւակէն զամ բանալին զմնել, դուռը բանալ և կանթեղը վառել : Չտարակուսեցայ որ Կրացիկէլայ իզմէ երկու քայլ հեռի էր և աստիճաններու վերջին վրայ ծնկան վրայ եկայ զիս հոն առաջնորդող հրեշտակին շնորհակալ ըլլալու համար :

ԺԷ

Տունէն ձայն մը չէր ելլէր : Ականջս սեմին դրի . երկուորդ

անենեկին խորը շնչառութեան մը թոյլ ձայն և հեծկլտանքներ լսեցի : Աեղմիկ դուռը շարժեցի իբր թէ միայն հողմէ իր ծինեաց վրայ կ'երերար , Կրացիկը լւայի մտադրութիւնը քիչ քիչ հրատիրելու համար էր այս , որպէս զի մարդկային ձայնի յանկարծ և անակնկալ հնչիւնը զինք կանչելով չսպաննէ : Ծնչառութիւնը կանկ առաւ : Այն ատեն մեղմիկ Կրացիկը կամնչեցի սրտիս մէջն ամենէ հանգարա և ամենէ փափոկ շեշտով : Թոյլ ձայն մը տան խորէն ինձ պատասխանեց :

Վերստին կանչեցի պաղատելով որ դուռը բանայ իր բարեկամին , եղօր որ զիշերը առանձնին կու զար ալէ կոծութեան մէջ իր բարի հրեշտակէ առաջնորդուած զինք փնտելու , գանելու , յուսահատութենէն աղատելու , ընտանեաց և իրեն ներումը բերելու , իր պարատականութեան , երջանկութեան , խեղջ մօր և սիրելի պղտիկ աղջ վերաբրձնելու համար :

« Աստուած իմ , ա՞ն է , անո՛նս է , անոր ձայնն է » , պոռաց մնջիկ :

Աւելի խանդով Կրացիկը լինա կանչեցի այն զգուալի անուամբ զոր երբեմն կատակ ըրած ատենիս կու տայի :

« Ո՛չ , ստուգիւ ան է , ըստ : Զեմ սխալիր , Աստուած իմ , ա՞ն է » :

Լոեցի որ չոր տերեներու վրայ կ'ելլէր որոնք իր ամեն մէկ շարժումին սօսաւիւն կ'հանեէին , քայլ մը կ'առնուր զալ բանալու համար , բայց վերատին թուլութենէ և շարժումէ ուժաթափ կ'ինար առանց յառաջանալ կարենալու :

Ճ.Պ

Աւ չվարանեցայ . անհամբերութեանս և անձկութեանս բոլոր ոյժով հին դրան ուսովվս վարկի նիկը բայցուեցաւ և տան մէջ վաղեցի :

Աստուածածնայ առջև կրացիկը լւայէ վառուած փոքրիկ կանթելով աղօտ նշոյլով մը կ'փառիլար : Վաղեցի երկրորդ սենեկին

խորը ուր իր ձայնը և անկումը լսած էի և ուր նուաղած կ'կարծէի զինք : Նուաղած չէր այլ միայն ճիղը տկարութեան մատնած էր . իրեն անկողնոյ տեղ ծառայող կոյտ մը չոր թուփերու վրայ վերստին ինկած էր և ինձ նայելով ձեռքերը կ'կցէր : Աշերը՝ տենտէ կենդանացած , զարմացումէ բացուած , սիրով մեղացած կ'փայլէին երկու ասաղերու ուկ' որոնց նշոյները երկնքէ կ'հասնին և կարծես քեզ ուղղուած են :

Գլուխը՝ զոր կ'աշխատէր վերցնել , թուլութենէ ետեղ տերեներու վրայ կ'իյնար իրը թէ վեզը կտրուած ըլլար : Բայ ՚ի այտերոն ծայլերու քիչ մը վարսադոյն կարմրութենէ հոգեվարութեան պէս զունատ էր : Իր զեղեցիկ մարմինը արատուած էր արցունքներով խառնուած փոշիէն : Սեաւ հաղուստը զետինը տարածուած աերեներու մնյկ զոյնին հետ կ'խառնուէր որոնց վրայ պառկած էր : Յերկ ուգերը մարմարինի պէս ձերմակ երկարած թուփերու վրայէ անցնելով քարի մը վրայ կ'հանդչէին : Ըոլոր անդամներուն վրայ սարսուներ կ'շրջէին և ակռաները աղու մը ձեռքին մէջն բամբիուն նման կ'կրծանէին : Այն կաբմիր թաշկինակը , որ ընդհանրապէս իր զեղեցիկ երկայն վարսերը կ'պահէր , հանած և իր ձակտին վրայ մինչեւ աշերուն ծայրը քողի պէս տարածած էր : Յայտնի էր թէ գաղաղի մը խաւարին և անշարժութեան պէս իր կերպարանքը պատանելու ծառայած էր , և միայն իմ ձայն լսելով և բանալու համար ելած ատենը վերուցած էր :

Ճ.Պ

Թուփին քով ծունը դրի , իր սաւած երկու ձեռները ձեռացս մէջ առի և շուրթերու տարի զանոնք շոնչովս տաքցնելու համար . աշերէս քանի մը արտասոք անոնց վրայ սահեցան : Իր մատերու ցնցիւնով սեղմելէն իմացայ թէ սրտիս այս անձերը զգացած էր և շնորհակալ կ'ըլլար ինձմէ : Նաւարարի վերարկուս հանելով սաքերուն վրայ տարածեցի և բրդին մէջ փաթթեցի դանսնք :

Վ' թողուր որ լնեմ, երջանիկ մոլեզնոթեան մը մեկնութեամբ
աչերով կ'հետեւը միայն ինձ բայց առանց շարժումով մը ինձ
օդնելու, մանկան մը պէս որ իր խանձարուրին մէջ կ'թողուր որ
փաթթեն և գարձնեն զինք: Ետքը թուփի երկու երեք կոյտեր
առաջին սենեկին վատարանին մէջ նետեցի ողը քիչ մը տաքցը
նելու: Համար: Կանթեզին կայծէն վառեցի վանոնք և վերստին և
կայ նստելու տերեւէ անկողնին քով:

«Ո՛րչափ աղէկ կ'զգամ, ըստ ինձ մեղմ խօսելով, քաղցր,
հաւասար, միօրինակ ձայնով իրը թէ սիրար ամէն հնչիւն և շեշտ
կորմնցուցած և անոնցմէ միայն մէկ եղանակ մնացած ըլլար, որ
՚ի զուր ուզեցի ինքզինքս սպահել, ՚ի զուր աշխատեցայ միշտ քեզմէ
խոյս տալ: Մենակլ առելի զիւրին ե՛ քան թէ քեզմէ ուրիշ մը
սիրել: Աւզեցին զիս նշանել. բայց դու ես միայն հողւոյս նշանածը:
Երկրիս վրայ ուրիշ մէկու մը չեմ նուիրութիւր վասն զի
զալունի քեզ նուիրուած եմ: Գո՛տ երկրիս վրայ, կամ Աստուած
երկնից մէջ, այս է ըրած ուխտա այն առաջին օրը՝ երբ իմացայ
թէ սիրար քեզմով լցուած է: Գիտեմ թէ խերչ աղջիկ մ'եմ ես,
մտածումովս անդամ սոփից զպէլու անարժան. ասոր համար երա
բէք չխնդրեցի քեզմէ որ զիս սիրես. և երբէք սիրտի չչարցնեմ
թէ զիս կ'սիրես: Բայց ես, կ'սիրեմ, կ'սիրեմ զքեզ»:

Եւ կարծես թէ իր բոլոր հողին այս երեք խօսքերու մէջ կ'ամ
փոփիր:

«Եւ հիմա անարդէ, նախատէ զիս և սոփից ներքեւ կոսէ: Եթէ կ'ուզես ծաղրէ զիս յիմարի մը պէս որ կ'կարծէ թէ թառ
դուհի մ'է իր հնոտեաց մէջ: Բոլոր աշխարհիս նախատանաց
յանձնէ զիս: Այս սիրտի ըսեմ անոնց. Այս, կ'սիրեմ զայն, և
եթէ իմ տեղով ըլլայիք նոյնը սիրտի ընէիք. սիրտի սիրելիք զայն
կամ սիրտի մեռնէիք»:

H.

Աչերս կախած վերցնելու չէի համարձակեր վախնալով որ
այսչափ սիրոյ ուղղուած նայուածքս առելի չպրուէր կամ նուազ սէք

Հյայտնէր: Սակայն ոյս խօսքերու վրայ իր ձեռաց վրայ կցած
ճակատով վերուցի և քանի մը խօսք թոթովեցի:

Մատերը շուբթերու վրայ զբար. «Թո՛ղ զիս որ ամենը խօ-
սիմ: Հիմա զո՞ւ եմ, ալ տարակոյս չունիմ, Աստուած մեկնեց:
Մաիկ ըրէ:

«Երեկ, երբ տունէն մեկնեցայ բոլոր զիշերը զբանդ առջե-
կուուելէ և ողալով վերջը, երբ ալէ կոծութեան մէջէ հոս հա-
սայ՝ կ'կարծէի որ ալ երբէք սիրտի չտեսնէի զքեզ և թէ մեռ-
եալի մը պէս զէպ ՚ի զերեզման կ'երմայի: Վաղը լուսնալուն
պէս կրօնաւորուհի սիրտի ըլլայի: Երբ երեկ զիշեր կղզին հա-
սայ և վանքը զայի՝ շատ ուշ էր և գտուը զոց զտայ: Բանա-
լու մերժեցին ինձ: Հոս եկայ զիշերը անցընելու, և Աստուածոյ
տունը ու սրտիս զերեզմանը մտնելէ առաջ հօրս ասն պատե-
րը համբուրելու համար: Տղու մը հետ բարեկամուհի մը զրե-
ցի որ վաղը զիս փնտուելու դայ: Բանալին առի, Աստուածա-
ծնայ առջն կանթեզը վատեցի: «Ծնկան վրայ եկայ և ոխտ մը
ըրի, վերջին ոխտ մը, յուսոյ ոխտ մինչև իսկ յուսահատու-
թեանս մէջ: Վասն զի եթէ երբէք սիրեն՝ սիրտի զգաս որ միշտ
հոգւոյդ խորը վերջին հրոյ կայծ մը կ'մնայ ամէն ինչ մարած
կարծած առենդ իսկ:

«Սուրբ Պաշտպանուհի, ըսի իրեն, ոխտիս նշան մը զիկը
«Հաւաստելու համար թէ մէրը չխարեր զիս և ստուզիւ Աստու-
««Դոյ այնպիսի կեանդ մը կ'նուիրեմ որ միայն իրեն պէտք է
«վերաբերիւ:

«Ահաւասիկ վերջին զիշերը զոր մարդոց մէջ կ'անցընեմ:
«Ֆէկը չիտաէր մէր ըլլալս: Աւաղը թերեւս սիրտի զան վնասեա-
«լու զիս երբ ալ սիրտի չզանուիմ հոս: Եթէ առաջ բարեկա-
«մուհին դայ պէտք եմ որոշումն կատարել և յախտեանս վանքին
«մէջ սիրտի հետեւիմ անոր: Բայց եթէ միւսը անորմէ առաջ
«երեկի ան իմ հրեշտակէս առաջնորդուած զայ զանէ և
«միւս իբնաց եղբը կասեցնէ զիս . . . : Ո՛չ, այն ատեն յայտնի
«սիրտի ըլլայ որ զիս չեք ուզեր և պէտք եմ անոր հետ վերա-
«զառնալ մնացած օրերս զինք սիրելու. համար: Թող այն ըլլայ:

« յաւելցոցի : Եթէ Քու և Աստուծոյ կամքն է այս հրաշքը ը»
 « բէք : Այս ինդիրքն ընդունել տալու համար կարողութեանս
 « համեմատ նուէր մը կ'ընեմ Քեզ ես որ բան մը չունիմ : Ահա
 « ւասիկ վարսերս , իմ խեղճ և երկայն վարսերը զոր այնչափ կը
 « սիրէ և քանի անդամ ծիծաղելով քակից անոնց հողմէն ուսեւ
 « ըուս վրայ երերալը տեմսելու համար : Ա՛ռ անոնք , կ'սուխ-
 « քեմ Քեզ , ես ինքնին կ'կտրեմ ցուցնելու համար թէ բան մը
 « չեմ ինայեր , և թէ զլուխս առաջունէ կ'հնաղանդի այն մըկ-
 « բատին որ վաղը աշխարհէ բաժնուելովս պիտի կարէ զանոնք » :

Այս խօսքերու վրայ ձախ ձեռքով մետաքսեայ թաշկինալը որ
 զլուխը կ'զոյէր , վերցոց և միւս ձեռքով կտրուած մաշերուն
 երկայն վարսերը , որոնք իր քով տերևէ անկողնոյն վրայ գրած
 էր , բռնելով ինձ ցցոց : « Աստուածածին իր հրաշքը ըրաւ ,
 յաւելցոց աւելի սաստիկ ուրախութեամբ և հաստատոն շեշտով :
 Քեզ առ իս զրկեց , ուր որ ուզես պիտի երթամ : Մազերս առ
 նորն են , կեանքս քուիդ է » :

Իր զեղեցիկ սեաւ վարսերուն հիւսուածներու վրայ ինկայ , ու
 բռնք ձեւացս մէջ մնացին ծառէ կտրուած թռումած ձիւզի մը
 պէս : Մունչ համբոյներով զոցեցի դանոնք , սրախս վրայ սեղ-
 մեցի և արցոններովս թրջեցի իրը թէ իր մէկ մասը եղած ըլ-
 լար զոր մեռած հողին մէջ կ'թաղէի : Խտքը աչերս իրեն դար-
 ձնելով , իր չքնար գլուխը աենայ , որ բոլորովին մերկացած բայց
 իր զոհողութեամբ աւելի զարդարուած և զեղեցկացած էր , ուրա-
 խութեամբ և սիրային կերպով կ'փայլէր իր մազերու աւելի կո-
 րուսած ատեն քան մլրասով կտրուած սեաւ և անհաւասար մաս-
 սերուն մէջ : Երիսասարդութեան խորանիուած արձանին նման
 երեցաւ ինձ , որու շնորհքը և զեղեցկութիւնը , ժամանակին առ
 ւերո մները անդամ կ'աւելցնեն զութ և զմայլում շարժելով : Այս
 ինքինքը պղծելը , և իմ սիրոյս համար իր զեղեցկութեան սպաս-
 նութիւնը սրոփս հարուած մը առուին որու հնչիւնը բոլոր անձս
 սարսեցաց և երեսն 'ի վայր զիս իր ոտից առջե կ'յնեցոց : Սի-
 րոյ ինչ ըլլալը զղացի նախ և այս նախին զղացումը սէր կար-
 ծեցի :

Ափո՞ս , կատարեալ սէր չէր , բայց միայն անոր ստուերը
 սակայն գեր շատ երիտասարդ և շատ միամիտ էի չխարսելու հա-
 մար : Կարծեցի թէ կ'պաշտէի զինք ինչպէս որ այնչափ անմե-
 ղութիւն , զեղեցկութիւն և սէր՝ սիրահարէ մը պաշտուելու ար-
 ժանի էին : Ըսի իրեն այնպիսի անկեղծ կերպով զոր յուզմոնքը
 կ'աղջէ և այն խանդով զոր առանձնութիւնը , զիշերը , յուսա-
 հատութիւնը և արտասուքը կ'ներշնչեն : Հաւասաց ինձ վասն զի
 ապրելու համար հաւասալու սէտք ունէր , ասկէ զսու վասն զի
 ինք իր հոգւոյն մէջ բաւական առիփ ունէր ուրիշ հազար սրտե-
 րու պակասը զոցելու համար :

Այսպէս սահեցաւ ամբողջ զիշերը , երկու անձերու ասպահով
 բայց միամիտ և մաքուր խօսակցութեան մէջ , որոնք անմեղու-
 թեամբ իրենց խանդը կ'յայանեն և որոնք կ'բաղձան որ զիշերը
 և լութիւնը յաւիսենական ըլլան որպէս զի իրենցմէ օտար բան
 մը իրենց բերնին և սրտին մէջ չմանէ : Իր բարեպաշտութիւնը ,
 իմ երկչոս զգուշութիւնն և մեր հոգւոյն սյլայլութիւնը մնացաց
 որ և իցէ վասնդ կ'հեռացնեն մեղմէ : Մեր արտասուաց քողը
 վրանիս էր : Հեշտութեամբ հետի ըլլալու համար սրտի շարժումէ
 աւելի զրասոր բան մը չկայ : Այնպիսի մներմութեան հետ չա-
 րաչար վարսուիլը երկու հոգիներու պղծումը պիտի ըլլար :

Երկու ձեռքերը իմ ձեւացս մէջ կ'բռնէի . կ'զգայի որ կեանք
 կ'առնէին : Վերթայի ափազս զավ ջուռ բերելու որ խմէ կամ
 ճակարին և այտերուն սրտիւմ : Արակը վերստին կ'վառէի քանի
 մը կռջղեր նետելով , ետք գարձեալ կ'նստէի այն քարին վրայ՝
 որու քով զլուխը միտենիներու վրայ կ'հանգչէր , լսելու և կըր-
 պին մտիկ լսելու համար իր սիրոյ հեշտալի խոստովանութիւն-
 ները որ ալամայ ծնած էին անարատ և քաղցր բարեկամութեան
 երևոյթով , թէ ինչպէս նախ վախցած և ետքը քաջալերուած
 էր , թէ ինչ նշանով վերջապէս հասկցած էր որ կ'սիրէր զիս ,

Եմ ինչպէս ընտրութեան զաղտնի նշաններ տուած էր ինձ անցայտ կերպով, ո՞ր օրը կ'կարծէր իր մատնուած ըլլալը, ո՞ր օրը դիտած էր որ կ'պատասխանէի իրեն: Ժամերը, ձեռը, փախչող ծիծառները, և միտքը պահած խօսքերը, այս վեց ամսուան մէջ մեր կերպարանքին վրայի ակամայ ամսպերը և յայտնութիւնները, ամէն ինչ իր միտքը պահած էր, ամէն ինչ կ'յիշէր, նման հաւրաւային լեռներու խոտին զոր հովը կ'այրէ ամսուը և հրոյ նշանը կ'պահուի ամէն տեղերը ուր կայծը անցած է:

ԻԲ

Այսաւելցնէր ասոնց զգացման այն բոլը ծածուկ աւելորդասովաշութիւնները որ ամենապշինչ գէպքերու արժէք և բայցատրութիւն կ'տան: Սի առ մի իր հոգւոյն քօղերը իր առջևս կ'բանար: Կարծես թէ Աստուծոյ առջև մերկ կ'երեւէր իր ամբուաթեամբ, մանկութեամբ և թոյլոտութեամբ: Հոգին կենաց մէջ մէկ անզամ միայն ունի այս վայրկեանները ուր ամբողջ ուրիշ հոգւոյ մը մէջ կ'հոսէ շուրթերու այն անսպառ մրմունջով որոնք չեն բաւեր իր սիրային խոստովանութեանց և կ'վերջացնեն զանոնք շփոթ և չարասասանուած խօսքեր թոթովելով, ննջող մանուկի մը համբայններու նման:

Ես ալ մտիկ ընելէ, հեծելէ և սարսուալէ չէի յագեր: Թէ և իմ թեմէ և գեռ երիտասարդ սիրոս ոչ բաւական հասուն և ոչ առատ էր ինքնին այսչափ բոցավառ և երկնային զգացումներ արտադրելու, սակայն այս զգացումները իմ սրախ մէջ հօսելով այնովին նոր և հեշտալի տպաւորութիւն մը կ'ընէին որ իմանալով կ'կարծէի զգալ զանոնք: Սխալմունք: Ես սառ էի ինք հուրն էր: Ցուլացնելով կ'կարծէի թէ կ'ստեղծէի: Այսու ամենայնիւ անոր վերաբերած այս Ճաւակայթը իմ վրայ ալ ցոլանալով երկուքնիս ալ նոյն զգացմանը օդին մէջ ծածկուած կ'երեցնէր:

ԻԳ

Այսպէս օաչեցաւ ձմեռուան այս երկար զիշերը: Նոյն զիշերը թէ իրեն և թէ ինծի համար «Կ'ոիրեմ» ըսող առաջին հաւաչին անողութիւնը տնեցաւ միայն: Երբ ցերեկ եղաւ թուեցաւ մղոթիւն կ'ընդմիջէր:

Արեգակը հորիզոնէն արդէն բարձրացած էր երբ իր ճառաւ դայթները զոյտուած փեղիերէն սահելով կանթեղին լոյսը աղօտեցին: Դուռը բացած ատենս տեսայ որ ձեկորսին ընտանիքը վաղելով սանդուղէն կ'ելլէր:

Քրօսիտայի գեռաւհաս կրօնաւորուհին, Կրացիէլայի բարեկամը, որու նախընթաց օրը իր տունակը զրկելով յայտնած էր հետեւեալ օրը իր վանկ մանելու զիտաւորութիւնը, սրտի յուսահասութիւն մը կասկածելով զիշերը եր եղացրներէ մէկը նարովի զրկած էր Կրացիէլայի օրոշումը ծնողաց իմացնելու համար: Այսպէս իրենց զաւկին զտնուիլը իմանալով աճապարանքը եկան, զղջացած իրենց յամաւութեան վրայ միանդամայն ուրախ ըլլալով որ յուսահասութեան եկըր կամեցուցին զայն, ուր ազատ և ներուած սիրախ կրնային տուն վերապարձնել:

Մեծ մայրը անկողնին քով ծնկան վրայ եկաւ իր երկու բաղկներով հօեւով երկու փաքրիկ սղայքը զորս անոր սիրած մեղմացնելու համար բերած էր և անոնց մարմնով իբր վահանէ մը պատսպարուելու իր թուրին յանդիմանութեանց գէմ: Տղայքը պուալով և լալով իրենց քրոջ բազկաց մէջ ինկան: Զամոնք շյելու և միծ մօրը համբուրելու ըրած շարժումէն Կրացիէլայի դլուխը զոյտու թաշկինակը ինկաւ և իր մազերէ զրկուած զլուխը երեան ելաւ: Իբ զեղեցկութեան ըրած այս ամսարդութեան նպատակը աղեկ համենալով սոսկացին: Վերստին հեծկլտանկներ պայթեցան տան մէջ: Կրօնաւորուհին ներս մտնելով բոլոր բազմութիւնը հանդարտեց և միամիթերէյ, կտրուած վարսերը ժողվեց, Աստուածածնայ պատկերին դպցուց և սպիտակ մետաքսէ թաշկիւ

հակի մը մէջ փաթթելով մմծ մօր զենջակին մէջ զրաւ զանոնք։
« Ասհեցէք ասնոք, ըստ անոր, որպէս զի երբեմն իր երջանիկ
կամ վշտալի ատեն իրեն ցուցնելով յիշեցնէք իրեն որ երբ իր
ոիրած անձին վերաբերի զիտնայ թէ իր սրտին նախկին ընծան
միշտ Աստուծոյ վերաբերիլ պէտք է ինչպէս որ իր գեղեցկու
թեանը այս մաղերով անոր կ'վերաբերի»։

ԻՊ

Երիկունը Նարօլի վերադարձանք ամենքնիս միատեղ։ Արաւ
ցիէլան դանելու և աղատելու գէպքին մէջ ցուցած ջանքս ծեր
ինուջ և ձկնորսին իմ վրայ ունեցած սէրը կրկնազատկած էր։
Ոչ մէկը իմ փոյթիս և իր իմ վրայ ունեցած հակումին ինչ ըլ-
լալուն վրայ կ'կասկածէր։ Եր բոլոր ընդիմութեան պատճառը
Զէքօյի տղեղութիւնը կ'կարծէին։ Այս ատելութեան կ'յուսային
ժամանակով և կարդագրութիւններով յաղթել։ Կրացիէլայի խոս-
տացան որ ալ պիտի չստիպեն զինք ամուսնանալու։ Զէքօ
նին իր հօրը աղաչեց որ ալ չխօսի։ Եր խոնարհութեամբ, վար-
քով և նայուածքով մօրաքեռորդիէն ներողութիւն կ'խնդրէր վըշ-
տացը պատճառ ըլլալուն համար։ Տան մէջ հանդարտութիւնը
վերադարձաւ։

ԻԵ

Ոչ Կրացիէլայի կերպարանքին և ոչ իմ երջանկութեան վրայ
ստուեր մը կ'երեւէր, բայց ի այն մտածումէն որ այս երջանկու-
թիւնը վաղ կամ անազան պիտի ընկմիջէր իմ գէպ ի հայրե-
նիքս վերագառնալով։ Երբ Գաղղիոյ անունը արտասանուեր խեղճ
աղջիկը մահուան ստուերը տեսնելու պէս կ'զեղնէր։ Օր մը սե-
նեակս մանելով բոլոր քաղաքի հաղուստ յատակին վրայ պա-
տառուած և նետուած զտայ։ « Աերէ ինձ, ըստ Կրացիէլայի

աիցս առջե ծնկան վրայ դարձվ և իր վշտալի երեսը իր վրայ
վերցնելով, ես ըրի այդ քէպաղութանիւննա։ Ո՛չ, մի յանդիմաներ
զիս։ Շատ վիշտ կ'զամ երբ յիշեմ որ օր մը այս նաւարարի
հագուստը պիտի հանես։ Ա՛թուի ինձ թէ այն ատեն այս պիտակ
պիտի թողուս և հաղուստից հետ ուրիշ սիրտ մը պիտի առնես։

Այս պղտիկ փոթորիկներէ վերջ, որոնք խանդին եռանդէն կը
սրայթէին, և որոնք կ'հանդարտէին մեր աշաց քանի մը արտա-
սուքներով, երեք սմիս այսպէս սահեցան երևակայական երանու-
թեան մը մէջ որու ամենասպարզ գէպք մը զպելով պիտի ջնջէ ու։

Ամպի մը վրայ էր մեր զրախտը։
Այսպէս սէր հանցայ մանկան մը աշաց մէջ կաթիլ մը ար-
տաստքով։

ԻԶ

Քանի՛ երջանիկ էինք երբ միատեղ կրնայինք կատարելապէս
մունալ որ Բօղելիքի ստորին տնակէ, արևու առջեի այն պա-
տշամէ, այն փոքրիկ սենեկէ ուր օրուան կէսը խաղալով կ'աշ-
խատէինք, այն եղերքին աւազին վրայ քաշուած նասակէ, և այն
զեղեցիկ ծովէ՝ որու զուութիւնը և ջուրերու քաղցր ձայնը, խո-
նաւ և աղջու հովով մեզ կու դար, քանի՛ երջանիկ էինք երբ
կ'մոռնայինք որ ասանցմէ զատ ուրիշ աշխարհք մը չկար։

Քայց ափսոս, երբեմն կային ժամեր ուր կ'մոռածէինք թէ աշ-
խարհս հման չէր եղերեր և թէ օր մը պիտի ծաղէր որ լուսնին
կամ արեին նոյն հատաղայթին տակ պիտի չգտնէր զմել։ Կը
սիսլիմ երբ սրտիս այն ատենուան չորսութիւնը կ'մոռաղբեմ վեր-
ջէն զղացածիս հետ բալդասելով զայն։ Ա՛սկոէի Կրացիէլայն
սիրել։ ինքնին խստավանածէն հաղար անզամ տելի։ Եթէ այն
չափ սիրած չըլայի, բոլոր կենացս մէջ հորւսյս մէջ ձկած հետ-
քը այնչափ խորանէ և զառն չէր ըլլար, իր յիշատակը այնչափ
փափկութեամբ և տիսրութեամբ սրտիս մէջ չէր գրոշմոեր, և իր
կերպարանքը յիշողութեան մէջ այնչափ ներկայ և պայծառ չէր
ըլլար։ Թէ՛ւ այն տտեն սիրտս աւտղէ էր, սակայն այս ծովային

Ծաղկելը շատ եղանակներու համար հոն կ'արմատէր, նման Խշիտ կղլոցն եղեցքը հբաշալի շոշաններուն ծաղկելուն :

հԵ

Ճառապայմէն զբկուած ո՞ր աչքը կամ ծլելով թարշամած ո՞ր
սիրաը պիտի չսիրէր զայն։ Եր գեղեցիկ թիւնը սիրոյ հետ իրիւ-
տընէ առառ կարծս կ'աճէք։ Ա՛լ չը մեծնար բայց իր բոլոր
շնորհքով կատարեալ կ'ըլլար, շնորհք որ երկ կ մանկան մը կը
վերաբերէին բայց այսօր ծաղկած օրիորդի մը։ Եր նուրբ ձևե-
րու պատահնեկութեան քաղցր և բոլորանե գիծերով փոխուելը
աչքով կ'առեսնուեին։ Եր հասակը կ'առղջուէր առանց առաձգու-
թիւնը կորմանցնելու։ Եր գեղեցիկ մերկ ոտքերը ալ այնչափ թե-
թե չէին կոփեր գետինը, բայց կ'թուղար որ քառէին այն ծուլու-
թեամբ և թուլութեամբ՝ որ կնոշ մը սիրոյ առաջին մոտածութե-
քը սկսած առեն բոլոր մարմնցն ծանրութիւն կու առն։

Իր մալքըը կ'բարսնէին զարնան զաղջ ալեւաց տակ խարսხեաչ
և խիտ ծովային բայսերու նման։ Ծառ անդամ կ'զօսնուի անոնց
աճումը մատերով չափելով իր ժամանակում կանաչ հաղուս-
տին վրայ։ Իր մարմինը կ'սպիտակիր և կ'գունաւորէ նոյն դյուն-
երով որ ամէն օր բուսափին վարդապոյն փշըն իր մատերու ծայ-
րը կ'ներկիր։ Աշերը օր ըստ օրէ կ'մեծնային և կ'ընդլայնէին
յանկարծ երեսցած սիրոյ այս նոր հորիզոնը սպատելու համար։
Ապրելու գարմանքէն էր երբ Կալաբրէ մարմարիոնին մէջէ տուա-
ջին բարախում մը կ'զգար։ Ճեստ ակամայ ամօնթխածութիւններ,
դիրքի, նայուածքի և ձևերու երգչուսութիւններ ունէր զրու եր-
բէք համի ունեցած չէր։ Կ'զիսէի որ ես ալ մունջ և զողղոջոն
էի իր քով։ Պիստի ըստէր թէ երկու յանցաւաքներ էինք մինչ-
դեռ երկու երջանիկ պատանիներ էինք։ Այսու ամենայնին քար-
նի մ'ատենէ ՚ի վեր այս երջանկութեան տակ տիրութիւն մը կը
պահուէր կամ կ'նշանաբուէր։ Մենք չէինք զիսեր սպատճառը,
բայց Ճակատապիրը զիսէր։ Միատեղ անցընելու ժամանակին
կարճութեան զգացումն էր այս։

۱۰

Հաստ անդամը Կրպայիկէլլա իր փոքրիկ եղբարքը հաղուեցնելէ
և սահմարելէ վերջը զուարթօրէն իր աշխատութիւնը սկսելու տեղ
պատշշամին յենած պատին վրայ կ'նսաւէր, թգենիի մը մեծ տե-
րեներուն շուրբին տակ որ փարէն մինչև պատին ծայրը կ'համնէր:
Ճո՞ն անշարժ կ'մնար ամրողջ կէս օրեր ակնապիշ։ Երբ իր մեծ
մայրը կ'հարցնէր թէ հիւանդ էր, ցաւ մը չունիմ կ'պատասխա-
նէր բայց աշխատելէ առաջ յոպնած եմ։ Ձէր ուղեր որ այն ա-
տեն խօսէին իրեն։ Ամենէ ալ երեսը կ'զարձնէր բայ ինձմէ, և
կ'նայէր ինձ երկար ատեն աւանց բառ մը խօսելու։ Երբեմն շուր-
թերը կ'շարժէին իրը թէ կ'խօսէր, բայց անանկ բառեր կ'թու-
թովէր զորս ոչ մէկը կ'հասկնար։ Երբեմն սպիտակ երբեմն վար-
դակոյն փոքրիկ սարսաւներու անցնիլը կ'տեսնուեր այսերուն
մարմնոյն առակ կ'կնճռուէին առաւօտեան հովին առաջին
շունչէն ննջող ջուրին շարժելուն պէս։ Բայց երբ իր քով նըս-
տելով ձեռքը կ'բանէի և իր դոցած աշխերուն երկայն արտեա-
նունքներու կ'զարէի զըսին կոթովը կամ շահասպրամի ձիւղին
ծայրով՝ այն ատեն ամէն ինչ կ'մունար և առաջուան պէս կ'ըս-
կուէր խնդալ և խօսակցիլ։ Միայն թէ ինձի հետ խնդալէ և կա-
տակելէ ետքը արաւում կ'երեւէր։

Նըրբեմն կ'ըսէի իրեն . « Կրացիկէլս , ի՞նչ կ'ասյիս այսպէս ժամերով հան ծովու ծայրը . միթէ միք չաեսած բան մը կ'աեմնես դու :

— Կ'ամեննեմ Գաղղիան սառէ լեռներու ետե , կ'պատսալսաւ նէր ինձ :

— Եւ այդչափ գեղեցիկ լինէ կ'առանես Գաղղիոյ մէջ, կյաւելցնելի է:

— Կ'տեսնեմ մէկը որ քեզի կ'յամանի, կ'կրկնէր, մէկը որ անեղը սպիտակ ձամբու մը վլայ կ'քալէ, կ'քալէ, կ'քալէ։ Ա'քալէ միշտ առանց դաւանալու միշտ յառաջ, և ամբողջ ժամեր կ'րա-

ուասեմ, յուսալով որ կ'վերադառնայ իր հետքերու վրայ բայց չվերադառնա՞ » :

Եսքը երեսը զենջակին մէջ կ'պահէք, և ամենէ զորովալի անոնները կանչելով խոկ իր զեղեցիկ ճակատը չէր վերցներ :

Ես ալ այն ասեն շատ տիտոր սենեակս կ'մտնէի : Ա'փորձէի միտքս ցրուելու համար կարգալ բայց միշտ թղթին և աչերուս մէջ տեղ անոր երեսը կ'տեսնէի : Ա'թուէր ինձ թէ բառերը ձայն կ'առնէին և մեր օրտերու պէս կ'հառաջէին : Ես ալ շատ անդամ առանձին լալով կ'անցընէի : բայց սեամալձութեանս վրայ ամչնալով երբէք Կրացիէլլայի չէի ըսեր որ լայցած եմ : Ո'րչափ կ'վրիորէի . ինձմէ արտասոք մը ո'րչափ երջանիկ պիտի ընէր զինք:

Ի՞՞Չ

Կ'յիշեմ իր սրտի ամենէ մեծ վիշտ սուող տեսարանը, որմէ վերջը կատարելապէս երբէք չմսիթարուեցաւ :

Քանի մ'ատենէ՝ ի վեր զրիթէ իր աարիքով երկու կամ երեք աղջիկներու հետ բարեկամութեամբ կապուած էր : Այս զեռաշաս աղջիկները պարտէզներու մէջի մէկ տնակը կ'բնակէին, և ուսումնարանի մը դեռահաս ֆրանտ հիներու հագուստները կ'ձեւին կամ կ'նորոգէին : Միւրատ թագառը հաստատած էր այս ոստմարանը իր սրաշոնեաներու և զօրապետներու աղջկանց համար : Գեռահաս բրոսիտացուհիները շատ անդամ աշխատեալով վարեն Կրացիէլլայի հետ կ'խօսէին որ պատշամին յենած սպատին վրայէ կ'նայէր անոնց : Այս վանքին աշակերտաներուն դեղեցիկ տանթելաները, ընտիր մետաքսելէնները, աղըոր փեղցրները, կօշիկները, ժառաւէնները, շալերը կ'բերէին կամ կը տանէին Կրացիէլլայի ցուցնելով : Զարմանցման և հիացման ձայները չէին վերջանար :

Երբեմն փռքրիկ կարուհիները Կրացիէլլան իրենց հետ կ'առնէին բողեւիրի փռքրիկ մասուռին պատարաղին կամ երեկոյեան աղօթքին ընկերանալու համար : Անոնց դիմառելու կ'երթայի

երբ օրը կ'խոնարհէր և զանդակին կրկնուած հնչինը երեցին օրհնութիւն տալը կ'իմացնէր ինձ : Վ'վերադառնայինք ծովու աւազին վրայ խալալով, զայող կոհակին հետքին ետևէ յառաջանալով, կամ կ'փախչէինք կոհակին երբ վերստին կու զար ոտքերնուս վրայ փրփրալ : Աստուած իմ, ո՛րչափ աղըոր էր այն ատեն Կրացիէլլա երբ վախնալով որ ոսկեհու գեղեցիկ հողաթափները չժրջէ, բազուկները երկնցուցած առ իս կ'վազէր իրը թէ իրեն հասնող կամ ուգերը միայն լուղ նախանձու ալիքէն սրտին վրայ կ'փախչէր :



Քանի մ'ատենէ՝ ի վեր կ'դիտէի որ իր մոտածումներէ մէկը կը պահէր ինձմէ : Գաղլոնի խօսակցութիւններ կ'ընէր իր բարեկամուհիներու հետ : Տեսակ մը պղտիկ գտու մ'էր որու մէջ չէին ընդուներ զիս :

Գիշեր մը սենեկիս մէջ կարմիր հողէ փոքրիկ ջրազի մը լոյսով կ'կարդայի : Տանիքին վրայի դուռը բաց ձզած էի ծովուն հողը առնելու համար : Կրացիէլլայի և տղջ սենեկին մէջ լինյի աղմուկ մը, աղջիկներու երկար փափառքներ, խեղդուած ծիսաղներ, վերջը պղտիկ զանդատներ, բարկութեան բառեր, հուսէ յետոյ նոր ձայներ երկար լուռթիւններով ընդմիջուած : Կամ մէծ ուշադրութիւն չըրի :

Սակայն այն հոգը և աեսակ մը դաղմնի պահէլու համար փսփառքներու խեղդիլը հետաքրքրութիւնս շարժեցին : Գիրքս ձկեցի, ձախ ձեռքով հողէ ձրագս բանեցի և աջ ձեռքով հողն պատսպարեցի որ չմարի : Մունջ և քարերու վրայ քայլերս թեթևնելով անձայն տանիքէն անցայ : Ականջս Կրացիէլլայի գրան գրի և լսեցի քայլերու աղմուկ մը՝ որ սենեկին մէջ կ'երթեկին, լսթերու ձմլում մը՝ զոր կ'ծալէին կամ կ'պարզէին, կանանց մասնացներու, ասեղներու և մկրաներու շշուկը որոնք ժապաւէններ կ'շտկէին, թաշկինակիներ կ'հնալասեղէին, և այն շատախօսութիւնները և քաղցր ձայներու բղդումը՝ զոր շատ ան-

կամ՝ լսած էի մօրս տունը երբ քոյրերս սղարահանդէսի համար կ'հաղուէին :

Հետեւալ օրը Քողիլիի մէջ Տանդէս չկար: Արայիլ լլա երա
բեք խորհած չեր իր կեղցիութիւնը պահուանքով աւելցնելու:
Հայելի մը անդամը չկար իր սենեկին մէջ: Տանկին ջրհորին
ջարի ամանին մէջ ինքնինք կնայեր կամ աւելի իմ աշխատ մէջ:

Հետաքրքրութիւնս այս գաղանիքին չդիմացաւ : Ծունկով զուռ հը հը հը պատճեցաւ . և երեցայ սեմին վրայ կանմեղ ՚ի ձեռին :

Գեռահաս կարուհիները աղաղակ մը ձեղին և թունց թուիչ
քին նման փախեցան սենեկին անկինները իբր թէ ոճագործու-
թեան մը մէջ բւնած ըլլայի վլրենք : Գեռ իրենց ձեռաց մէջ
բուստի կտորներ կ'ըսնէին, մէկին ձեռքը կար թել, միւսին մըկ-
րաս մը, ասիկա ծաղկիներ կ'ըսնէր, ուրիշ մալ ժապաւէններ։
բայց Կրացիկէլլա սենեկին մէջ տեղը տախտակէ աթոռի մը վրայ
եղած ըլլալուն և իմ անակնկալ երեցիթէս ապշած չկրցած էր
փախչէլ : « Կուսի սիչ կարմիր էր : Աչքը կախած չէր համար-
ձակիեր ինձ նայիլ և հազիւ շունչ կ'առնուր : Ամենքն ալ կ'լուէին
սպասելով որ ի՞նչ պիտի խօսէի : Ես ալ բան մը չէի խօսեր :
Տեսածիս զարմացման և մունջ դիտող թեան մէջ ընկլած էի :

Արացիելլա հանած էր իր հաստ բրդէ շրջադիմուր, քրօնիս
տացու հւոյ ժամանակ հագուստը որ կուրծքի վրայ բայց է գետ
ռահաս աղջկան շնչառութիւնը և տղուն կենաց աղջիւրը զիւշ
քայլնելու համար, նոյնակէս ոսկեթելով հիւստած տախտակէ կու-
ռուլ հողաթափները որոնց մէջ ընդհանրապէս իր մերկ սպակերը
կ'սապային, պղնձէ դլուով երկայն ասեղները որոնք իր սեաւ մաս-
կերը գլխին վրայ կ'փաթթէին ինչպէս որ առապատակալ մը
նառան վրայ առաջասոր կ'պատէ, վերջապէս ապարանջանի նման
լայն օղերն ալ տուառօտեան լաթերուն հետ անկողնին վրայ խառն
նետուած էին :

Այս յունական դեղջկային հագուստին տեղ որ թէ ադքաս տութեան և թէ հարստութեան կ'վայելէ, որ մինչև սրունդին կէպը ինկած շրջադիեստով, պատճեան ձեռդքուածով և թենոցնեա-

բու կտրուածքով կնոջ մը մարմնոյն ամէն ձեւերուն աղասառ թիւն և դիւրաշարժմթիւն կու տայ , Արացիել լայի արաշանօք իր գեռուահաս բարեկամուհիները հաղցուցեր եին դրեմէ իր տարիքով և հասակով վանիքի մէջի զաղղիսայի օրիորդի մը հաղուստը և զարգերը : Հաղած էր մետաքսէ շրջազգեստ մը , վարդաղոյն զօտի մը կ'կրէր , սրաբանոցի սպիտակ թաշկինակ մը , կեղծ ծաղիկներով զարդարուած զտակ մը , և կապտաղոյն ողլրկի կերպարէ կօչինիներ մետաքսեայ կապերով : Այս հաղուստին մէջ շփութած կ'կենար իրը թէ իր մերկութեան մէջ մարդու մը նոյտածքէ յանկարծ տեսնուած ըլլար : Ես ալ կ'նայէի իրեն առանց աչերս զարձնելու , բայց ոչ նշանով մը , ոչ ճայնով մը և ոչ ծիծաղով մը իր ծպտումին վրայ զդացած յայտնելով : Արցոնք մը սիրատ հոսեց : Խոկյոն հասկցայ խեղչ աղջկան նպատակը : Իր և իմ վիճակի մէջ եղած տարրերութեան վրայ ամշնալով ուղած էր փորձել զոնէ հաղուստի նմանութիւնով իմ՝ աշաց առաջ չեւ բազգերնիս միացնելու : Ինձմէ զաղմնի և իր բարեկամուհիներու օգնութեամբ կարգադրած էր ասիկա յուսալով որ յանակարծ աւելի զեղեցիկ և աւելի ինձի յարմար պիտի երեւէր այս հաղուստով քանն թէ իր կզգւոյն պարզ հաղուստին մէջ : Ծառ խարուած էր : Կ'սկսէր լուսթենէս հասկնալ : Իր կերպարանքը յուսահաս անհամբերութիւն և դրեմէ արասասուալից երեսը մը կ'աւնուր որ ինձի կ'յայտնէր իր զաղտնի նպատակը , միտքը և ոպատրանքը :

Այսու ամենայինիւ բաւական զեղցիկ էր այսպէս : Իր մտածա
մունքը հաղար անզամ տերի զեղցիկ երեցնել որէ աք էր զայն
աչաց : Բայց իր զեղցիկով թիւնը զրեթէ տանջանքի կ'նմանէր :
Մարտիրոսով թիւն փայտակոյտին վրայի ցիցին վրայ գալուած
Քօրեթի զեռաշաս կյաներու պատկերին նման էր, որտոք իրենց
կապերուն մէջ կ'ոլորուին որպէս զի իրենց սրբով թիւնը պղծող
նայուածքներէ խոյս տան : Ափսո՞ս, Կրացիէ լայդ համար ալ աւ
սիկա մարտիրոսով թիւն մ'էր . բայց չէ թէ, ինչպէս տեսնելով
պիտի կարծուէր, ունայնութիւնն մարտիրոսով թիւնը, հապա իր
սիրոյ :

Անգին մանկամարդ Փրանսուհին հաղուստը, զոր հաղածէ էր, անշուշտ անոր նիշար հասակին և տամներեք կամ տամնչորս տարեկան վանքի մէջի աղջկան մը վտիտ ուսերու և թերու համար կորուած ըլլալուն շատ ներ եկած էր ծովու և արևոտ դեղյիկ աղջկան անջատեալ հասակին և բոլորակ ուսերուն։ Հաղուստը ամէն կողմէ կ'պատէր, ուսերուն, կործքին վրայ և զօտին շուրջը վայրենի թղենիի մը կեղեկին նման որ ծառին ճիւղերուն վրայ կ'պայթի դարնանային հիւթերու առաստութեան առեն։ Դեռահաս կարուհին երը որչափ որ աշխատած էին հոն հոս շրջապկեստը կնդասեղել, սակայն բնութիւնը ամէն շարժումին զդեստը պատուած էր։ Ըատ աեղերէ մետաքսին պատուածքներուն մէջէ վիզը կ'աեսնուէր կամ բազուկները կ'երեւէին կարերուն ճեղքերէն։ Շապիկին հաստ լաթը հաղուստին մէջէ կ'երեսէր, և իր խստութեամբ մետաքսին վայելչութեան հետ կ'հաշեակիր, Քաղցիկները նեղ և կարձ թենոյին մէջ սեղմուած վարդարդոյն թիթեռնին նման գուրս կ'ելլէին։ Միշտ մերկ յունական լայն հողաթափներու սովորած սոգերը, կօշիկներուն ողորկ մետաքսը կ'ոլորէին որով կարծես թէ սոգերուն շուրջը չուաններ կապուած կ'սեղմէին զանոնք։ Մազերը՝ գէշ տեղաւորուած տանընելայի և կեղծ ծաղիկներու աակ, կարծես իրենք կ'վերցնէին այս դլայ զարդը և այն չքնաղ երեսին՝ զոր պարապ տեղ ուսուցած էին այլակերպէլ, պաճուճանքին մէջ լրբութիւն մը և կերպարանքին վրայ համեստ ամօթխածութիւն մը կու տային որ առնասուար և ամենասպանչելի կերպավ մէկմէկու ներհակ էին։

Իր գիրքը իր երեսին պէս շփոթուն էր։ Շարժելու չէր համարձակեր վախնազու որ ճակախին ծաղիկը կ'իյնեցնէր կամ հաղուստը կ'ձմբէր։ Քալել չէր կրնար այնչափ կօշիկները սոգերը սեղմած էին և քայլերուն հաճելի տնկութիւն մը կու տային։ Ոլտի ըստէր թէ ծովու արելին այս միամիտ նւան իր առաջին սլուանքին որոշայթին մէջ ինկած էր։

Առութիւնս այսպէս սենեկին մէջ վայրկեան մը տեղէց։ Աերշը բնութեան այս պղծումէ աւելի վշտացած քան թէ ուրախացած յառաջայայ անոր շուրջերուս քիչ մը ծաղրու նշան մը խեղաթիւրելով և յանդիմանութեան ու քաղցր կատակի թեթե նայուածքով մը գիտելով, իր թէ պաճուճանաց այս հանգերձանքին մէջ դժուարաւ կ'ձանչնայի զինք։ «Ստուդիւ, գու ես, Կրացիելլա, ըսի իրեն։ Ո՞վ երբէք պիտի կարենայ ձանչնալ զեղեցիկ բրոսիտացուհին Բարիվի այս պաճուճապատանքին մէջ է հնչպէս, շարունակեցի քիչ մ'աւելի խստութեամբ, չես ամշնար այլափոխել այն զոր Աստուած այնչափ զեղեցիկ ըրած է բնական հաղուստի մը մէջ։ Ո՞րշափ աշխատիս, դարձեալ ալեաց նոյն աղջիկը պիտի ըլլաս նաւարարի ոտքով և քու զեղեցիկ երկնից արեւն զարդարուած։ Ո՞ւտի ես յանձնառու և Աստուծոյ շնորհակալ ըլլալ։ Այս վանդակի թուզունին փետուրները երբէք ծովու ծիծառն պիտի չյարմարին »։

Այս խօսքը սիրտը ծակեց։ Զհասկցաւ որ իմ մոքիս մէջ ծովու ծիծառն համար ինչ տոփալի ընտրութիւն և պաշտում կատակին։ Կարձեց որ իմ քալաքիս և սերունդիս զեղեցիկութեան նմանելու յոյսը կ'ոչնչացնէի։ Հաւատաց թէ ինձի համար աւելի զեղեցիկանալու և իր խոնարհ վիճակին վրայ աչերս խաբելու բոլոր չափերը կրտսուած էին։ Յանկարծ արտաստաց մէջ ինկաւ, և անկողնին վրայ նստած երեսը մատերուն մէջ պահած, աղաչեց քրթմն ջուլ ձայնով մը իր գեռահաս բարեկամուհիներուն որ զան զինք աշուելի զարդարանքէն աղատելու։ «Ըատ աղէկ գիտէի, ըստ հեծելով, թէ աղքատ բրոսիտացուհի մ'եմ միայն, բայց կ'կարծէի որ հագուստ փոխելով այնչափ պիտի չամչցնէի զքեզ, երբ որ մը քաղաքդ հետեւի քեզի։ Կ'տեսնեմ որ եղածիս պէս մնալ պէտք եմ և ծնած տեղս մեռնիւ։ Բայց պէտք չէիր ինձ յանդիմաննել ասոր վրայ »։

Այս խօսքերու վրայ զայրոյթով քաշեց գլխին ծաղիկները և բարկութեամբ իրակ հեռի նետելով ոտիցը տակ կոխեց յանդիմանութեան խօսքեր ըսելով անոնց, ինչպէս որ իր մեծ մայրը նաւարեկութենէ ետքը նաւակին տախտակներուն ըրած էր: Յետոյ դէպ ինձ վաղելով, ձեռքիս կանթեղը փշեց որպէս զի տհաշած հաղուստին մէջ աւելի երկար չտեսնեմ զինքը:

Զգացի որ սիամած էի խստութեամբ հետը կատակելով, և թէ կատակը ջշմարտութեան տեղ առնուած էր: «Ներողութիւն խնդիրցի անորմէ: Քսի իրեն որ յանդիմանած էի վասն զի հազար անդամ՝ աւելի հրապուրիչ կ'զանէի Բրոսիտացուհիի քան թէ Գրանտուհիի հաղուստով: Ստոյդ էր, բայց հարուածը տուած էի: Աւ մտիկ չէր ըներ ինձ բայց կ'հեծ լըտար:

Բարեկամուհիները հանուեցուցին զան, հետևեալ օրը վերըստին տեսաց զինք: Կղզեցոյ հաղուստը հաղած էր, բայց աշերը դեռ արցունկներէ կարմիր էին այն կատակին համար որ բոլոր զիշերը զինք լացուցած էր:

ԼԲ

«Այս ատենները տկառ Գաղղիոյէ ընդունած նամակներէ ու տարակուսիլ կատկածելով որ զիս կ'կանչէին վերադառնալ: Ձեր համենքակեր զողնալու զանոնք, այնչափ արզար էր և խարեւու անկարող, թէ և իր կենաց կամ մահու խնդիրն էր այս. բայց երբեմն ինն օր կ'արհէր զանոնք և իր ոսկիէ զնդասեղով անկողնին քովը պատին վերց կախուած Աստուածածնայ թուղթէ պատկերին ետել կ'զնէր: Կ'խորհէր թէ Սուրբ Կոյսը մեր սիրոյ համար իր իննօրեայ աղօթքներէ շարժելով հրաշքով մը նամակներուն պարունակութիւնը և վերադարձի հրամանները իրեն քով մնալու հրաւէրի պիտի փոխուէր: Այս սրբակի բարեպաշտ դաւերուն ոչ մէկը աշերէս կ'վրիպէր, և ամենքն այլ աւելի ինձ սիրելի կ'ընէին զինք: Բայց վերջին ժամը կ'հասնէր:

ԼԳ

Մայիսի վերջին օրերուն մէջ զիշեր մը, դուռը սաստիկ զարկին: Բոլոր ընաանիքը կ'քնանար: Բանալու զացի, և Վ. . . . բարեկամն ներս մտաւ: «Քեզի փնտուելու կու զամ, ըստ: Աշաւասիկ մօրմէդ նամակ մը. կարծեմ պիտի չմերմես: Զիերը կէս զիշերուան համար վարձուած են: Հիմա տասնըմէլ է. երաթանք, կամ երբէք պիտի չերթաս: Մայրդ պիտի մեռնի արտմութիւններուն: Գիաես որ ընաանիքդ ինչ աստիճան պակասութիւններուուգ պատասխանատու կ'ընէ զայն: Այսչափ քեզի համար զոհաւած է ան. վայրկեան մ'ալ զու անոր համար զոհուէ: Կ'երդնում որ ուղիշ ձմեռ մը և երկար ատրի մը քեզի հետ հոս կ'անցընեմ, կ'խոստանամ ասիկա: Բայց պէտք ես ներկայութեամբգդ ընտանեայդ երեխս, և մօրդ հրամաններուն հնազանդիս »:

Զգացի որ կրատած եմ:

«Ճոն սպասէ ինձ», ըսի իրեն:

Սենեակի գարձայ, աճապարանօք լաթերս պայտսակիս մէջ նետեցի: Կրացիկլայի զրեցի, ըսելով իրեն ինչ որ տասնըրութ տարեկան սրտի խանդ մը կրնար բացարել, և ինչ որ դատութիւնը կրնար հրամայել իր մօրը հնազանդ զաւակի մը: Երգում ըրի իրեն ինչպէս որ ինքնին կ'երդնուի որ չորրորդ ամիսը չ'լրացած իր քով պիտի վերադառնայի զրեթէ ամեննեին ալ չմեկնելու համար: Մեր պապայ կ'ենաց անստուգութիւնը Կախմանամութեան և սիրոյ յանձնեցի: Քսակս թողուցի իրեն բացակայութեանս ատեն իր ծեր ծնողաց օդնելու համար: Կամակը զոյելով լուիկ քայլերով յառաջացած և իր սենեկին դրան սեմին վրայ ծունը գրի: քարը և տախտակը համբուրեցի. Տոմսակը գրան տակէն սենեկին մէջ նետեցի, խեղելով սրտիս մէջի հեծկըլ տանքը:

Բարեկամն իր ձեռքով թես մտաւ, վերցուց և տարաւ զիս: Այս միջացին կրացիկլայ, որու այս անսովոր աղմաւկը վախցուց

յած էր, դուռը բացաւ : Կուսինը ամսիքը կ'լուսաւորէր : Խեղջ՝
աղջիկը բարեկամն ճանչցաւ, տեսաւ պայուսակս զոր ծառայ մը
ուսերուն վրայ կ'տանէր : Թևերը տարածեց, սոսկալի ձայն մը
ձեց և անշարժ տանիքին վրայ ինկաւ :

Վաղեցինք անոր : Ինքինքը կրոսնցուցած՝ անկողնին վրայ
դրինք : Բոլոր բնտանիքը հասաւ : Երեսին վրայ ջուր սրսկեցին,
կոչեցին զինքը իրեն սիրելի եղած ամէն անոններով, բայց միայն
իմ ձայնս լսելով կենդանութիւն առաւ :

« Ա տեսնես, ըստ բարեկամն, կ'ապրի, հարուածը տուած է,
աւելի երկար մնաս բարեները աւելի սոսկալի պիտի ըլլան » :
Խեղջ աղջկան երկու սառած ձեռքերը վզէս քակեց, և տունէն
դուրս քաշեց զիս : Ժամ մը ետքը մութին և լուսթեան մէջ
չուովմայ ճամբան կ'երթայինք :

Ղ

Կրացիելայի դրած նամակիս մէջ շատ հասցէներ թողած էի:
Անորմէ առաջին նամակը Սիլանի մէջ ընդունեցայ : Կ'ըսէր ինձ
թէ մարմնով աղէկ էր բայց սրտով հիւանդ, սակայն իմ խոստ-
մանս կ'հաւատար և վստահութեամբ նոյեմբերի մօտ կ'սպասէր
ինձ :

Իխօն հասնելով աւելի յայտնի և աւելի վստահելի զիր մը
տուի : Կամակին մէջ կարմիր շահողբամի քանի մը տերեներ կաս-
յին որոնք տանիքին ցած պատին վրայ հողէ ամանին մէջ կը
բռուսնէին, և որոնցմէ ամէն կիրակի ծաղիկ մը մատերուն մէջ կը
գնէր : Արդեօք իրեն վերաբերած բան մը դրկելու համար էր,
կամ նշանակի մը տակ ծպտեալ փափուկ յանդիմանտութիւնով մը
կ'ուզէր յիշեցնելով որ ինձի համար իր մագերը զոհած էր :

Կ'ըսէր որ տեսակ ունեցած էր . թէ սիրու կ'ցաւէր, բայց օր
ըստ օրէ կ'աղէկնար, թէ օդափոխութեան և կատարելապէս ա-
ռողջանալու համար իր մօրեղբօր աղջկան Զեքօյի մէկ քրօջ տու-
նը դրիած էին զինք Պամբօ առողջ և բարձր բլրան վրայ որ
նախովիկ կ'աթիք :

Ետքը երեք ամիսէն աւելի առանց նամակ ընդունելու անցան:
Ամէն օր Կրացիելայի վրայ կ'մոածէի: Հետեւալ ձմեռուան միկարը
Խտալիա պիտի վերադարձայի : Խր տրտում և զեղցիկ կերպաւ-
րանքը միշտ կ'երեւէր ինձ զդշումով և երեմն քաղցր յանդիմա-
նութեամբ : Այն ապերախս տարիքին մէջ էի որ թեթեւթիւնը
և նմանողութիւնը երխասարդի մը իր լաւագոյն զգացումները
դէշ ամօթի կ'զարձնեն . անգութ տարիք, որու մէջ Աստուծոյ
ամնէ զեղցիկ պարզ եները, անարատ սէրը և պարզ բարեկա-
մութիւնները աւաղի վրայ կ'իյնան . և գեռ ծաղիկ՝ աշխարհիս հո-
վին կ'անհետին : Բարեկամայս չար և հեղնական հապատութիւ-
նը շատ անդամ սրտիս մէջ կ'վիճէին պահուած և կենդանի սի-
րոյս հետ : Պիտի չհամարձակէի խոստուանիլ առանց կարմրելու
և անոնց հեղնութեանց ենթարկելու ինչ որ էին իմ փափաքնե-
րու և տրտութեամյս առարկային անոնցը և վիճակը : Կրացիել-
լա կենացս մէջ մուցուած չէր այլ քօղարկուած : Այս ոէրը,
որ սիրոս կ'հմայէր, մարդկային պատիւս կ'խոնարհեցնէր : Իր
յիշատակը՝ որ առանձնութեանս մէջ կ'սնուցանէր զիս, մարդ-
կան մէջ դրեթէ ապաշաւի պէս կ'տանջէր զիս : Ո՛քչափ կը
զդշամ այսօր այն ատենը ամշնալուս համար, և այն անարատ ա-
շերուն ուրախութեան մէկ հասաղայթը կամ արտաստաց մէկ կա-
թիւլը միայն ո՛քչափ աւելի կ'արծէին բոլոր այն կանանց նայ-
ուածքներէ, հրամայրներէ և ծիծաղներէ որոնց համար պատ-
րաստ էի անոր կերպարանքը զոհել : Ա՛հ, երխասարդ մարդը
սիրելու անկարող է : Ոչ մէկ բանի արժեքը զիսէ : Ճշմարիտ եր-
ջանկութիւնը կորմնցնելէ ետքը միայն կ'ձանչնայ : Անտառին նոր
ծլած տունիերու մէջ աւելի սողացող հիւթ և շարժուն ստուեր
կայ, բայց կաղնիին ծեր սրախն մէջ աւելի զօրութիւն :

Ճշմարիտ սէրը հասուն կենաց պտուղն է : Տամնըութ տար-
տուան մէջ չենք ճանչնար զայն այլ կ'երեւակայենք : Բուսական
բնութեան մէջ երբ պտուղը հասնի տերեները կ'իյնան, գուցէ
մարդկային բնութեան մէջ ալ նոյնն է : Ըստ անդամ մոածեցի
զայս այն տաննէ ՚ի վեր՝ որ դլիմս վրայ սպիտակ մաղեր կ'հաշ-
ուեմ : Յանդիմանեցի ինքնինքս այն սիրոյ ծաղկին արժեքը չդիմ-

նուլուս համար : Անայնութիւն է ի միայն : Անայնութիւնը մուլութեանց ամենէ անմիտը և ամենէ անդութն է , վասն զի ջշմարիտ երջանկութեան վրայ կ'զջացնէ :

ԼԵ

Նոյեմբերի առջի օրերուն դիշեր մը , պարահանգեսէ դարձած ասենս տոմսակ մը և ծրար մը տուին ինձ զորս Կաքոլիէ համբորդ մը բերած էր Կամակատունէն , Մաքօնի մէջ ձիերը փոխելու ատեն : Անձանօթ համբորդը կ'ըսէր ինձ թէ ինձի համար նշանաւոր պաշտօն մը ունենալուն համար , զոր իր բարեկամներէ մէկը Կաքոլիյ դորդատան վերատեսուչը յանձնած էր , անցած ատեն իր յանձնաբարութիւնը կ'կատարէր . բայց բերած լուրերը տիսուր և սգալի ըլլալուն համար չէր խնդրեր զիս տեսնել . կ'աղաչէր միայն ծրարը Բարիդի մէջ ընդունիլ :

Գողալով ծրարը բացի : Առաջին պահարանին մէջ Կաքոլիւլոյէ վերջին նամակ մը կար որ միայն այս խօսքերը կ'պարունակէր : « Քմիշկը կ'ըսէ որ երեք օրէ առաջ սիստի մեռնիմ : Կ'ուղիմ քեզ վերջին մաս բարես ըսել ոյժս կորսնցնելէ առաջ : Ո՛չ , եթէ հօս ըլլայիր , պիտի ապրէի անշուշտ : Բայց Աստուծոյ կամքն այս է : Քիչ ատենէ և ընդ միշտ երկնքի բարձրէն քեզի հետ պիտի խօսիմ : Սիրէ հողիս : Բոլոր կենացդ մէջ հետք պիտի ըլլայ : Գիշեր մը քեզի համար կորած մազերս քեզ կ'թաղում : Աստուծոյ նուիրէ զաննիք քաղքիտ մատուոի մը մէջ , որպէս զի ինձի վերաբերած բան մը միշտ քովդ ըլլայ » :

ԼՈ

Կամակը ձեռքերուս մէջ մինչեւ առառ անշարժ մնացի : Այն ատեն միայն երկրորդ սրահանը բանալու կարողութիւնը ունեւ

յայ : Բոլոր իր գեղեցիկ մաշերը մէջն էին ինչպէս ուրիշնիքին մէջ այն դիշերը ցոցած էր ինձ : Գեր քանի մը նոյն դիշերուանի թութիւնը չորսի չորս աւերեներով խառնուած էին : Կատարեցի ինչ որ իր վերջին կակըին մէջ հրամայած էր ինձ : Այն օրէ ՚ի վեր իր մահուան շուքը կերպարանքիս և երիտասարդութեանս վրայ

տարածեցաւ :

Տամներկու տարի ետքը Կաքոլի վերադարձայ : Իր հետքերը վինտուեցի : Բան մը մնացած չէր ոչ Սալմելինայի և ոչ Բրոսիւտայի մէջ : Աղջւոյն ժայռին վրայի տունը աւերակ էր : Առաստաղի մը տակ մոխրագոյն քարերու կոյտ մը մնացած էր միայն , որու մէջ այծարանները անձրեւ ատեն իրենց այծերը կ'ապաստանէին : Ժամանակը երկրիս վրայ շուտ կ'աւերէ ամէն բան , բայց երբէք չկրնար անհետել սրտի մէջէ առաջնելու համար այն Կաքոլիւլու սիրոյ Ճառապայթներէ լուսաւորուեցաւ : Աւրիշ հողին ինձ բացուեցան կանանց սրտի մէջ յայտնելու համար այն վեղեցիւթեան , սրբութեան և անարատութեան ամենածածուկ գեղեցիւթեան , սրբութեան և բարձրագույն շատ համար այն վեղիկ հասկցնելու , նախզգացնելու և բաղձացնելու համար : Բյաց վիճակը հասկցնելու , նախզգացնելու և բաղձացնելու համար : Բյաց ոչ ինչ քու առաջին երկոյթի նուեմացոց սրտիս մէջ : Ո՛բափ ոչ ինչ քու առաջին մոտածմունքով քեզ մօտեցայ : Քու յիշատակէ կ'ունանի հօրդ Կամակին այն ջաշին զոր հեռաւորութիւնը շողիէ կ'աղատէ և որչափ մեզմէ հեռանայ այնչափ աւելի կ'փայլի : Զիեւուեմ թէ մաշկանացու մարմինն ուր կ'հանդչէ , ոչ ալ թէ մէկը կ'ուղայ քեզ քաղաքիտ մէջ . բայց Ճշմարիտ զերեզմանդ հոգւոյս կ'ուղայ քեզ քաղաքիտ մէջ . բայց Ճշմարիտ զերեզմանդ հոգւոյս կ'արտասանէ զան : Եւ միշտ սրտիս խորը արտօսր մը լեզուն որ կ'արտասանէ զան : Եւ միշտ սրտիս խորը արտօսր մը կ'արտասանէ զան : Կաթիւլ առ կաթիւլ կ'բղիս և զարդնապէս յիշատակէ զարդնապէս լուսաւորութեան համար կ'հոսի :

Խեթ Կրաց Կրացիւլու : Ջատ օրեր անցան այն օրերէ ՚ի վեր : Սիրեցի և սիրուեցայ : Իմ տիսուր Ճամբաս աւրիշ շատ գեղեցիւթեան և սիրոյ Ճառապայթներէ լուսաւորուեցաւ : Աւրիշ հողին ինձ բացուեցան կանանց սրտի մէջ յայտնելու համար այն վեղեցիւթեան , սրբութեան և անարատութեան ամենածածուկ գեղեցիւթեան , սրբութեան և բարձրագույն շատ համար այն վեղիկ հասկցնելու , նախզգացնելու և բաղձացնելու համար : Բյաց վիճակը հասկցնելու , նախզգացնելու և բաղձացնելու համար : Բյաց ոչ ինչ քու առաջին երկոյթի նուեմացոց սրտիս մէջ : Ո՛բափ ոչ ինչ քու առաջին մոտածմունքով քեզ մօտեցայ : Քու յիշատակէ կ'ունանի հօրդ Կամակին այն ջաշին զոր հեռաւորութիւնը շողիէ կ'աղատէ և որչափ մեզմէ հեռանայ այնչափ աւելի կ'փայլի : Զիեւուեմ թէ մաշկանացու մարմինն ուր կ'հանդչէ , ոչ ալ թէ մէկը կ'ուղայ քեզ քաղաքիտ մէջ . բայց Ճշմարիտ զերեզմանդ հոգւոյս կ'արտասանէ զան : Եւ միշտ սրտիս խորը արտօսր մը լեզուն որ կ'արտասանէ զան : Եւ միշտ սրտիս խորը արտօսր մը կ'արտասանէ զան : Կաթիւլ առ կաթիւլ կ'բղիս և զարդնապէս յիշատակէ զարդնապէս լուսաւորութեան համար կ'հոսի :

Ա

1830ին օր մը , իրիկունը բարիղի մէկ եկեղեցին մտնելով ,
ճերմակ սաւանով ծածկուած դեռահաս աղջկան մը գագալը բերելինին տեսայ : Այս դադալը Կրացիելլան յիշեցուց ինձ : Սիւնի մը շոքին ետեղ պահուեցայ , բրոսիտայի վրայ մտածեցի և երակ ատեն լացի :

Արաստքս չորցան , բայց այն ամպերը՝ որ թաղման տրտմութեան մէջ մոքես անցած էին , չանչետացան : Նոիկ սենեակս դարձայ : Յիշեցի այս երկար զրութեանս բոլոր գէպերը , և լալով ու մէկ շնչով զբեցի Առաջին շնչուած վերնագրով ոտանառորը : Քանին տարուան տկարացած զղացումի մը եղանակն է որ սրտիս առաջին աղըները ցայտեցուց . բայց կ'տեսնուի դեռ մտերիմ թելի մը շարժումը որ վիրաւորուած է և երբէք կատարելապէս առողջանալիք չունի :

Ահաւասիկ այն տուները , վէրքի մը բոյժը , սրտի մը ցօղը , և դամբանական ծաղկի մը հոսք : Միայն Կրացիելլայի անունը կ'պակսի անոնց մէջ : Կ'դնէի զայն ոտանառի մը մէջ եթէ երկրիս վրայ գմնուէր բաւական անարատ բիւրեղ մը այն արցոնքը , այն յիշատակը , այն անունը ամիտիելու համար :

ԱՌԱՋԻՆ ԶՂՋՈՒՄ

Հնչուն յեղերս ուր Սօրբէնթեան բուռն կոհակք
հարնջենոյն ոսից ներքե կը մղուին ,
Հոն , Ճամբուն մօտ և քաղցրաբոյր ցանկին ասկ
Կը հանդպի փոքրիկ վէմ մը օտարին
Անմտապիր մէկ հայուածքին :

Հոն շահողամի տերևոց տակ կը պահէ
Անուն մը միայն , զոր արձագանդ կրինած չէ :
Սակայն անցորդն երբեմն հոն կայ առնելով
Տարիքն կարւայ տերեկն մէկդի կորցելով ,
Եւ երբ զդայ արտասուելո՞ն աշերո՞ւ
« Տամն վեց տարուան , կ'ըսէ , կանուխ մեռնելու » :

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն .
Թողուանք հեծեն հով և ալիք կապտագոյն :
Դարձիք , գարձիք ու իմ արխուոր մտածումներ ,
Զեմ ուղեր լալ , այլ երազել :

« Տամն վեց տարուան » , կ'ըսէ : Այս , տասնըվեցն
Երբէք ուրիշ Ճակտի սյսչափ չ'փայլեց .
Երբէք կիզող այս եղերքին Ճառագայթ
Գեղեցկարւոյն յաչս ցոլացած չէ մինչ ցարդ :
Ես միայն զան ես կը տեսնեմ կենզանի
Հոգւոյս մէջ , ուր բան մը բնաւ չ'անչետի .
Հոգւոյս մէջ , ուր միտքս զայն անմահ է մողած
Կման ժաման , ուր իր աշերն ինձ յարած
Ծովուն վըրայ իր զրոյշներն կ'երկարէր ,
Թողուով վարսերն հովուն որ զայն տարածէր ,
Եւ շրջելով քողին ստուեր իր այտին
Մտիկ կ'ընէր գիշերուան երգն ձկնորսին :
Քաղցըր հովուն զովութիւնը կը շնչէր ,
Եւ ծիծաղկոս երկնից լուսինն ինձ ցուցնէր ,
Գիշերային ծաղկի նման , որու վրայ
Ցողն արծաթեայ և արշալցոյն կը ցոլայ :
Եւ կ'ըսէր ինձ . « Ինչո՞ւ օդին , սրաիս մէջ
Լի հաճութեամբ փայլի ամէն ինչ այսպէս :
Երբէք կապցայ լուսատարած այս վայրեր ,
Եւ ոսկեղոյն աւազներու այս եղբեր ,
Ուր կոհակներ ծովու խորէ կը մղուին
Հոն մեռնելո՞ւ , և ցան և ցիր կը փշրին .
Երբէք լերանց այս երկնաբերձ զագալներ ,
Եւ այս ծոցերն՝ զորս պըսակին անտառներ :

Էղյամերն , երդերն եզերյ վըրայ և ալեայ
Զղայութեանցս հրապարն այսափ չեն շարժած :
Այս դիշերուան պէս միտքն երբէք խորհած չէ ,
Արդեօք սրափն մէջ նոր մասու մի ծաղած է :
Առանց ինձի , ըսկ , զիշերք ձեր քաղլքին
Մեր զիշերուան զեղեցկութեան նմանին » :
Ետքը մեր քով նստած իր մայրն կը զիտէր :
Ճական անոր ծնկան վըրայ կը ննջէր :

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն .
Թողունք հեծեն հով և ալիք կապտաղյն :
Դարձիք , գարձիք ո՛ իր արխուր մտածումներ ,
Զեմ ուզեր լալ , այլ երազել :

Աչերն , շուրթերն ո՛րչափ անբիծ սուրբ էին ,
Ո՛րչափ երկինք լուսաւորէր իր հոդին :
Գեղեցկափայլ նեմի լիճն , զոր մի հով
Զը խոռովէր և է յաւերժ անվագով ,
Թափանցկութիւն , յստակութիւն կատարեալ ,
Զունի երբէք որչափ ունին իրենց փայլ :
Իրմէ յառաջ հոգւոյն մտածմունք տեսնուէր :
Արտևանունք՝ որ կը պաշեն իր աչեր ,
Զեն քողարկեր անմեղութեամբ լի նայուածքն .
Հոդ մը ճակտին վըրայ կնճիռ չէ թողած :
Խոնդուր ամէն կողմ : Այն ծիծաղն շրթանց վըրայ ,
Որ ետք բերնին վըրայ տրտութեամբ վերջանայ ,
Իր կիսաբաց շրթանց վըրայ միշտ ծփար ,
Ծիծածանի նըման օրուան մի սպածառ :
Այս զրաւիչ գէմքն ստուեր մի չէր քողարկեր ,
Այս ճառապայթն ամպի մէջէ անցած չէր :
Իր անորոշ աստանուտ քայլն կը ծփար ,
Ինչովէս կոհակ մ'ուր լոյսն ծփայ մնդաղար :
Կամ վազելու համար վազէր , և իր ձայնն ,
Իր մանկային մաքուր հոգւոյն արձագանդն
Այն սուրբ հոգւոյն բիւր գաշնակներն նուազէր ,
Որով իրեն լըսու օդն իսկ կը հրձուէր :

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն .
Թողունք հեծեն հով և ալիք կապտաղյն :
Դարձիք , գարձիք ո՛ իմ արխուր մտածումներ ,
Զեմ ուզեր լալ , այլ երազել :

Իր սրտին մէջ նախ զբոշմեցաւ իմ երես ,
Նըման լոյսին առտու բայցող աչքին մէջ :
Այն օրէ վեր ալ չզիտեց ուրիշ բան ,
Իր սիրելէ վերջ տիեզերք սէր եղան :
Զիս իր կենաց հետ շփոթուն կը խառնէր ,
Եւ կը տեսնէր հոգւոյս ամէն խորհուրդներ .
Եւ մասնակից կ'ըլայի ես իր աչքին
Առջե ծփող հըրապուրիչ աշխարհին ,
Երջանկութեան երկրիս , երինից ալ յուսոյ .
Ա՛լ ժամանակ և անջրապես են անդոյ :
Իր անմեղ միտքն աստոնց վըրայ չէր խորհեր .
Ժամը միայն իրեն կեանքը կ'սպառէր :
Ինձմէ առաջ անշիշասակ էր կեանքը ,
Բայց ինձմէ վերջ այս օրերէ զիշեր մը
Կազմէր անոր և իմ բոլոր ապագան :
Կը վստաշէր այն քաղցրաբայր բնութեան՝
Որ մեզ ժպտէր , և այն մաքուր աղօթքին՝
Զոր իր ծաղկամբ կ'երթար սիրած խորանին
Կուրիելու , ո՛չ արտասօր այլ ժպտուն
Ուրախութեամբ և հաջութեամբ իր հոգւոյն :
Եւ զիս մանկան ոկտ կը քաշէր տաճարին
Սանդուղներան , հնազանդէի իր ձեռքին ,
Մինչդեռ իր ձայնն մերմիկ կ'ըսէր . « Ազօթէ ,
Առանց քեզի չիսաեմ երկինք իսկ ի՞նչ է » :

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն .
Թողունք հեծեն հով և ալիք կապտաղյն :
Դարձիք , գարձիք ո՛ իմ արխուր մտածումներ ,
Զեմ ուզեր լալ , այլ երազել :

Աւազանի մէջ մաքուր ջուրն աղբիւրի

Տեսէք ի՞նչպէս լըջի մը պէս բոլորշի
Կապոյտ, յստակ յանձնուի շրջան կ'ամփափի,
Պատսպարտած վրդովոմէն փոթորկի,
Նոյն արևու ձառաղայթէն, որ կրնայ
Զայն չորցնել աւազանին իսկ վրայ:
Սպիտակ կարապ մը ջուրին մէջ լողալով
Վիզը մէջը, որ կը պատի կնճիռով,
Կը զարդարէ ջրէ հայելին անսսեմ.
Բայց թէ իր թռիչքն ուղղէ ուրիշ աղքերց գէմ,
Խոնան թեռլք զարնէ ալիքն երերուն՝
Երկինք անչետ կ'ըլլայ ջուրին մէջ իսկոյն:
Փետուրքն ինկած մթազութիւն տան ջուրին,
Երբը թէ անդզն իր տեսակին թշնամին
Ալիքներու վրայ սփոսած էր իր մահը:
Եւ հրաշալի լըջին պայծառ կապոյաը
Մութ կոհակ մ'է, զոր կը ծածկէ աւազը:

Երբ մեխեցայ՝ այսպէս ամէն ի՞նչ դողաց,
Իր հոգւոյն մէջ, և հոգեվար սրախն կայծ
Ճառագայթին մարելէ ետք սրբացան.
Գէպ ՚ի երկինք, չգառնալու ալ բընաւ:
2էր սպասեր իր անցեալին գարձերուն,
Տարակոյսէ ՚ի յոյս չ'ոնէր վարանում,
Տանջանքի հետ չ'կոտեցաւ իր կեանքը,
Եւ մէկ շնչով քամեց վշտի բաժակը,
Եւ ընկլիմեց նախին արցունքն իր հողին:
Նըման իրմէ նուազ սիրուն թուջունին,
Որ զիշերը վիզը թեկն ասկ դըրած
Կ'ուզէ նախէլ մունջ վիճակի մէջ ինկած,
Այսպէս յուսոյ կորուս իր սիրունը լած
Ննջեց ախոսու, բոյց զիշերէն շատ առաջ:

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն,
Թողունք հեծեն հով և ալիք կապտագոյն:
Դարձիք, դարձիք ո՛ իմ արխուր մատածումներ,
Զեմ ուղեր լալ, այլ երազել:

Տամն հինակ տարի հով անկողնին մէջ ննջեց:
Աչ ոք շիրմին վըրայ արցունք մի հոսեց:
Մոռացութիւնն, մեռելոյ երկրորդ գաղաղն
Անոր տանող ձամբան դոյն անդանդաղ:
Այն կորսուած քարին վըրայ մարդ չերթար
Եւ չ'աղօթեր, չմտածեր վշտահար
Բայց իմ մոքէս, երբ անցեալըս յիշելով
Ճարցնեմ սրախն, օրեւս սահով հասցէպով:
Եւ երբ աչերս յիշատակացըս յարած՝
Որպամ երկնիս մէջ իմ ասաղերս մարած:
Նա առաջինն եղաւ, և իր քակըր լոյն
Բարեպաշտ կայծ մի կ'արձակէ իր հոգւոյս:

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն.
Թողունք հեծեն հով և ալիք կապտագոյն:
Դարձիք, դարձիք ո՛ իմ արխուր մատածումներ,
Զեմ ուղեր լալ, այլ երազել:

Սոսկ յիշատակն, զոր բնութիւնն է տուած,
Փըշտ տոնկ մ'է զունատ տըկար ու կանաչ,
Մերթ հողմահար, մերթ արեէն այրեցած
Զղջումի պէս իր սրախն մէջ է բունած:
Բուսնի ժայուին մէջ ստուեր իսկ չտալով:
Իր տերեներ սպասին ձամբուն փոշով:
Սողայ երկրի մօտ, տը ծուած իր ձիւղեր
Կը կոտրուն միշտ այցերու ակուներ:
Իսկ զարնայնի, ծաղիկ մը ձեւան հատի պէս
Իր շիրմին վըրայ մէկ երկու օր կը տեսնես.
Բայց իր հոտը բուրելէ շատ իսկ առաջ
Հովին համնելով զայն կը ձգէ մարշամած.
Ինչպէս իսկ կեանքն որ ստուերի պէս մարի,
Երջանկութիւնն գեռ անձանօթ իր սրաի:
Զգայնութեան և փափկութեան մի թուշնիկ
Ծըռուլ ճիւղին վըրայ ձգէ դայլայլիկ
«Ծաղիկ, ըսէ, որ կեանքն քեզ շուտ թարշամեց,
Զիսց երկիր մ'որ վերածնին ամէն ինչ»:

Ո՞՛չ, յիշեցէք, անցեալ ժամերն մի՛ մոռնաք .
Հառաշելու կ'օգնեն ինձ ձեր յիշատակք :
Գայցէք, հոգւոյս հետ մըտածմոնք իմ մըռայլ,
Սիրտըս փղձկուն է, կ'ուզեմ լալ :

Այսպէս դրի առնուած արցունքներով կ'զղջայի տամնը ուժ
տարեկան սրտիս խստութեան և ապերախտութեան վրայ : Երբէք
վերստին կարող չեմ կարդալ այս ոտանառը, առանց ինքովի՞նքս
ասելու և առանց սպաշտելու այն թարմ կերպարանքը՝ զոր յաւ
տիտեանս պիտի յիշեցնեն ինձ հարօլիոյ թափանցիկ և տիրապին
ալիքները : Բայց հոգիները կ'ներեն երկնից մէջ: Գուք
ալ ներեցէք ինձ . . . : Ացի:



Դ ա հ ե լ ո ւ	Դ ա հ ե լ ո ւ		
Ա գ ա շ ն . կ ա ս տ ա կ ե ր դ ու թ ի ւ ն	6	Ե ղ ձ զ ր ա ր տ ու թ ե մ ն	
Ա զ ն է ս	7	Ե ր ե ք հ ր ա ց ա ն ա կ ի ր ք . 3 հ ա ս ո ր	45
Ա կ ա մ ա յ ք մ ի շ կ լ	4	Ե ր կ ա ս ի ր ու թ ի ւ ն կ բ ե ր կ ո ւ ց ը ն -	
Ա ղ օ թ ա ղ ի ր ք . Հ ա ս ա ր ա կ կ ա զ լ ո ւ	7	կ ե ր ա կ ց ա ց	6
Կ ի ս ա կ ա շ ի լ	9	Ե ր կ ր ա բ ա ն ու թ ի ւ ն	
Ո ս կ ե ղ օ ծ	20	Է լ ի զ ա	32
« թ ա ւ շ ա պ ա ս տ	30	Է լ մ է վ լ ի ս ա վ թ ա լ ի ն տ ո ւ ա լ է ր	
« » ա ր ա		Է ն դ հ ա ն ու ր կ ի ա ն ո ւ ն կ պ Ս . Մ ե ր ո ւ զ -	
Ճ ա թ ա զ օ ծ ե ա լ և ո ս կ ե ղ օ ծ		ե ա ն վ ա ր ճ ա ր ա ն ի ս Զ մ ի ւ ն ի յ յ	
Ճ ե ա լ շ ր ջ ա ն ա կ ա ք	50	Է ն թ ե ր ց ա ր ա ն . Բ ա խ ա կ ա ք	8
Փ ղ ո ւ կ ր ե ա յ	115	Է ն թ ե ր ց ա ր ա ն Ս . Յ . Պ ա լ ա -	
Ա մ օ ր ի	20	ս պ ա ն ե ա ն ի ս	
Ա յ բ բ ե ն ա ր ա ն . Կ ա խ ա կ ա ք	4 1/2	Թ շ ո ւ ա ռ ք . 10 հ ա ս ո ր	180
Ա յ ս տ . ո լ ր ե ր դ ու թ ի ւ ն	4	Թ ո ւ ա ր ա ն ու թ ի ւ ն	
Ա ն դ է ղ ա ք ա մ ձ ի օ լ ի	4 1/2	Ժ է ն ը լ ի է լ . Բ ա խ ա կ ա ք	7
Ա ն ձ է լ օ . թ ա ս տ ե ր դ ու թ ի ւ ն	5	Ժ օ լ է ֆ Պ ա լ ս ա մ օ . 8 հ ա ս ո ր	92
Ա պ ա ս տ ա ն ա ր ա ն ս ի ր ո յ Մ է -		Ի վ ա ն ո է . մ ա մ լ ո յ տ ա լ ի	
գ ա ս տ ա ս ե ա յ	2	Ի ր ա ւ ո ւ ն կ ա ք . լ ր ա զ ի ր	69
Ա պ ա շ ո յ ց Հ ա յ ո յ Ա ս տ ո ւ ա ծ -		Լ է օ կ ա մ Ա փ ի օ ն ծ խ ո ղ ի մ ը ս է ր ը	8
պ ա շ տ ո ւ թ ե ա ն ա ռ ա լ շ ն ու թ ե ա ն ի ր		Լ ո ւ ի Ժ է	11 1/2
Ա ռ ո լ ջ ա ր ա ն ու թ ի ւ ն		Լ ո ւ ա ր ա ն ու թ ի ւ ն	
Ա ռ ու պ ա ր ո ն Պ լ լ շ Ս ա ր դ ի ս		Լ ո ւ ր է ց ի ս ա Պ օ ր ձ ի ս	6
Ա ս տ զ ա ր ա մ ն ու թ ի ւ ն		Լ ո թ օ Գ ր ա լ ի ր ն օ	
Ա ր ե լ ե ա ն ն Մ ա մ ն ա լ . 2 տ ա -		Խ թ ա ն ը ն դ գ է մ ա բ ա ց ո ղ ա ց	
բ ու ա ն	184	Ծ ա լ ի կ . 3 հ ա ս ո ր	300
Ա ր կ ա ծ ք Ս ր ս ր ա յ Հ ա յ ո ւ Հ ո յ ն .	4 1/2	Կ ա ն ն ս ա ղ ի ր Ս . Ս ե ն ս ր ո ւ զ ե ա ն ս	
Ա ր ի ի Ա ր ա ր ա տ ե ա ն ս	26	վ ա ր ճ ա ր ա ն ի ն ո ր ՚ի Զ մ ի ւ ն ի ս ա	
Բ ու ս ա բ ա ն ու թ ի ւ ն		Կ ա ս ա կ ե ր դ ու թ ի ւ ն ս խ ա լ ա ն ա ց	
Գ ա ղ ո ւ ն ք ա ր ի լ ի ս ա ս ա ն ս		Կ ե ն դ գ ա ն ա ր ա ն ու թ ի ւ ն	
Գ ա ղ ո ւ ն ք ա ր ի լ ի ս ա ս ա ն ս		Կ ի ւ լ ի ւ լ ի ր հ ա ն ր ո ր դ ու թ ի ւ ն կ ը	24
Գ ի լ ի ք խ օ ս ա կ յ ո ւ թ ե ա ն ն Տ ա -		Կ ի ւ ն ա հ ը ե ա ր ը ն Տ օ ս թ ո ւ	
Ճ կ ե ր է ն և Ճ ա յ ե ր է ն	4	Կ ո մ ի ս տ ա ս ի ն ց ու յ ա կ ը	3
Դ ա տ ս ա կ է ր ը	5	Կ ր ա ց ի լ լ ա	10
Գ ի մ ա կ . հ մ ն դ է ս կ ի ս ա մ ն ե ա յ	30	Ճ ա զ ա ր ու մ է լ կ ի շ ե ր ն ե ր	
Ե լ ե կ տ ր ա բ ա ն ու թ ի ւ ն		Ճ ա յ 6 հ ա ս ո ր . Բ ա խ ա կ ա ք	90
Ե ղ լ է չ	8	Ճ ա յ ը ն թ ե ր ց ա ս ո ւ ն Զ մ ի ւ ն ի յ յ	

Հասկաբաղադրիկը, Բ տիպ	3	Շաթօպղիան
Հեղարան, Գ տիպ	2	Ումկը դրասիրութեան
Հեղումն կարծեայ, Բ տիպ	3	Պատիժ
Հռովմայ արարողութիւնք	2	Զերմաբանութիւն
Հռովմէական պարդե		Բափայէլ
Հրասէլասայ պասամնութիւնը		Սարֆը մշմառուհ ֆէննը տէ-
Հայնաբանութիւն		ֆաթիր, Ա և Գ հատոր
Հզողաբանութիւն		Բ ۳۰
Մագնիսաբանութիւն		Աէրլբժիշկէ, կատակերգութիւն 3
Մաթիլտ, Ա հատոր	80	Սիպէլ
Մանր ուսմունք Քրիստոնէ- ական հաւատոյ, Գ տիպ	4	Սօն Ապէնսէլումժըն սէր կիւս զէշի օլան վուգուաթ
Մանօն Լէսքո	12	Վալէրիան և Լը Պալապուլիէ
Մարդ	2 ^{1/2}	Վէրթէր
Մէսմէրաբանութիւն		Վիկթօրիա
Միլլէթինի մէլ		Տեղիկադիր տարեկան ընթացից թաղական խորհրդոյ Զմիւռն նիոյ, 1865
Միութիւն սահմանադրական . վեցամենայ շրջանը	26	Տեսարան հանդիսիցն Հայ- կայ, Արաւայ և Արայի
Միքրո-Մէջոս, Ժամո և Քօլէն, Ճերմակ ու Սև	5	Տէր իմ Յիսուս
Մուխթասար Քրիստոնէ-ա- կան վարդապետաւթիւն	3	Տունաբակալութիւն գործնական
Մուսայք սուբր Մեսրոպեան վարժարանին Զմիւռնիոյ		Տուալարըն վէ սուբր Հա- ղորդութիւնուն զայտէլէրի
Ա տետրակ	4	Տրամաբանութիւն
Բ ۳	Տօրա, սիրային վչալ մի	
Մտնոլորտաբանութիւն		Բուզնամէ 1864 տարւոյն
Մօնթէ-Քրիսթոյ կամս, 6		Բօլէնի խորհրդածութիւնք
Հատոր, Ա հասորը երկ- րորդ անդամ տպագրեալ	90	Փամէլայի առաքինութիւնք
Յայտաբարութիւն կամոնայ		Փայտեայ խաչը
Մեսրոպեան վարժարանի		Փոլին
Յաւերժմահարսն, Հանդէս կիսամենայ		Քանի մը խօսք մեր ազգին արդի վլճակին վերայ
Յորդոր մահուան դէմ		Քերականութիւն Հայերէն լեզուի
Նախախնամութեան գալսնիքը	2	Քիմիաբանութիւն
Նասարէստին խօճայի ծաղր- աբանութիւնք, Բ տիպ	2	Քսան տարի ետք, Ա հատոր
Նարեկ տարի	20	Քրիստոնէական վարդապետա- ութիւն, Գ տիպ
Նարեկ ոսկեզօծ	30	Օսմանեան պասամնութիւն
Նմանաբուժութիւն		Օրացոյց Տէտէեան
Նօդր-Տամֆարիզի, Յ հատոր 45		Օրիորդ լա Քէնդինի

9530

24584

24585

2013

